ԳԼՈԲՈՒՍ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

3

ԵՐԵՎԱՆ

2009

ԳԼՈԲՈՒՍ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թիվ 3, 2009

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
Սնակ Սարուխանյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գագիկ Հարությունյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇԱՐՎԱԾՔ
Տաթևիկ Քարաուղլանյան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սնակ Սարուխանյան
«ՆԱԲՈՒԿԿՈ» գազատարը և Հայաստանը 3

Կարեն Վերանյան
Միջազգային էներգետիկ գործակալություն.
«Կասպյան նավթի ու գազի զարգացման
հեռանկարները 2008թ.» զեկույցը 9

Արտակ Գրիգորյան
Իսրայել-Ադրբեջան
փոխհարաբերությունների շուրջ 21

Սերգեյ Մինասյան
Հայաստանի արտաքին և ներքին
քաղաքականության թուրքական վեկտորը 37

Սերգեյ Սարգսյան
Թուրքիա. պահանջված կլինի՞ արդյոք
զինվորական հեղաշրջումների փորձը 42

Արաքս Փաշայան
Իսլամական գործոնի ակտիվացում
Ադրբեջանում 50

Վահրամ Հովյան
Ջավախքը վրացական տեղեկատվության
լույսի ներքո 56

«ՆԱԲՈՒԿԿՈ» ԳԱԶԱՏԱՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Սնակ Սարուխանյան

«Նաբուկկո» գազատարը ամենահավակնոտ էներգետիկ նախագծերից է: Այն ենթադրում է խոշոր գազատար ցանցի կառուցում Կենտրոնական Ասիայից մինչև Իրան ու Ադրբեջան, որի միջոցով ԵՄ երկրներին կարող է մատակարարվել տարեկան մինչև 80 մլրդ մ^3 բնական գազ:

2009թ. ապրիլը և մայիսը բավական հարուստ էին իրադարձություններով՝ կապված նոր խոշոր էներգետիկ նախագծերի հետ: Ապրիլի 24-25-ին Սոֆիայում կայացած «Բնական գազը Եվրոպայի համար. անվտանգություն և գործընկերություն» գագաթաժողովը դրեց Եվրոպայի համար ռազմավարական համարվող «Նաբուկկո» գազատարի նախագծի իրականացման առաջին իրական հիմքերը: Իսկ մայիսի 8-ին Պրահայում, ԵՄ «Հարավային միջանցք. նոր մետաքսե ճանապարհ» գագաթաժողովում Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի և Եգիպտոսի ներկայացուցիչները ստորագրեցին համատեղ հռչակագիր «Նաբուկկո» գազատարի շինարարության վերաբերյալ:

Սույն հռչակագրի ստորագրումը Հայաստանի համար հետաքրքրություն է ներկայացնում մի քանի պատճառով:

Նախ՝ գազատարի նախագիծն իրականացվում է մեր տարածաշրջանում և կստեղծի նոր ենթակառուցվածքային առնչություններ դեպի եվրոպական շուկա կասպյան և իրանական գազի արտահանման համար:

Երկրորդ՝ գազատարն անմիջականորեն կապված է տարածաշրջանային քաղաքական հարաբերությունների հետ, որոնք, անկախ այն բանից՝ անցնո՞ւմ է գազատարը Հայաստանի տարածքով, թե՞ ոչ, շոշափում են մեր երկրի շահերը:

Երրորդ՝ հայ-թուրքական երկխոսության կարգավորման և Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցային գործընթացների ակտիվացման պայմաններում կարող է տպավորություն ստեղծվել, թե հնարավոր է, որ «Նաբուկկոն» անցնի Հայաստանի տարածքով:

Վերոնշյալ բոլոր խնդիրների, այդ թվում և Հայաստանի համար ամենակարևոր՝ վերջին խնդրի դիտարկման համար անհրաժեշտ է անդրադառնալ «Նաբուկկո» գազատարի էությանը, ինչպես նաև Պրահայում ստորագրված հռչակագրի ստորագրմանը:

«Նաբուկկոյի» որոշակիությունն ու անորոշությունը

Մի բանում «Նաբուկկոն» միանշանակորեն որոշակի է, և դա այն է, որ նախագիծն ուղղված է Ռուսաստանի՝ որպես Եվրոպային հիմնական բնական գազի մատակարարի, դերի նվազմանը: Սա է, կարելի է ասել, նախագծի հիմնական և գրեթե միակ նպատակը:

Գազատարի անցկացման՝ 2003-ին ծագած գաղափարը սերտորեն կապված էր էներգափոխադրումների երկու այլ խոշոր նախագծերի՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Հարավկովկասյան գազատարի (Բաքու-Թբիլիսի-Էրզրում) իրականացման տրամաբանության ու ոգու հետ: Այս երկու նախագծերը կոչված էին Ռուսաստանի տարածքը շրջանցող այլընտրանքային երթուղի ստեղծել կասպյան նավթը և գազը համաշխարհային շուկա ուղղելու համար: Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ նոր խողովակաշարերը ոչ մի կերպ չէին կարող և չեն կարող ազդել միջազգային էներգետիկ հաշվեկշռի վրա, դրանք որևէ կերպ չեն ենթադրում նավթի և գազի արդյունահանման կամ արտահանման ծավալների աճ: Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը և Հարավկովկասյան գազատարը ստեղծված են բացառապես ածխաջրածինների մատակարարման ուղիների դիվերսիֆիկացման նպատակով: Ադրբեջանական նավթը և կենտրոնասիական ածխաջրածինները հեշտությամբ էին հայտնվում և այսօր էլ կարող են հայտնվել սպառման համաշխարհային շուկաներում առանց նոր խողովակաշարերի, բայց Ռուսաստանի տարածքով, որի միջազգային և տարածաշրջանային ազդեցության նվազմանն էլ հենց պետք է հասնեին Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը և Հարավկովկասյան գազատարը: Այս տրամաբանությունը, մեկ առանձնահատկությամբ, դրված է նաև «Նաբուկկոյի» հիմքում: Իսկ «Նաբուկկոյի» այդ միակ առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն Հարավային Կովկասում կառուցված նոր խողովակաշարերի, այն դուրս է գալիս դեպի Իրանի նոր, խոշոր և չյուրացված գազահանքավայրեր: Բնական գազի պաշարներով աշխարհում 2-րդ տեղը գրավող Իրանն առայժմ զգալի ծավալով գազ չի արտահանում, իսկ Հայաստան և Թուրքիա ձգվող գազամուղները դեռ չեն ազդում ոչ համաշխարհային էներգետիկ հաշվեկշռի, ոչ ԵՄ էներգետիկ անվտանգության վրա:

Նման պայմաններում «Նաբուկկոն» կարող էր դառնալ իրական և նշանակալի նախագիծ, եթե գազատարում «հայտնվի» իրանական գազը: Բայց (և դա տարածաշրջանային բոլոր էներգետիկ նախագծերի հիմնական խնդիրն է) «Նաբուկկոն» ոչ միայն պարզապես էներգետիկ, այլ նաև քաղաքական նախագիծ է: Իսկ քաղաքական հարաբերությունների զարգացումը տարածաշրջանում, առճակատման խորացումը Իրանի և ԱՄՆ-ի հարաբերություններում հարկադրեցին արդեն 2004թ. բացառել Իրանը «Նաբուկկոյի» գերակայություններից: Արդյունքում՝ արդեն 2004-ին «Նաբուկկոն» նախագիծ էր, որը կողմնո-

որոշված էր բնական գազ ստանալու Ադրբեջանից, Կենտրոնական Ասիայից (այդ նպատակի համար պետք է կառուցվեր Անդրկասպյան գազամուղը), Եգիպտոսից և Իրաքից: 2005թ. արդեն Իրաքն է դուրս մնում նախագծից, քանի որ այդ երկրում ծայր առած քաղաքացիական պատերազմը ցույց տվեց երկրի՝ որպես երկարատև էներգետիկ գործընկերոջ, անհուսալիությունը: Հաջորդ երկու տարիներին նախագիծն ակտիվորեն քննարկում էին Կենտրոնական Ասիայում եվրոպական արտաքին քաղաքականության ակտիվացման համատեքստում: Թուրքմենբաշիի մահը և Թուրքմենստանի նոր ղեկավարի ընտրությունը հույս ստեղծեց, որ այդ երկիրը շուտով կարող է միանալ նախագծին: 2008-ին ակտիվացան Բաքվի և Աշգաբադի շփումները, Թուրքմենստանի նախագահն առաջին անգամ այցելեց Ադրբեջան: Դա, հավանաբար, պատրանքներ ծնեց, թե Անդրկասպյան գազատարի նախագիծը, առանց որի թուրքմենական գազը Ադրբեջանում և «Նաբուկկոյում» հայտնվել չի կարող, շուտով կիրականանա: Բայց հետագա իրողությունները ցույց տվեցին, որ ԵՄ-ը և ԱՄՆ-ը Կենտրոնական Ասիայի ուղղությամբ ճեղքման չեն հասնի:

Անցյալ տարի Իրանը կրկին «վերադարձավ «Նաբուկկո» ծրագիր: Բ.Օբամայի՝ ԱՄՆ նախագահ ընտրվելը և նրա հայտարարած՝ Թեհրանի հետ հարաբերությունների կարգավորման ուղեգիծը քաղաքական ազդանշան հանդիսացան այն բանի, որ Թեհրանի հետ կարելի է կրկին բանակցություններ սկսել «Նաբուկկոյի» վերաբերյալ: 2009թ. սկզբից Թուրքիան, հանձին վարչապետի, սկսեց ակտիվորեն լոբբավորել Իրանի միացումը «Նաբուկկոյին»: Ռ.Թ.Էրդողանը նույնիսկ Բրյուսելում հայտարարեց, թե առանց Իրանի գազամուղը որևէ իմաստ ունենալ չի կարող:

Եվ իսկապես, Իրանի միացումը նախագծին կարող է հիմք հանդիսանալ դրա իրագործման համար: Բայց «Նաբուկկոյի» շուրջ Թեհրանի հետ պաշտոնական մակարդակի բանակցություններ դեռ չեն սկսվել, և չի էլ կարելի պնդել, թե սկսվելով հանդերձ՝ դրանք կհանգեցնեն դրական և արագ արդյունքի: Իրանը շատ բարդ բանակցող է, և վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ այդ երկիրը ոչ մի հարցի շուրջ արագ որոշում կայացնելու մեջ աչքի չի ընկնում: Իրան-Հայաստան գազատարի շինարարության վերաբերյալ բանակցությունները տևեցին մոտ 8 տարի, իսկ Իրան-Պակիստան-Հնդկաստան գազատարի շուրջ բանակցությունները սկսվել են 1995-ին և առայժմ, բացի հռչակագրի ստորագրումից, ոչնչի չեն հանգեցրել: Իրանի նավթի նախարարի պաշտոնական հայտարարություններն այն մասին, թե երկիրը հետաքրքրված է «Նաբուկկոյով», իրական քաղաքականության հարթությունում ոչինչ չեն նշանակում: Հետաքրքիր ու ցայտուն օրինակ. մարտի սկզբին Իրանի նավթի նախարարը հայտարարեց, թե Իրանը պատրաստ է բանակցություններ սկսել «Նաբուկկոյին» միանալու շուրջ, իսկ մարտի վերջին նույն նախարարը հայտարա-

րեց, թե Իրանի համար ավելի առաջնահերթ է Իրան-Իրաք-Սիրիա գազատարի անցկացումը և Սիրիայում բնական գազի հեղուկացման գործարանների շինարարությունը, այն դեպքում, երբ «Նաբուկկոն» Իրանի համար առանձնապես կարևորություն չի ներկայացնում»:

Հռչակագիր շինարարության մասին

Վերադառնալով Պրահայում ստորագրված փաստաթղթին՝ կարող ենք արձանագրել, որ «Նաբուկկոյի» շինարարության մասին հռչակագրի տակ չկան ոչ Իրանի, ոչ Ղազախստանի, ոչ Թուրքմենստանի, ոչ Ուզբեկստանի ստորագրությունները: Հռչակագիրն ստորագրած գազարդյունահանող երկու պետություններ՝ Ադրբեջանը և Եգիպտոսը, էական դերակատարություն գազի համաշխարհային արդյունահանման գործում չունեն: Եվ ոչ միայն: Ադրբեջանի ստորագրությունը հռչակագրի տակ ևս մեկ կարևոր առանձնահատկություն ունի: Բանն այն է, որ Ադրբեջանից դեպի Թուրքիա արդեն կառուցված է Հարավկովկասյան գազատարը, որն ադրբեջանական գազը մինչև Թուրքիա է հասցնում առանց էական դժվարությունների: Տարեկան 25-30 մլրդ մ^3 թողունակություն ունենալով՝ Հարավկովկասյան գազատարն առանց որևէ խնդրի կկարողանա ադրբեջանական նավթը մղել Թուրքիա: Սրանից հետևում է, որ Ադրբեջանի ներկայացուցչի ստորագրությունը հռչակագրի տակ և «Նաբուկկոյին» Բաքվի միանալը կոնկրետ նոր ու էական ոչինչ ոչ նախագծին, ոչ էլ եվրոպական էներգետիկ անվտանգությանը չեն տա: Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ մի քանի եզրահանգում անենք.

- «Նաբուկկոն», ընդհանուր առմամբ, իր քաղաքական էությամբ հակառուսական նախագիծ է,
- նախագիծը բավական անորոշ է, վերջին տարիներին ամեն տեսակ փոփոխությունների է ենթարկվել և, հավանաբար, դեռ էլի կփոփոխվի,
- ընդհանուր առմամբ, «Նաբուկկո» նախագիծը ներկա փուլում հազիվ թե կարելի կլինի հաջող անվանել, իսկ ստորագրված հռչակագիրը էական ոչինչ չի փոխի համաշխարհային էներգետիկ անվտանգության մեջ:

Բայց միևնույն ժամանակ ակնհայտ է, որ առաջիկա տարիներին նախագծին Իրանի և Կենտրոնական Ասիայի երկրների միացման լոբբավորումն ավելի է ինտենսիվանում, ինչը, բնականաբար.

- առաջ կբերի Ռուսաստանի ուժգին դիմակայությունը,
- էական խթան կհանդիսանա տարածաշրջանի քաղաքական հարաբերությունների համար,
- կշարունակի ազդել նախագծի վրա, փոխել նրա ձևը՝ գուցե նրան մեծ կոնկրետություն հաղորդելով:

Հայկական հեռանկարներ

Վերոշարադրյալ գործոններն էլ հենց պետք է հիմք ընդունվեն «Նաբուկկոյին» Հայաստանի միանալու հեռանկարների քննարկման համար, իսկ դրանք հաշվի չառնելը չափից ավելի սուբյեկտիվ և իրականությունից կտրված է դարձնում գազատարի շինարարությանը մեր մասնակցության վերաբերյալ ամեն տեսակ կանխատեսում և նախագիծ: Եվ դա պակաս կարևոր չէ. չի կարելի գազատարին Հայաստանի միանալու խնդիրը ուղղակիորեն ու կոպիտ կերպով ածանցել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումից: Թուրքիայի հետ սահմանի բացումը, իսկապես, սերտորեն կապված է մեր երկրի էներգետիկական քաղաքականության ապագայի հետ: Թուրքիայի հետ միջպետական նորմալ հարաբերությունների հաստատումը դրական խթան կհանդիսանա Հայաստանի էներգետիկ սեկտորի զարգացման համար: Թուրքիա էլեկտրաէներգիայի արտահանման կարգավորումը Հայաստանում էներգիա արտադրող հզորությունների զարգացման խոշոր նախագծերի իրագործման անհրաժեշտ հիմք կստեղծի. նոր հզոր ԱԷԿ-ի կառուցում, Հրազդանի ջերմաէլեկտրակայանի 5-րդ բլոկի կառուցման ավարտ, Երևանի ջերմաէլեկտրակայանի արդիականացում, Իրան-Հայաստան գազատարի լիարժեք կիրառություն, ՀԷԿ-ի կառուցում և այլն: Բայց խոսել այն մասին, թե Հայաստանն ավտոմատ կերպով կներառվի «Նաբուկկո» նախագծում, ճիշտ չէ: Այդ նախագծին մասնակցության համար անհրաժեշտ է ուժերի հատուկ համախմբում, քանի որ զուտ աշխարհագրորեն Հայաստանն ամենահարմար երկիրը չէ Եվրոպա գազ արտահանելու համար: Սակայն քաղաքական ակտիվությունը և քաղաքական գործոնները, այնուամենայնիվ, կարող են խաղալ իրենց, այն էլ՝ կարևոր, դերը: Խոսքն այս դեպքում հայ-իրանական միջպետական համագործակցության և բնական գազի երթուղիների դիվերսիֆիկացման իրանական քաղաքականության մասին է: Չի բացառվում, որ հանգամանքների բերումով և Հայաստանի ակտիվ քաղաքականության շնորհիվ Իրան-Հայաստան գազատարը կարող է ընդլայնվել մինչև այն ծավալների չափով, որ հնարավոր լինի իրանական գազը Թուրքիա կամ էլ Վրաստան վերարտահանել՝ հետագայում դրա՝ «Նաբուկկոյում» հայտնվելու հեռանկարով: Կարող է թվալ, թե նման քաղաքականությունը կհակասի հայ-ռուսական ռազմավարական գործընկերության ոգուն, բայց միևնույն ժամանակ Ռուսաստանի համար, եթե Իրանն, իհարկե, որոշի միանալ «Նաբուկկոյին», կարևոր կլինի, որ իրանական գազի թեկուզև մի մասն արտահանվի հայկական գազատրանսպորտային համակարգի միջոցով, որը պատկանում է «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին: Էլ չենք խոսում այն մասին, որ հենց այս ընկերությունն է ապահովելու Իրան-Հայաստան գազատարի թողարկային կարողության ընդլայնումը, կառուցելու նոր խողովակաշարեր, որոնք այսպես թե այնպես գտնվելու են նրա հաշվեկշռում:

Մենք կարծում ենք, որ ներկա փուլում կարելի է խոսել և մտածել «Նաբուկկո» գազատարին Հայաստանի միանալու հեռանկարների մասին: Բնականաբար, հնարավորություն կա, որ միանալու հեռանկարը մեզ համար երբեք էլ իրական չդառնա, բայց ակտիվ քաղաքականությունը կարող է հանգեցնել դրական արդյունքների:

Հայաստանը հասել է էներգետիկ համակարգի կայունության բարձր մակարդակի, ինչն արդյունք է ինչպես կառավարության, այնպես էլ հանրապետության խոշորագույն էներգետիկ ընկերության՝ «Հայռուսգազարդի» իրական և երկարատև աշխատանքի: Այսօր հարկավոր է պահել այդ կայունությունը, ստեղծել օտարերկրյա ներդրումների հոսքի պայմաններ և, ինչը միանգամայն իրական է, մտածել հայկական ներդրումների մասին արտասահմանի էներգետիկ ակտիվներում: Միևնույն ժամանակ, այն պայմաններում, երբ Կենտրոնական Ասիայի երկրները զրկված են համաշխարհային շուկաների հետ ուղղակի էներգափոխադրումային կապերից, իսկ Իրանը հիմնականում փակ է մնում օտարերկրյա ներդրումների համար, այդ պետություններում էներգետիկ ակտիվների ձեռքբերումը ավելի շատ է հնարավոր, քան այն ժամանակ, երբ ամեն ինչ փոխվի: Իսկ Հայաստանը, մեր կարծիքով, դատապարտված է ձեռք բերելու նման ակտիվներ, քանի որ առանց դրանց հանրապետության էներգետիկ համակարգի երկարատև կայունությունը կարող է հայտնվել սպառնալիքի տակ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ[1]. «ԿԱՍՊՅԱՆ ՆԱՎԹԻ ՈՒ ԳԱԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 2008Թ.» ԶԵԿՈՒՅՑԸ

Կարեն Վերանյան

2008թ. դեկտեմբերին լույս տեսավ Միջազգային էներգետիկ գործակալության պատրաստած հերթական, սակայն ոչ ավանդական զեկույցը՝ նվիրված Կասպյան ավազանի նավթագազային ոլորտի վերջին զարգացումներին ու միտումներին: «Կասպյան նավթի ու գազի զարգացման հեռանկարները» խորագիրը կրող զեկույցը, որը նախաձեռնվել ու պատրաստվել է գործակալության ենթակայության տակ գործող «Գլոբալ էներգետիկ երկխոսություն» վարչության կողմից, ներառվում է գործակալության «աշխատանքային թղթեր» կոչվող ուսումնասիրությունների շարքում:

2007թ. Կասպյան ավազանի նավթարտահանման ծավալները և արդյունահանումը

Զեկույցի փորձագիտական գնահատականներով, Կասպյան նավթագազային ավազանը առաջիկա կես տասնամյակի կանխատեսումներով կշարունակի կարևորագույն նշանակություն ունենալ համաշխարհային նավթագազային մատակարարումների ցանցում:

Աղյուսակ 1-ում բերված են Կասպյան ավազանից 2007թ. նավթի արտահանման ցուցանիշները, որտեղ չեն ներառվել Ղազախստանի, Թուրքմենստանի ու Ռուսաստանի ոչ կասպյան շրջանների արտահանման տվյալները: Վիճակագրության համաձայն, 2007թ. դրությամբ Կասպյան շրջանի խոշորագույն նավթարտահանող երկիրը Ղազախստանն է, որի ցուցանիշը կազմել է օրա-

[1] Միջազգային էներգետիկ գործակալությունը/*International Energy Agency* անկախ կազմակերպություն է, որի գործունեությունը հիմնվում է միջկառավարական համագործակցության սկզբունքի վրա: Այն հիմնադրվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից դեռևս 1974թ. վերջերին (Փարիզում)՝ նավթային ճգնաժամի ժամանակաշրջանում, որի հիմնական նպատակն էր աջակցել ճգնաժամի հաղթահարման, նավթի մատակարարումների կարգավորման գործընթացին: Կազմակերպությանն անդամակցում են 28 երկրներ:

կան ավելի քան 1,04 մլն բարել (տարեկան 52 մլն տոննա նավթ)։ Ղազախստանին իրենց բարձր ցուցանիշներով հաջորդում են Ադրբեջանն ու Ռուսաստանը։ Կասպյան տարածաշրջանից Ռուսաստանի նավթարտահանման ծավալները (ներառյալ Կասպյան խողովակաշարային կոնսորցիումից/ԿԽԿ իրականացված արտահանումների ծավալը) կազմում են Ռուսաստանի ամբողջ նավթարտահանման ցուցանիշների ընդամենը 3%-ը։ Նշենք, որ Կասպյան խողովակաշարային կոնսորցիումը նավթարտահանման ծավալներով 2007թ. Կասպյան ավազանի խոշորագույն խողովակաշարն էր (օրական 652 հազ. բարել/տարեկան 32,6 մլն տոննա նավթ), որին հաջորդում էր Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարը՝ օրական 570 հազ. բարել կամ տարեկան 28,5 մլն տոննա նավթ ցուցանիշով (*մանրամասն տե՛ս աղյուսակ 1*)։

Աղյուսակ 1

Կասպյան ավազանից նավթի արտահանումը, 2007թ.[1]

Էներգետիկ հաղորդակցության ուղի	**Արտահանում**		**Նավթի աղբյուրները, մլն տոննա**
	հազ. բարել, օր.	մլն տոննա, տարեկան	
Թենգիզ-Նովոռոսիյսկ (ԿԽԿ նավթատար) Ղազախստան-Ռուսաստան	652	32,6	Ղազախստան (25,6) Ռուսաստան (7)
Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա)	570	28,5	Ադրբեջան
Աթիրաու-Սամարա նավթատար Ղազախստան-Ռուսաստան	320	16	Ղազախստան
Բաքու-Բաթում Ադրբեջան-Վրաստան/գնացքով	136	6,8	Ադրբեջան (4,4) Ղազախստան[2] (2,4)
Բաքու-Նովոռոսիյսկ նավթատար Ադրբեջան-Ռուսաստան	134	6,7	Ադրբեջան (2,3) Ղազախստան[3] (4,4)
Նեքա Իրան/լաստանավ	112	5,6	Թուրքմենստան (3,5) Ղազախստան (2,1)
Ընդհանուր	**1 924**	**96,2**	**-**

Գործակալության միջնաժամկետ՝ մինչև 2013թ. կանխատեսումների համաձայն, Կասպյան ավազանում նավթարդյունաբերության ծավալները կաճեն օրական շուրջ 800 հազ. բարելով։ 2000թ. ի վեր Ղազախստանում նավթարդյունահանման ցուցանիշները կրկնապատկվել են և կազմել օրական 1,4 մլն բարել կամ տարեկան 70 մլն տոննա նավթ։ Ղազախստանի նավթարդյունաբերու-

[1] Տվյալներում ներառված չեն Ղազախստանի (երկրի կենտրոնական հատվածից դեպի Չինաստան արտահանված օրական շուրջ 85 հազ. բարել կամ տարեկան 4,5 մլն տոննա նավթը), ինչպես նաև Թուրքմենստանի ու Ռուսաստանի ոչ կասպյան շրջաններից արտահանումների ծավալները։
[2] Ղազախական լաստանավային փոխադրումները Բաքու (Ադրբեջան)։
[3] Ղազախական լաստանավային փոխադրումները Մախաչկալա (Ռուսաստան)։

թյան տեմպերը կայուն կերպով կաճեն նաև առաջիկա տարիներին և մասնավորապես մինչև 2013թ. գործակալության կանխատեսումներում՝ 2013թ. կազմելով օրական 1,85 մլն բարել նավթ (տարեկան 92,5 մլն տոննա)։ Ղազախստանի գծով գործակալության կողմից իրականացված 2008թ. հուլիսյան միջնաժամկետ հեռանկարներում որոշակի փոփոխություններ են տեղ գտել, ինչը պայմանավորված է ղազախական «Քաշագան» նախագծի հետ։ Խնդիրն այն է, որ «Քաշագանի» նավթի շահագործման մեկնարկը հետաձգվել է և կտրվի ոչ թե 2011թ., այլ ավելի ուշ՝ միայն 2013թ., ինչի արդյունքում 2015թ. Ղազախաստանը կկարողանա արդյունահանել օրական շուրջ 2 մլն բարել նավթ (տարեկան 100 մլն տոննա նավթ)։

Գրաֆիկ 1

Ղազախստանի, Ադրբեջանի ու Թուրքմենստանի նավթարդյունահանումը 2005-2013թթ., հազ. բարել օրական



Գրաֆիկում պատկերված վիճակագրությունից կարելի է նկատել, որ նշված տարիների ընթացքում Ադրբեջանի նավթարդյունահանման տեմպերը, փորձագիտական գնահատականների ու կանխատեսումների համաձայն, համեմատաբար բարձր ցուցանիշներ են արձանագրում 2005-2009թթ. ընկած ժամանակահատվածում։ Հաջորդ՝ 2009-2013թթ. կտրվածքով, սակայն, նավթարդյունահանման ծավալները թեև ունեցել են կայուն աճ, սակայն զգալիորեն կրճատվել են։ 2007թ. Ադրբեջանն արդյունահանել է օրական 870 հազ. բարել նավթ (տարեկան 43,5 մլն տոննա), այն պարագայում, երբ 2006թ. նրա համապատասխան ցուցանիշը կազմել էր օրական 650 հազ. բարել (տարեկան 32,5

մլն տոննա) նավթ: Օրական 1 մլն բարել նավթի արդյունահանման ծավալային սահմանագիծը Ադրբեջանը հատեց միայն 2008թ., իսկ հաջորդ՝ 2009 թվականին, այդ ցուցանիշն արդեն կազմում էր օրական շուրջ 1,3 մլն բարել նավթ: 2013թ. դրությամբ Ադրբեջանի նավթարդյունահանման ծավալները չեն գերազանցի օրական 1,4 մլն բարել նավթի ցուցանիշը:

Գործակալության գնահատականներով, «Ազերի-Չիրագ-Գյունեշլի» հանքավայրերի վերականգնվող պաշարները հաշվվում են շուրջ 9 մլրդ բարել, ինչը բավական հակասական ցուցանիշ է այլ միջազգային էներգետիկ կազմակերպությունների տրամադրած արդյունքների համեմատությամբ, որոնք տատանվում են 4-5 մլրդ բարելի սահմաններում:

2007թ. Կասպյան ավազանի գազի արդյունահանումն ու արտահանումը

Միջազգային էներգետիկ գործակալության զեկույցի փորձագիտական գնահատականների համաձայն, Կասպյան ավազանն ունի զգալի պոտենցիալ ընդարձակելու ներգրավվածությունը բնական գազի հաղորդակցության ու մատակարարումների համաշխարհային ցանցում, շնորհիվ նրա, որ Ադրբեջանն ու Ղազախստանը միացան գազարդյունահանող Թուրքմենստանին ու Ուզբեկստանին՝ դառնալով գազարտահանող ցանցային երկրներ:

Ստորև պատկերված աղյուսակում առանձնացվում են Կասպյան ավազանի գազարդյունահանող 4 երկրների գազի արդյունահանման, սպառման ու արտահանման վիճակագրական տվյալները (*տե՛ս աղյուսակ 2*): Այսպես, 2007թ. դրությամբ Ադրբեջանը արդյունահանել է շուրջ 11 մլրդ մ^3 բնական գազ՝ առաջին անգամ դառնալով բնական գազի ցանցային արտահանող երկիր (կապված 2007թ. Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի շահագործման մեկնարկի հետ): Արդյունահանված բնական գազի ճնշող մեծամասնությունը՝ 9,3 մլրդ մ^3 ծավալով, սակայն, շահագործվել է ներքին սպառման նպատակներով, մնացած մասը՝ 1,7 մլրդ մ^3-ը՝ արտահանվել: Նույն վիճակագրական պատկերը նկատվում է նաև Ղազախստանի պարագայում, որը 2007թ. արդյունահանելով 12,9 մլրդ մ^3 գազ՝ դրա մեծ մասը՝ շուրջ 10,6 մլրդ մ^3, շահագործել է ներքին սպառման նպատակներով, 2,3 մլրդ մ^3՝ նախատեսել արտահանման համար:

Թուրքմենստանը Կասպյան շրջանի խոշորագույն գազարդյունահանող երկիրն է, որի ծավալները 2007թ. գնահատվել են 72,3 մլրդ մ^3: Ի տարբերություն վերը նշված Կասպյան երկու երկրների, Թուրքմենստանն իր արդյունահանած բնական գազի մեծ մասը՝ 54,3 մլրդ մ^3 գազ, արտահանել է, իսկ ներքին սպառմանը հատկացվել է ընդամենը 18 մլրդ մ^3-ը: Թուրքմենստանին բնական գազի արդյունահանման ծավալներով հաջորդում է Ուզբեկստանը, որը 2007թ. արդյունահանել է շուրջ 65,3 մլրդ մ^3 գազ: Այդ ծավալների զգալի հատվածը՝

շուրջ 50,6 մլրդ մ^3, նախատեսվել է ներքին սպառման համար:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2007թ. դրությամբ աղյուսակում բերված Կասպյան 4 երկրներն ընդհանուր առմամբ արդյունահանել են 161,5 մլրդ մ^3 գազ, որի 85%-ը կազմել է միայն Թուրքմենստանի ու Ուզբեկստանի մասնաբաժինը՝ միասին վերցրած (համապատասխանաբար 44,7% և 40,4%):

Ինչ վերաբերում է 2007թ. բնական գազի արտահանմանը, ապա դրա համընդհանուր ծավալները (4 երկրները միասին վերցրած) կազմել են 73 մլրդ մ^3, որի ճնշող մեծամասնությունը՝ շուրջ 74,3%, հաշվվել է միայն Թուրքմենստանի մասնաբաժինը:

Աղյուսակ 2

Բնական գազի արդյունահանումը, սպառումն ու արտահանումը, 2007թ., մլրդ մ^3

երկիր	արդյունահանում	սպառում	արտահանում
Ադրբեջան	11	9,3	1,7
Ղազախստան	12,9	10,6	2,3
Թուրքմենստան	72,3	18	54,3
Ուզբեկստան	65,3	50,6	14,7

Գործակալության տվյալներով, 2007թ. Ադրբեջանը արդյունահանված բնական գազի 1,7 մլրդ մ^3 ծավալից համեմատաբար խոշոր մասը՝ 1,2 մլրդ մ^3, արտահանել է հարևան Թուրքիա, 0,2 և 0,3 մլրդ մ^3 ծավալ ապահովել համապատասխանաբար Իրանին ու Վրաստանին[1]: Աղյուսակում ներկայացված վիճակագրության համաձայն, թուրքմենական արտահանված բնական գազի՝ 54,3 մլրդ մ^3 ծավալների մեծ մասը՝ 48,1 մլրդ մ^3 գազը, արտահանվել է Ռուսաստան, իսկ մնացած՝ 6,2 մլրդ մ^3-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետություն: Նշենք, որ 2006թ. Ռուսաստան ներմուծված շուրջ 60 մլրդ մ^3 գազի գրեթե 70%-ը կազմում էր թուրքմենական գազի մասնաբաժինը: Ինչ վերաբերում է Ուզբեկստանին, ապա վերջինիս կողմից արտահանված գազի զգալի մասը նույնպես բաժին է ընկել Ռուսաստանին (10,5 մլրդ մ^3), մի մասն էլ արտահանվել է Կենտրոնական Ասիա (*մանրամասն տե՛ս աղյուսակ 3*):

[1] Գործակալության տվյալներով, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը կարող է մատակարարել տարեկան մինչև 8 մլրդ մ^3 գազ, իսկ «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման երկրորդ փուլի պարագայում՝ մինչև 20 մլրդ մ^3 գազ (տե՛ս *աղյուսակ 4*): Ադրբեջանի պաշտոնական տվյալներով՝ գազի մատակարարման ծավալների վերաբերյալ Ադրբեջանի ու Թուրքիայի միջև ձեռք բերված վերջին պայմանավորվածությունների համաձայն, 2009թ. «Շահ Դենիզ» հանքավայրից (շահագործման առաջին փուլ) բնական գազի մատակարարումը Թուրքիա կազմելու է տարեկան 6,6 մլրդ մ^3: Թուրքիայի պաշտոնական տեղեկություններով, 2008թ. այդ ցուցանիշը հաշվվել է տարեկան ավելի քան 4 մլրդ մ^{3}գազ:

Աղյուսակ 3

Բնական գազի արտահանումներն ըստ երկրների, 2007թ., մլրդ մ³

Դեպի	Արտահանող երկիր			
	Ադրբեջան	Ղազախստան[1]	Թուրքմենստան	Ուզբեկստան
Ռուսաստան	-	5,5	48,1	10,5
Իրան	0,2	-	6,2	-
Թուրքիա	1,2	-	-	-
Վրաստան	0,3	-	-	-
Կենտրոնական Ասիա	-	(3,2)	-	4,2
Արտահանումը. ընդհ.	**1,7**	**2,3**	**54,3**	**14,7**

Գործակալության փորձագիտական գնահատականներով, Ադրբեջանի բնական գազի ապացուցված պաշարները հաշվվում են շուրջ 1,3 տրլն մ³ գազ, և երկիրը լուրջ պոտենցիալ ունի մեծացնելու բնական գազի արդյունահանման ծավալները: «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման երկրորդ փուլի պարագայում է՛լ ավելի կընդարձակվեն գազի մատակարարման ծավալները մինչև 2013թ. և կկազմեն տարեկան 12-15 մլրդ մ³ (զեկույցում խոսվում է, սակայն, մինչև 20 մլրդ մ³ գազի ծավալի հնարավորության մասին):

Բավական բարձր են գնահատվում Ղազախստանի բնական գազի ապացուցված պաշարների ցուցանիշները, որոնք տարբեր հաշվարկներով տատանվում են 1,9-ից մինչև 4 տրլն մ³-ի սահմաններում: Նախատեսվում է, որ ղազախական գազի արդյունահանման ծավալները առաջիկա երկու տասնամյակում զգալիորեն կաճեն՝ հիմնականում պայմանավորված «Քաշագանի» հանքավայրի շահագործմամբ: «Բրիթիշ Փեթրոլիում» ընկերության 2006թ. տվյալներով, Թուրքմենստանի բնական գազի ապացուցված պաշարները գնահատվել են շուրջ 2,9 տրլն մ³ գազ, այլ՝ ոչ պաշտոնական աղբյուրների համաձայն, այդ ցուցանիշը տատանվում է 5-10 տրլն մ³ սահմաններում:

Ռուսաստանի էներգետիկ ռազմավարությունը Կասպյան տարածաշրջանում և Չինաստանի գործոնը

Կասպյան տարածաշրջանում Ռուսաստանի որդեգրած ռազմավարությանն անդրադառնալիս գործակալության փորձագետներն առանձնացնում են մի քանի առանցքային նկատառումներ.

- Կենտրոնական Ասիայում Ռուսաստանի ռազմավարությունը մասնավորաբար զարգացել է այդ տարածաշրջանի որոշ երկրների բնական գազի ռեսուրսների նկատմամբ ունեցած շահերից ելնելով: Ռուսաստանը Կասպյան ավազանի ուղղությամբ իր էներգետիկ ռազմավարությունում

[1] Ղազախստանի մասով տրված տվյալները կատարված են մոտավոր հաշվարկներով՝ հաշվի առնելով ռուսաստանյան «Գազպրոմ»-ի 2007թ. տարեկան հաշվետվության տեղեկատվությունն առ այն, որ նույն թվականին Ռուսաստանը Ղազախստանից ներմուծել է 8,5 մլրդ մ³ և արտահանել Ղազախստան 10 մլրդ մ³ գազ:

կիրառում է Կենտրոնական Ասիայի նավթագազային պաշարների գործարքային կամ առևտրային վերահսկողության հաստատման, տարածաշրջանում այլ արտաքին ուժերի ներկայացվածության ու մրցակցության կանխման քաղաքականությունը,

- Կենտրոնական Ասիայի և ընդհանրապես Կասպյան ավազանի երկրների հետ Ռուսաստանի էներգետիկ ռազմավարության հենքում դրված է ոչ թե էներգետիկ պահանջների անհրաժեշտության սկզբունքը, այլ աշխարհաքաղաքական շարժառիթները,
- նման ռազմավարության արդյունքում զգալիորեն մեծացել է Ռուսաստանի աճող կախվածությունը Կենտրոնական Ասիայի գազի մատակարարումներից և թուլացել ռուսական կողմի՝ այդ հարցում Չինաստանի հետ մրցակցությունում բանակցային դիրքերն ու ազդեցության լծակները,
- Կասպյան ավազանում Ռուսաստանի վարած էներգետիկ ռազմավարությունը հանգեցրեց Կենտրոնական Ասիայի էներգետիկ դաշտում մեկ այլ կարևոր մրցակցի՝ Չինաստանի ներգրավվածությանը, որը կշարունակի մեծացնել իր էներգետիկ ազդեցությունը տարածաշրջանում՝ ի հաշիվ ռուսական ազդեցության,
- դեպի Չինաստան (Եվրոպա) արտահանման հնարավորությունների հեռանկարների շուրջ եղած խոստումնալից կանխատեսումներն ուժեղացրել են Կասպյան երկրների բանակցային դիրքերը Ռուսաստանի հետ, ինչը հնարավորություն կտա նրանց զգալի ազդեցություն ունենալ բնական գազի գնային քաղաքականության վրա:

Զեկույցի համաձայն, հատկապես վերջին տարիներին միջազգային էներգետիկ հարաբերություններում և մասնավորաբար Կենտրոնական Ասիա/Կասպյան ավազանում տեղի ունեցած զարգացումները նպաստեցին Չինաստանի՝ դեպի Կասպյան տարածաշրջան ներգրավվածության մեծացմանը, որը կարողացավ դառնալ Կենտրոնական Ասիայի էներգետիկ շուկայի կարևորագույն դերակատարներից մեկը: Տարածաշրջանի էներգետիկ ոլորտում չինական կողմի ներկայացվածության առաջին լուրջ ձեռքբերումը Ղազախստանն էր, որտեղ «Չինաստանի ազգային նավթային ընկերությունը՝ «Փեթրո-չայնա»-ն, զգալի ներդրումներ է իրականացրել երկրի նավթահանքերում ու խողովակաշարերում[1]: Թեև Ղազախստանից մատակարարվող նավթի ծավալները այնքան էլ

[1] «Փեթրո-չայնա»-ն *(PetroChina)* Չինաստանի պետական նավթային ընկերություն է, որը մասնագիտացած է նավթի ու բնական գազի հետախուզման, արդյունահանման ու վերամշակման աշխատանքներում, համարվում է աշխարհի խոշորագույն նավթային ընկերություններից մեկը: 2007թ. հոկտեմբերի կեսերի դրությամբ համարվում էր աշխարհում շուկայական կապիտալացման ($416 մլրդ) երկրորդ խոշորագույն ընկերությունը «Էքսոնմոբիլ»-ից հետո, 2007թ. նոյեմբերին $1 տրլն կապիտալացմամբ աշխարհի խոշորագույն ընկերությունն է: Հիմնադրվել է դեռևս 1999թ. որպես Չինաստանի ազգային նավթային ընկերության բաղադրիչ: Չինաստանի էներգետիկ ոլորտում ներգրավվածությունից զատ, Չինաստանի ազգային նավթային ընկերությունը նախագծեր է իրականացնում Ադրբեջանում, Թուրքմենստանում: 2006թ. ընկերությունը $4,18 մլրդ գումարով ձեռք բերեց *«PetroKazakhstan»* կանադական ընկերությունը, որը զբաղվում էր Ղազախստանի ածխաջրածինների արդյունահանման աշխատանքներով:

զգալի չեն, այնուհանդերձ, կարևոր նշանակություն ունեն Չինաստանի համար ոչ միայն էներգետիկ քաղաքականության տեսանկյունից:

Ինչ վերաբերում է Կասպյան ավազանի բնական գազի ուղղությամբ չինական կողմի ներգրավվածության հարցին, ապա պետք է նկատել, որ նավթային ոլորտի համեմատությամբ Կասպյան տարածաշրջանն իր գազի պաշարներով ու դրանց մատակարարման խնդիրներով առավել մեծ կարևորություն է ներկայացնում Չինաստանի համար: Գործակալության փորձագետների հավաստմամբ, Թուրքմենստանը հավանաբար կդառնա Կենտրոնական Ասիայի բնական գազի՝ դեպի Չինաստան կատարվող մատակարարումների առաջին լուրջ երկիրը: 2007թ. հուլիսին Չինաստանի ու Թուրքմենստանի միջև ստորագրվեց մի պայմանագիր, որի համաձայն՝ թուրքմենական կողմն առաջիկա 30 տարվա ընթացքում պարտավորվում էր նախագծել «Կենտրոնական Ասիա» գազատար՝ դեպի Չինաստան տարեկան 30 մլրդ մ³ ծավալով թուրքմենական գազի մատակարարմամբ: Իսկ 2008թ. օգոստոսին Չինաստանը Ղազախստանի հետ եկավ համաձայնության 10 մլրդ մ³ հզորությամբ գազատարի կառուցման նախագծի շուրջ, որը դիտվում է որպես թուրքմենական 30 մլրդ մ³ հզորությամբ գազամուղի շարունակություն:

Իրանական գործոն. գազի ներմուծում ու արտահանում

Իրանը տիրապետում է գազի հսկայածավալ պաշարների, զգալիորեն շահագրգռված է գազարդյունահանման ծավալների ավելացման ուղղությամբ և ունի դրա արտահանման բավական լայն հնարավորություններ: Այդպիսի փորձագիտական գնահատական է տրվում բնական գազի ոլորտում Իրանի ներկայիս ու հեռանկարային կարողություններին: Իրանը տիրապետում է ավելի քան 27,5 տրլն մ³ գազի պաշարների:

Իրանը բնական գազի ցանցային ներմուծող երկիր է: 2007թ. այդ երկիրը շուրջ 6,2 մլրդ մ³ գազ ներմուծեց Թուրքմենստանից «Կորպեջե-Կուրտ-Կուի»/ *Korpedzhe Kurt-Kui* գազամուղով (թուրքմենական գազի մատակարարումները դեպի Իրան, սակայն, մի քանի անգամ ընդհատվել են՝ կապված գների շուրջ առաջացած անհամաձայնությունների հետ): Իրանական կողմը բնական գազ է ստանում նաև Ադրբեջանից. այդ մատակարարումները 2007թ. դրությամբ կազմեցին շուրջ 0,2 մլրդ մ³՝ զգալիորեն զիջելով մատակարարված թուրքմենական գազի ծավալներին: Պաշտոնական Թեհրանը շահագրգռված է ավելացնել ադրբեջանական գազի ներմուծման ծավալները՝ ի հաշիվ «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման երկրորդ փուլի: «Սթրաթֆոր» կենտրոնի տվյալների համաձայն, կողմերը բանակցություններ են վարում 2012թ. սկսած տարեկան շուրջ 12 մլրդ մ³ գազարտահանման հարցի շուրջ: 2005թ. ի վեր իրանական կողմը գազային ոլորտում համագործակցում է Ադրբեջանի հետ՝ դեպի Նախիջևանի ինքնավարություն բնական գազի մատակարարման շուրջ: Հա-

մաձայն ստորագրված 25 տարվա պայմանագրի, ադրբեջանական կողմը Իրան է առաքում տարեկան 80 մլն մ³ գազ, իսկ վերջինս, իր հերթին, Նախիջևանին մատակարարում է այդ ծավալի 85%-ը: Որոշ գնահատականներով, 2009-2024թթ. ժամանակահատվածում այդ մատակարարումները կարող են կազմել տարեկան մինչև 402,5 մլն մ³ գազ, որից Իրանը դեպի Նախիջևանի ինքնավարություն կմատակարարի շուրջ 350 մլն:

Իրանական կողմը նաև բնական գազի արտահանման կարևոր երկիր է: Պաշտոնական Թեհրանը բնական գազի արտահանման հարցում լուրջ պայմանավորվածություններ է ձեռք բերել թուրքական կողմի հետ, որի համաձայն՝ Թուրքիա է մատակարարվելու տարեկան շուրջ 9 մլրդ մ³ գազ (սակայն ընթացքում եղել են որոշ խոչընդոտներ): Իրանը պայմանագիր է ստորագրել նաև Օմանի հետ տարեկան 10 մլրդ մ³ բնական գազի արտահանման վերաբերյալ (բանակցությունները գտնվում են ընթացիկ փուլում): Ստորագրված պայմանագրի համաձայն, նախատեսվում էր նաև Պարսից ծոցի Քիշ կղզու ու Հենգամի գազի պաշարների համատեղ շահագործումը:

Իրանը պայմանավորվածություններ է ձեռք բերել Միացյալ Արաբական Էմիրությունների հետ՝ «Սալման» առափնյա հանքավայրից տարեկան 6 մլրդ մ³ ծավալով գազ արտահանելու վերաբերյալ: 2007թ. դեկտեմբերին Իրանը պայմանագիր ստորագրեց մեկ այլ պետության՝ Բահրեյնի հետ տարեկան 10 մլրդ մ³ իրանական գազի արտահանման վերաբերյալ: Իրանական կողմը նախատեսում է տարեկան շուրջ 1-1,1, իսկ 2019թ. սկսած՝ մինչև 2,3 մլրդ մ³ գազ արտահանել նաև Հայաստան: Հայկական կողմը իրանական գազի դիմաց կվճարի էլեկտրաէներգիայով՝ յուրաքանչյուր խոր. մետր գազի դիմաց մատակարարելով 3 կվտ/ժ էլեկտրաէներգիա:

Միջազգային էներգետիկ գործակալության փորձագետները նշում են, որ չնայած Իրանը բնական գազի հսկայական պաշարներով հարուստ (27,5 տրլն մ³ գազ), արդյունահանման ու արտահանման ծավալների ընդարձակման մեծ հնարավորություններ ունեցող երկիր է, այնուհանդերձ, ոլորտի զարգացման վրա մեծ ազդեցություն են թողնում արևմտյան երկրների կողմից կիրառվող պատժամիջոցները, ինչի հետևանքով զգալիորեն կրճատվում են այդ բնագավառում անհրաժեշտ ներդրումները:

Քաղաքական ենթատեքստ

Միջազգային էներգետիկ գործակալության կողմից պատրաստված այս զեկույցը բովանդակությամբ ու նպատակների առաջադրմամբ բավական քաղաքականացված պետք է համարել: Գործակալության ներկայացրած հաշվետվության քաղաքականացված լինելու հանգամանքը կարելի է հիմնավորել մի քանի փաստարկներով.

- զեկույցի կառուցվածքային բովանդակությունն ուղղակիորեն հիմնված է Կասպյան ավազանի էներգետիկ զարգացումներում ադրբեջանական գործոնի գերագնահատման վրա: Զեկույցում մասնավորապես նշվում է, թե Կասպյան տարածաշրջանն արդեն դեպի եվրոպական շուկաներ բնական գազի մատակարարման աղբյուր է շնորհիվ այն բանի, որ 2007թ. սկսած Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի շահագործմամբ տրվեց Ադրբեջանից գազի մատակարարման մեկնարկը՝ թեև փոքրաքանակ, բայցև աճող պոտենցիալի հեռանկարով (*տե՛ս աղյուսակ 4*): Ավելին, Կասպյան ավազանի՝ որպես գազի մատակարարման կարևոր հանգույցի զարգացման ռազմավարական հարցադրումը ելնում է նրանից, թե Ադրբեջանից ստացվող արտահանումները որքանով կզարգացվեն և կառաքվեն Եվրոպա՝ հարավկովկասյան նոր հաղորդակցությունների միջոցով: Հաշվետվությունում Կասպյան ավազանի գազի պաշարների շահագործման ու արդյունահանման խնդիրը մեծապես պայմանավորվում է ադրբեջանական «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման երկրորդ փուլի ու նրա հնարավորությունների զարգացմամբ: Փորձագետների բնորոշմամբ, Կասպյան ավազանից դեպի Եվրոպա գազի արտահանման հարցում «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման երկրորդ փուլը մինչև 2015թ. բնական գազի աճող ծավալներ ունեցող հիմնական աղբյուր է հանդիսանում,
- զեկույցում իրականացված վերլուծություններում և Կասպյան ավազանի էներգետիկ զարգացումների շուրջ կատարված կանխատեսումներում ժամանակ առ ժամանակ խոսվում է Կասպյան ավազանի էներգետիկ ռեսուրսների շահագործման հարցում Ռուսաստանին շրջանցելու հնարավորությունների, այս ուղղությամբ Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության չհիմնավորվածության հարցերի շուրջ: Մասնավորապես նշվում է, որ Կենտրոնական Ասիայում Ռուսաստանի էներգետիկ ներգրավվածությունը բխում է ոչ այնքան Ռուսաստանի էներգետիկ պահանջարկի բավարարման անհրաժեշտությունից, որքան նրա՝ տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսներն իր վերահսկողության տակ պահելու էներգետիկ ռազմավարությունից: Զեկույցում չի խոսվում այն մասին, որ, օրինակ, 2005թ. ԵՄ բնական գազի սպառման ավելի քան 30%-ը ապահովվել է Ռուսաստանի կողմից, և որ վերջինս մտադիր է առաջիկա տարիներին զգալիորեն ավելացնել այդ մատակարարումների ծավալները: Չպետք է մոռանալ, որ Ռուսաստանը ներկայում աշխարհում բնական գազ արդյունահանող և միաժամանակ արտահանող խոշորագույն պետությունն է (*մանրամասն տե՛ս Հավելվածը*),

- «Կասպյան նավթի ու գազի զարգացման հեռանկարները» զեկույցում 2008թ. վրաց-ռուսական օգոստոսյան պատերազմի, Հարավային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի էներգետիկ հաղորդակցությունների անվտանգության վրա դրա կարճաժամկետ ու միջնաժամկետ հետևանքներին վերաբերող հարցերը բավական կցկտուր են ներկայացված, փորձ է արվում դրանց տալ ավելի շուտ երկրորդային նշանակություն: Այն պարագայում, երբ օգոստոսյան իրադարձությունները եթե նույնիսկ կարճաժամկետ առումով չունեցան խորքային ազդեցություն տարածաշրջանի էներգետիկ անվտանգության խնդիրների վրա, ապա միջնաժամկետ զարգացումների համատեքստում, ըստ էության, հարցն այլ հարթության վրա պետք է դիտարկել[1]: Բավական հետաքրքիր էր, որ զեկույցը նախաձեռնվեց 2008թ. հոկտեմբերին՝ օգոստոսյան դեպքերից անմիջապես հետո: Զեկույցի պատրաստումը կոչված էր ի չիք դարձնելու Կասպյան ավազանի ու Հարավային Կովկասի նավթագազային ոլորտում ներգրավված արտասահմանյան ներդրողների՝ վրաց-ռուսական պատերազմի հետևանքով առաջացած մտահոգությունները և ապահովել ներդրումների արտահոսքերը տարածաշրջան:

Աղյուսակ 4

Հարավային Կովկասի հիմնական նավթագազային խողովակաշարերը, 2008թ.

Ճանապարհ	Շահագործման մեկնարկը	Նավթ/ գազ	Հզորությունը	Զարգացման հեռանկարները
Բաքու-Թբիլիսի-Ջեյհան	2006թ.	նավթ	օր. 1 մլն բարել	2008թ. տարեվերջին՝ օր. 1,2 մլն/բ, պոտենցիալը՝ մինչև օր. 1,8 մլն/բ
Բաքու-Սուփսա	1999թ.	նավթ	օր. 100 հազ./բ	վերաբացվեց 2008թ. ամռանը՝ 18- ամսյա վերանորոգման աշխատանքներից հետո
Բաքու-Նովոռոսիյսկ	1983թ.	նավթ	օր. 100 հազ./բ	1997թ.
Բաքու-Թբիլիսի-Էրզրում	2007թ.	գազ	տարեկան 8 մլրդ մ^3	տարեկան 16-20 մլրդ մ^3

[1] Հիշեցնենք, որ Վրաստանում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով «Բրիթիշ Փեթրոլիում-Ադրբեջան» ընկերությունը օգոստոսի կեսերից դադարեցրեց Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի և Բաքու-Սուփսա նավթամուղի աշխատանքները անվտանգության ու կանխարգելիչ նկատառումներից ելնելով (Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը վերագործարկվեց երկու օր անց): Ուշագրավ է, որ 2008թ. օգոստոսի 5-ին վրաց-ռուսական պատերազմի նախօրեին, դադարեցված էր նաև Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարով նավթի մատակարարումը՝ Թուրքիայի տարածքում քուրդ անջատողականների կողմից նավթատարի պայթեցման հետևանքով:

Հավելված

Բնական գազի արտահանումն ու արդյունահանումը՝ ըստ առաջատար երկրների, 2007թ. դրությամբ (աղբյուրը՝ ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչություն)

Արտահանում			*Արդյունահանում*		
Դիրքը	Երկիրը	մլրդ մ³	Դիրքը	Երկիրը	մլրդ մ³
1	**Համաշխարհային**	**929,9**	**1**	**Համաշխարհային**	**3,021**
2	Ռուսաստան[1]	173	2	Ռուսաստան	654
3	Կանադա	107,3	3	ԱՄՆ	545,9
4	Նորվեգիա	85,7	4	ԵՄ	197,8
5	Ալժիր	59,4	5	Կանադա	187
6	Նիդեռլանդներ	55,6	6	Իրան	111,9
7	Թուրքմենստան	49,4	7	Նորվեգիա	99,3
8	Կատար	39,3	8	Ալժիր	85,7
9	Ինդոնեզիա	32,6	9	Նիդեռլանդներ	76,3
10	Մալայզիա	31,6	10	Սաուդյան Արաբիա	75,9
11	ԱՄՆ	23,3	11	Մեծ Բրիտանիա	72,3
12	Նիգերիա	21,2	12	Չինաստան	69,3
13	Ավստրալիա	19,9	13	Թուրքմենստան	68,9
14	Տրինիդադ և Տոբագո	18,1	14	Ուզբեկստան	65,2
15	Եգիպտոս	15,7	15	Մալայզիա	64,5
16	Ուզբեկստան	14	16	Կատար	59,8
17	Օման	13,1	17	Ինդոնեզիա	56
18	Գերմանիա	12,2	18	Մեքսիկա	56
19	Բոլիվիա	11,7	19	Միացյալ Արաբ. Էմիր.	48,8
20	Մեծ Բրիտանիա	10,4	20	Եգիպտոս	47,5

[1] Այլ աղբյուրների տվյալներով, 2007թ. Ռուսաստանն արտահանել է մինչև 185 մլրդ մ³ բնական գազ:

ԻՍՐԱՅԵԼ-ԱԴՐԲԵՋԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Արտակ Գրիգորյան

Մերձավորարևելյան տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական բավական բարդ և հակասական գործընթացներում հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Իսրայել-Ադրբեջան փոխհարաբերությունների հարցը: Այս երկու երկրների փոխհարաբերությունները, որոնք Հայաստանի քաղաքագիտական և վերլուծական շրջանակների կողմից դեռևս բավարար չափով չեն ուսումնասիրվել, ԽՍՀՄ փլուզումից հետո կայուն և դինամիկ զարգացում են ապրել: Իսրայելի կողմից հետխորհրդային մի շարք երկրների, մասնավորապես միջինասիական և անդրկովկասյան մյուս հանրապետությունների, այդ թվում՝ Հայաստանի նկատմամբ հանդես բերված անվստահությունն ու զգուշավորությունը, Ադրբեջանի հանդեպ շատ ավելի մեղմ դրսևորումներ ունեցավ: Իսրայելի քաղաքական համակարգը, հավանաբար մասամբ նաև իր ռազմավարական դաշնակից Թուրքիայի գործոնով պայմանավորված, Ադրբեջանի նկատմամբ ի սկզբանե որդեգրել է ավելի պատրաստակամ և կառուցողական վարքաբանություն:

Փոխհարաբերությունների պատմությունից

Իսրայելի և Ադրբեջանի միջև պաշտոնական շփումները սկսվել են ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո՝ 1990-ական թթ. սկզբներին: Բարձր մակարդակով առաջին հանդիպումը կայացել է 1998թ., երբ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն (որն, ինչպես հայտնի է, ս.թ. փետրվարին կայացած Կնեսետի ընտրությունների արդյունքում 10 տարվա ընդմիջումից հետո կրկին ստանձնեց Իսրայելի վարչապետի պաշտոնը) պաշտոնական այցով ժամանեց Ադրբեջան: Այդ այցը լուրջ խթան հանդիսացավ երկու երկրների երկկողմ հարաբերությունների զարգացման ճանապարհին: Մեկ տարի անց Ադրբեջան այցելեց նաև Իսրայելի ԱԳՆ պատվիրակությունը: Ադրբեջանը համարվեց Իսրայելի ռազմավարական դաշնակիցը, սկսեցին լայն թափով զարգանալ միջպետական և առևտրատնտեսական հարաբերությունները:

Իսրայելի և Ադրբեջանի միջև միջպետական շփումներն ակտիվացան հատկապես Կնեսետի 2006թ. ընտրություններից հետո, երբ «Մեր տունն

Իսրայելն է» կուսակցությունն (ՄՏԻ) ընտրվեց Կնեսետ՝ դառնալով խորհրդարանական կուսակցություն, իսկ վերջինիս ղեկավար, նախկին խորհրդային քաղաքացի Ավիգդոր Լիբերմանը նշանակվեց Իսրայելի փոխվարչապետ և ստրատեգիական պլանավորման նախարար: ՄՏԻ-ի շարքերում Կնեսետի պատգամավոր ընտրվեց ծնունդով Բաքվից Իոսեֆ Շագալը, որը 2006-09թթ. ժամանակահատվածում ոչ միայն հանդիսացավ Ադրբեջանի խոսափողը, շահերի պաշտպանն ու արտահայտիչը Կնեսետում, այլև թուրք-իսրայելական եռակողմ Բաքու-Անկարա-Թել Ավիվ ռազմավարական դաշինքի հիմնական լոբբիստն ու գաղափարախոսը: 2006-ից հիմնականում Շագալի ծավալած գործունեության արդյունքում մեկը մյուսի հետևից սկսեցին Ադրբեջան ժամանել ՄՏԻ խմբակցության անդամները՝ Շագալի գլխավորությամբ իրականացնելով ադրբեջանամետ գործունեություն: Շատ արագ Կնեսետում ձևավորվեց Իսրայել-Ադրբեջան պատգամավորական բարեկամական խումբ[1], որը գլխավորեց հենց ինքը՝ Շագալը:

Նույն 2006թ. հունիսին Կասպյան երկրների էներգետիկ համաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով Բաքու ժամանեց Իսրայելի ենթակառուցվածքների նախարար Բենիամին Բեն-Էլիեզերը: Վերջինս, բացի համաժողովի աշխատանքներին մասնակցելուց, հանդիպումներ ունեցավ նաև Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի, արտաքին գործերի և էներգետիկայի նախարարների հետ: Այդ հանդիպումների ընթացքում քննարկվեցին Իսրայելին՝ ադրբեջանական նավթի և գազի մատակարարման հարցերը: Բանակցությունները տվեցին ցանկալի արդյունքներ և շատ կտրուկ, արդեն ընդամենը մեկ շաբաթ անց, Իսրայելը Ջեյհանից Հայֆայի նավահանգստով սկսեց ադրբեջանական նավթ ներմուծել:

2007թ. օգոստոսին պաշտոնական այցով Բաքու ժամանեց Իսրայելի փոխվարչապետ, ստրատեգիական պլանավորման նախարար, վերը հիշատակված Ավիգդոր Լիբերմանը: Վերոհիշյալ այցը խնամքով նախապատրաստվել և քննարկվող հարցերի շրջանակները հստակեցվել էր նույն Ի.Շագալի կողմից, որն այցի ընթացքում ուղեկցում էր իր կուսակցական ղեկավարին: Այս այցը, որը լայնորեն լուսաբանվեց և՛ իսրայելական, և՛ ադրբեջանական մամուլի կողմից, իր տարողունակությամբ և քննարկվող հարցերի բազմազանությամբ թերևս կարելի էր աննախադեպ համարել իսրայելա-ադրբեջանական երկկողմ շփումների պատմության ընթացքում: Այցելության առանցքը բարձր մակարդակի հանդիպումն էր Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ: Հանդիպման ընթացքում մասնավորապես քննարկվել է Իսրայե-

[1] Ի տարբերություն ՀՀ ԱԺ միջխորհրդարանական բարեկամական խմբերի, մի շարք երկրներում, այդ թվում նաև Իսրայելում, վերոհիշյալ խմբերը միջպետական փոխհարաբերությունների կազմակերպման ու զարգացման գործում հանդես են բերում առանցքային դերակատարություն:

լում ադրբեջանական ներկայացուցչության բացման հարցը՝ սկզբում որպես առևտրական ներկայացուցչություն, իսկ հետագայում՝ որպես դեսպանատուն: Քննարկվել են նաև ադրբեջանական կառավարության կողմից Իսրայելում բնակություն հաստատած ադրբեջանցիներին թոշակներ տրամադրելու, տնտեսական համագործակցության հետ կապված հարցեր, այդ թվում՝ Ադրբեջանի հարկային օրենսդրությունում փոփոխությունների կատարման հարցը, որը երկու երկրների միջև տնտեսական համագործակցության ընթացքում պետք է բացառի կրկնակի հարկման մեխանիզմը, ինչպես նաև ռազմական, անվտանգության, Իրանի միջուկային սպառնալիքի և հակաահաբեկչական պայքարի հետ կապված հարցեր: Հանդիպումից հետո Լիբերմանը նշեց, որ «… առաջին անգամ այս հարցերը բարձրացվեցին պետության ղեկավարի մակարդակով, և ես վստահ եմ, որ դրանց լուծումները կարագացվեն»: Լիբերմանն Իլհամ Ալիևին բնորոշեց որպես արևմտյան տիպի գործիչ, խոր գիտելիքների տեր անձնավորություն, որը լավ է հասկանում տարածաշրջանային հիմնախնդիրները: Լիբերմանը հանդիպումներ է ունեցել նաև Ադրբեջանի վարչապետ Արթուր Ռասիզադեի և արտերկրում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքային պետական կոմիտեի նախագահ Նազիմ Իբրահիմովի հետ:

Իսրայելի փոխվարչապետը մասնակցել է նաև Բաքվի հրեական մշակութային կենտրոնի բացման հանդիսավոր արարողությանը, որտեղ ելույթ ունենալով՝ մասնավորապես նշել է. «Այս մշակութային կենտրոնը հնարավորություն կտա ավելի խորացնել երկու ժողովուրդների բարեկամությունը և կօգնի ադրբեջանցիներին ավելի լավ ճանաչել Իսրայելն ու հրեաներին: Հրեաներն Ադրբեջանում ապրում են լիարժեք պաշտպանվածության պայմաններում, այդպես եղել է նախկինում, այդպես է հիմա, այդպես կլինի նաև ապագայում… Իսրայելը շահագրգռված է ընդլայնել Ադրբեջանի հետ համագործակցությունը բոլոր ոլորտներում, և հանուն դրա մեր կառավարությունը կանի ամեն ինչ երկկողմ բարեկամական փոխհարաբերությունները զարգացնելու ուղղությամբ»:

2008թ. մայիսին Ադրբեջան ժամանեց Իսրայելի գյուղատնտեսության նախարար Շալոմ Սիմհոնը, որը հանդիպումներ ունեցավ նախագահ Ալիևի, Ադրբեջանի տնտեսական զարգացման և գյուղատնտեսության նախարարների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են գյուղատնտեսության բնագավառում համագործակցության հետ կապված հարցեր:

Դրանից մեկ ամիս անց կրկին Բաքու մեկնեց Իսրայելի ենթակառուցվածքների նախարար Բենիամին Բեն-Էլիեզերը: Այս այցը լուրջ բեկում առաջացրեց առանց այն էլ աստիճանական զարգացում ապրող Ադրբեջան-Իսրայել էներգետիկ համագործակցության բնագավառում:

Մոտավորապես նույն ժամանակահատվածում պաշտոնական այցերով

Իսրայել են ժամանել Ադրբեջանի տնտեսական զարգացման նախարար Հեյդար Բաբաևը (փետրվար, 2007թ.), արտերկրում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքային պետական կոմիտեի նախագահ Նազիմ Իբրահիմովը (ապրիլ, 2007թ.), տրանսպորտի նախարար Զիա Մամեդովը (հունիս, 2007թ.), պետական նավթային ընկերության փոխնախագահ Էլշադ Նասիրովը (հուլիս, 2007թ.), Ադրբեջան-Իսրայել պատգամավորական բարեկամական խմբի ղեկավար Էվդա Աբրամովը (մայիս, 2008թ.):

Ադրբեջանցիներն Իսրայելում

Ադրբեջանում բնակվող հրեաները հիմնականում հանդիսացել են այսպես ասած ինքնուրույն էթնոլեզվական խումբ կազմող լեռնային հրեաներ[1]: ԽՍՀՄ փլուզումից հետո, ըստ մի շարք տվյալների, Ադրբեջանից Իսրայել տեղափոխվեցին մոտ 40-50 հազար ադրբեջանցիներ: Որոշ աղբյուրներ այդ թիվը նշում են մինչև 70 հազար[2]: Հրեաների հետ մեկտեղ (կամ լեռնային հրեա անվան տակ) Ադրբեջանից Իսրայել տեղափոխվեցին նաև բավական մեծ թվով էթնիկ ազերիներ (ըստ որոշ տվյալների՝ մոտ 20-25 հազ.), որոնք իրենց հետ Իսրայել տարան նաև ադրբեջանական մշակույթի և մտածողության բավական արտահայտված տարրեր: Նրանց զգալի մասը գիյուրի[3] չի ենթարկվել, նախկինի պես դավանում է մուսուլմանություն՝ իրեն համարելով ադրբեջանցի: Հետաքրքրականն այն է, որ թե՛ իսրայելական և թե՛ ադրբեջանական աղբյուրները, Ադրբեջանից Իսրայել տեղափոխված «հրեաների» մասին արտահայտվելիս բավական հաճախ կիրառում են «Իսրայելի ադրբեջանցիներ», «ադրբեջանական համայնք», «ադրբեջանական սփյուռք» եզրերը:

[1] Ներկայումս լեռնային հրեաները համարվում են հրեական ինքնուրույն էթնոլեզվական խումբ: Բնակվում են հիմնականում Ադրբեջանում և Դաղստանում: Լեռնային հրեա տերմինն առաջին անգամ գործածվել է 19-րդ դարի կեսերին: Ինքնանվանումը՝ «ջուխուր»: Խոսում են հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական ճյուղի թաթերեն լեզվի իրար մոտիկ մի քանի բարբառներով (երբեմն նշվում է որպես հրեա-թաթերեն լեզու): Լեռնային հրեաների ծագման մասին միասնական տեսակետ գոյություն չունի: Համարվում է, որ վերջիններս իրանական հրեաների սերունդներ են, որոնք վաղ միջնադարում արտագաղթելով դեպի հյուսիսարևելյան Կովկաս, ժամանակի ընթացքում միախառնվել են արամեախոս քրդական հրեաներին, կովկասաբնակ թաթերին և հնարավոր է՝ նաև խազարներին: Մեկ այլ տեսակետի համաձայն, լեռնային հրեաները իրանական թաթերի մի քանի ցեղախմբերի սերունդներ են, որոնք իրանական հրեաների ազդեցության տակ դեռևս Իրանում ընդունել են հուդայականություն և հետագայում ներթափանցել Կովկաս:

[2] Սա բավական լուրջ թիվ է: Համեմատության համար նշենք, որ չնայած Երուսաղեմում հայերի ներկայացվածության պատկառելի ավանդույթներին, ներկայումս այնտեղ հայ համայնքը կազմում է մոտ 4-5 հազ. մարդ, իսկ ընդհանուր առմամբ, Իսրայելում հայերի թվի մասին թեև չկան ճշգրիտ տվյալներ, սակայն, ըստ որոշ աղբյուրների, այն չի գերազանցում 15-16 հազարը:

[3] Կրոնական ծիսակատարություն հուդաիզմում, որի ժամանակ «ոչ հրեան» ընդունում է հրեություն և դառնում հրեա: Անգամ գենետիկորեն էթնիկ հրեան, քանի դեռ գիյուրի չի ենթարկվել, համարվում է «ոչ հրեա»:

1990-ականների ընթացքում Իսրայելում արմատավորվելուց և ինտեգրվելուց հետո 2000-ական թթ. սկզբներին այս խավն արդեն կարողացավ ինքնակազմակերպվել, ձևավորել իր կառույցներն ու կազմակերպությունները, ակտիվորեն ներգրավվել ողջ Իսրայելի և հատկապես շուրջ մեկ միլիոն ռուսալեզու բնակչության հասարակական կյանքին: Վերջիններս կարողացան հաջողությամբ ինտեգրվել նաև Իսրայելի քաղաքական համակարգին՝ իրենց շարքերից տալով նաև հասարակական ու քաղաքական գործիչներ: Այս գործընթացում ադրբեջանցիներն օգտվում էին թուրքական կառույցների և լոբբիստական միավորումների արդեն իսկ առկա փորձից և նրանց մեթոդական աջակցությունից, ինչը բավական հեշտացրեց ու արագացրեց նրանց կայացումը:

2007թ. ապրիլին Թել Ավիվում տեղի ունեցավ «Ադրբեջան-Իսրայել ասոցիացիայի» (ԱԶԻԶ) հիմնադիր համագումարը: Ասոցիացիայի նախագահ ընտրվեց նույն Իոսեֆ Շագալը: Վերոհիշյալ կազմակերպության հիմնադրմանն իրենց ներկայությամբ առանձնահատուկ կարևորություն հաղորդեցին Ավիգդոր Լիբերմանը, Իսրայելի տուրիզմի նախարար Իցհակ Ահարոնովիչը և տրանսպորտի նախարար Շաուֆ Մոֆազը: Հիմնադիր համագումարին մասնակցելու համար Ադրբեջանից ևս ժամանել էր խիստ ներկայացուցչական պատվիրակություն՝ արտերկրում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքային պետական կոմիտեի նախագահ Նազիմ Իբրահիմովի գլխավորությամբ: Դրանից անմիջապես հետո, հղում անելով հայազգի վերլուծաբան Համայակ Նահապետյանի 04.06.2007թ. «Ադրբեջան-Իսրայել համագործակցության խորացման շուրջ» հոդվածին, Իսրայելի մամուլում հրապարակումներ եղան, թե իբր Հայաստանում «խանդով» են վերաբերվում վերոհիշյալ կազմակերպության հիմնադրմանը:

Իսրայելում գործող ադրբեջանական մյուս խոշոր կառույցը «Իսրայելի ադրբեջանցիների կոնգրես» կազմակերպությունն է, որի գործունեության հիմքում ընկած է Թուրքիա-Ադրբեջան-Իսրայել ռազմավարական դաշինքին անհրաժեշտ աջակցության ցուցաբերումը: Վերջինիս գործունեության ձեռագրում հստակ նշմարվում է թուրքական ազդեցությունը, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ «Իսրայելի ադրբեջանցիների կոնգրեսն» իրականացնում է թուրքական լոբբիստական գործառույթներ: Այդ առումով մեջբերում ենք իսրայելյան քաղաքական վերլուծաբան Շիմոն Բրիմանի հետևյալ խոսքերը. «Առկա որոշակի հանգամանքների արդյունքում այլևս ակնհայտ է, որ «Իսրայելի ադրբեջանցիների կոնգրեսն» իրականացնում է թուրքական լոբբիի ֆունկցիաներն Իսրայելում՝ ուղղակիորեն համագործակցելով հրեական պետության թուրքական դեսպանատան հետ: Այսպիսով, եթե Թուրքիան և Ադրբեջանն Իսրայելում ունեն իրենց շահերի պաշտպան միանգամից երկու

լոբբիստական կառույցներ, ապա Հայաստանը չունի նշված որակի որևէ լուրջ կազմակերպություն»[1]:

Ընդ որում՝ գոյություն ունի ակնհայտ մրցակցություն վերոհիշյալ երկու կազմակերպությունների միջև: Հայտնի են նույնիսկ սկանդալային պատմություններ: Այսպես՝ 2008թ. փետրվարի 26-ին Հայֆա քաղաքի «Լոտոս» ռեստորանում ԱԶԻԶ-ի նախաձեռնությամբ կազմակերպված ադրբեջանա-հրեական բարեկամությանը նվիրված մշակութային ծրագրի ժամանակ, որին մասնակցում էին Ադրբեջանից հրավիրված մշակութային խմբեր և կատարողներ, հանկարծ դահլիճ ներխուժեցին մի խումբ ադրբեջանցիներ (ինչպես պարզվեց հետագայում՝ Կոնգրեսի ներկայացուցիչներ), որոնք, անկարգություններ հրահրելով, մեղադրեցին կազմակերպիչներին «Խոջալուի եղեռնի» 16-ամյակի օրը մշակութային ծրագիր իրականացնելու համար: Այս միջադեպը լայն արձագանքի արժանացավ ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Իսրայելում:

Երկու ամիս անց այս երկու կազմակերպությունները մեկը մյուսից առանձին նշեցին Հեյդար Ալիևի ծննդյան 85-ամյակը՝ յուրատեսակ մրցակցության մեջ մտնելով, թե ով ավելի փքուն ներբողներ կձոնի Ալիև ավագի հասցեին: Ադրբեջանական և Իսրայելի հատկապես ռուսալեզու մամուլը երկու կազմակերպությունների միջոցառումներն էլ մեկնաբանեց ամենայն պաթոսով և մանրակրկտությամբ:

ԱԶԻԶ-ի նախաձեռնությամբ 2008թ. մայիսի 26-27-ին մեծ շուքով և հանդիսավորությամբ տոնվեցին «Ադրբեջանի օրերը» Իսրայելում՝ նվիրված լեռնային հրեաների Էրեց-Իսրայել հայրենադարձման 160, Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության (նկատի ունեն մուսավաթական Ադրբեջանը) 90 և Իսրայելի պետության հիմնադրման 60-ամյակներին: Միջոցառումները սկսվեցին մայիսի 26-ին Կնեսետի ալիայի ու աբսորբցիայի հանձնաժողովի հանդիսավոր նիստով, որին հրավիրված էին Ադրբեջանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Կանադայի հրեական համայնքների ու միջազգային հրեական կազմակերպությունների ներկայացուցիչներ, Իսրայելի կառավարության անդամներ, օտարերկրյա դեսպաններ և այլ պաշտոնական հյուրեր: Ելույթներ ունենալով՝ «Ադրբեջանի օրերի» անցկացումը ողջունեցին Իսրայելի աբսորբցիայի նախարար Յակով Էդրին, Իսրայելում Թուրքիայի դեսպան Համիկ Թանը, Մոլդովայի դեսպան Լարիսա Միկուլեցը, Կնեսետի գրեթե բոլոր խմբակցությունների ներկայացուցիչները և Ադրբեջանի Միլլի մեջլիսի պատգամավոր, Ադրբեջան-Իսրայել պատգամավորական բարեկամական խմբի ղեկավար

[1] Համեմատության համար ցանկանում ենք նշել, որ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանական միաբանությունը խիստ օրինաչափ պատճառներով ոչ միայն չի կարողանում կատարել այդ գործառույթը, այլև ինքն ունի Հայաստանի Հանրապետության աջակցության և պաշտպանության կարիքը:

Էվդա Աբրամովը: Մշակութային միջոցառումները, որին մասնակցում էին Ադրբեջանից ժամանած բազմաթիվ կատարողներ և մշակութային խմբեր, շարունակվեցին նույն օրը Երուսաղեմում և հաջորդ օրը՝ Հայֆա քաղաքում: «Ադրբեջանի օրերը» հովանավորել էր ծագումով ադրբեջանական հրեա, մոսկվացի հայտնի գործարար, Ադրբեջանի միջազգային հրեական հիմնադրամի ղեկավար Հերման Զախարյանը:

Համագործակցության տնտեսական ցուցանիշներ

Ընդհանուր առմամբ 2006-09թթ. ժամանակահատվածում Իսրայելի հետ միջպետական և տնտեսական համագործակցության շրջանակներում Ադրբեջանն իսլամական բոլոր երկրների շարքում զբաղեցրել է առաջին տեղը: Հրեական պետությունն ադրբեջանական նավթի երկրորդ գնորդ պետությունն է Իտալիայից հետո: 2007թ. Իսրայելը ներմուծել է մոտ 2 մլն տոննա ադրբեջանական նավթ, ինչը բավական պատկառելի ցուցանիշ է: Այդ նույն ծավալները պահպանվել են նաև 2008թ. ընթացքում:

Ադրբեջանի և Իսրայելի միջև էներգակիրների ոլորտում տնտեսական համագործակցությունը նոր որակ ձեռք բերեց Իսրայելի ենթակառուցվածքների նախարար Բենիամին Բեն-Էլիեզերի Բաքու կատարած երկրորդ՝ 2008թ. այցելությունից հետո: Մոսկվայի, Անկարայի և Բաքվի հետ իրարահաջորդ բանակցություններից հետո Բեն-Էլիեզերը, հիշեցնելով, որ Իսրայելի կողմից ներմուծվող էներգակիրների 45%-ը ադրբեջանական ծագում ունի, հայտարարեց. «Այժմ մենք աշխատում ենք ադրբեջանական գազը Իսրայել տեղափոխելու երկարաժամկետ՝ մոտ 20-30 տարվա տևողությամբ ծրագրի նախագծի վրա: Ներկա պահին քննարկվում են ծրագրի մանրամասները»: Համաձայն այդ ծրագրի՝ Իսրայելը մտադիր է առաջիկա 10 տարվա ընթացքում Ադրբեջանից ձեռք բերել 12 մլրդ մ^3 գազ: Ծրագրի կարևորագույն բաղադրիչը Միջերկրական ծովի հատակով նոր բազմաֆունկցիոնալ խողովակաշարի *(Mediterranean Pipeline Project: Medstream)* կառուցումն է Թուրքիայից դեպի Իսրայել, որը նախատեսվելու է նավթի, գազի և ջրի տեղափոխման համար[1]: Խողովակաշարին զուգահեռ կանցնեն նաև էլեկտրահաղորդակցման և բազմակաբելային կապի գծեր: Ծրագրի տեխնիկատնտեսական փորձաքննությունը կտևի մոտ 10 ամիս, որի արժեքը կկազմի մոտ 8 մլն եվրո: Դրանից հետո նոր կիրականացվի խողովակաշարի կառուցումը, որը կտևի մոտ երեք տարի: Նախատեսվում է խողովակաշարի տարանցիկ հզորությունը հասցնել տարեկան մինչև 40 մլն տոննայի: Ինչպես հայտնի է, ադրբեջանական էներգակիրները

[1] Վերոհիշյալ խողովակաշարի գործարկմամբ հետաքրքրվում են նաև Հնդկաստանն ու Չինաստանը՝ որպես ռուսական և հատկապես ադրբեջանական էներգակիրները Կենտրոնական Ասիա ներմուծելու այլընտրանքային ճանապարհ:

Թուրքիա են հասնում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի միջոցով: Նոր խողովակաշարով, որն ունենալու է մոտ 400 կմ երկարություն, նախատեսվում է Ջեյհանը Միջերկրական ծովով միացնել իսրայելական Աշքելոն նավահանգստային քաղաքին: Իսրայելը պատրաստվում է ադրբեջանական գազի ներմուծումն սկսել արդեն 2012թ.: Բանակցությունների ավարտին Բաքվում Բեն-Էլիեզերը հայտարարեց, որ «Ադրբեջանն ու Իսրայելը թեև փոքրիկ, բայց շատ հզոր երկրներ են»:

2008թ. հուլիսին Բաքվում կազմակերպվեց ադրբեջանա-իսրայելական բիզնես ֆորում, որին մասնակցեցին շինարարական աշխատանքներ իրականացնող իսրայելական ավելի քան 50 ընկերություններ: Ֆորումը կազմակերպվել էր Ադրբեջանում Իսրայելի դեսպանատան, «Իսրայելի ադրբեջանցիների կոնգրեսի» և Ադրբեջանի տնտեսական զարգացման նախարարության ջանքերով, որի նպատակը երկու երկրների գործարար շրջանակների միջև երկխոսության խթանումն էր և մասնավորապես իսրայելական կազմակերպությունների համար Ադրբեջանում գործունեության ծավալման նպատակով տեղեկատվական դաշտի ու համապատասխան հզորությունների ապահովումը: Մասնավորապես՝ ֆորումի ժամանակ Ադրբեջանի կառավարությունը հայտարարեց 3,5 մլրդ դոլար ծավալով շինարարական աշխատանքների մասին և իսրայելական ընկերություններին հրավիրեց ակտիվորեն մասնակցել վերոհիշյալ շինարարական ծրագրերի մրցույթներին:

Ինչ վերաբերում է երկու երկրների միջև ապրանքաշրջանառությանը, ապա համաձայն Ադրբեջանի մաքսային ծառայության տվյալների՝ 2007թ. Իսրայելից Ադրբեջան են ներմուծվել մոտ 80 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ապրանքներ, իսկ Ադրբեջանից Իսրայել արտահանման ծավալը կազմել է մոտ 1,5 մլրդ դոլար: Հասկանալի է, որ այդ ծավալների առյուծի բաժինը կազմում են ադրբեջանական էներգակիրները: 2008թ. այդ նույն ցուցանիշները կազմել են՝ 130 մլն դոլարի ներմուծում Ադրբեջան և 3,5 մլրդ դոլարի արտահանում Ադրբեջանից:

2007թ. Ադրբեջանի արտաքին տնտեսական գործընկերների շարքում արտահանման ծավալներով Իսրայելը զբաղեցրել է երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո՝ շրջանցելով նաև Թուրքիային և Ռուսաստանին: Իսրայելական վերլուծական աղբյուրները տնտեսական ցուցանիշները գնահատելիս գոհունակությամբ նշում են, որ այդ ցանկում Ադրբեջանի հետ ավելի քան 600 կմ սահման ունեցող Իրանի Իսլամական Հանրապետությունը զբաղեցնում է ընդամենը 6-րդ տեղը: Այս հանգամանքն Իսրայելում գնահատվում է որպես Ադրբեջանի հուսալի գործընկերության ցուցանիշ:

Իսրայել-Ադրբեջան ռազմավարական գործընկերության ճանապարհին լուրջ ուշադրության է արժանի հատկապես ռազմական բնագավառում տեղի

ունեցած համագործակցությունը: Այսպես՝ վերջերս՝ 2008թ. սեպտեմբերին, երկու երկրների կառավարությունների միջև ստորագրվեց պայմանագիր Ադրբեջանի զինված ուժերին իսրայելական արտադրության ռազմամթերքով և ռազմական տեխնիկայով մատակարարումների մասին: Պայմանագրի իրական արժեքը չի նշվում, սակայն իսրայելական մամուլը խոսում է մի քանի հարյուր միլիոն դոլարի կարգի հասնող գումարների մասին: Մասնավորապես՝ ադրբեջանական բանակին կմատակարարվեն ՏԱՐ-21 «Տավոր» ավտոմատներ, «Սոլթամ» հաուբիցային և հրթիռահրետանային համակարգեր իրենց համապատասխան զինամթերքների մեծ խմբաքանակներով, «Թադիրան» կապի համակարգեր և այլն: Այդ կապակցությամբ իսրայելական հեղինակավոր «Հաարեց» թերթը գրեց, որ այս ամենը վկայում է Ադրբեջանի հետ ռազմաստրատեգիական լուրջ դաշինքի մասին: Թերթը նշում էր, որ ռազմական բնագավառում մատակարարումները նոր երևույթ չեն, և Իսրայելը Ադրբեջանին զենք մատակարարել է նաև Ղարաբաղյան պատերազմի տարիներին: Իսկ հոկտեմբերի 2-ին *Day.az-ին* տված հարցազրույցում Ի.Շագալը դա համարեց շատ բնական գործընթաց և վստահություն հայտնեց, որ այդ զենքը «չար» նպատակներով չի օգտագործվի: Ռազմական բնագավառում տեղի ունեցած վերոհիշյալ գործարքին անդրադարձան նաև հայկական կայքերը *(Panarmenian, Armenianow):*

Գազայի պատերազմը՝ որպես Իսրայել-Ադրբեջան փոխհարաբերությունների փորձաքար: Որքանո՞վ է Ադրբեջանը հուսալի գործընկեր

Արդյո՞ք ամեն ինչ հարթ է ընթացել երկու երկրների փոխհարաբերությունների ճանապարհին: Այդ ճանապարհին իսկական փորձաքար հանդիսացավ վերջերս տարածաշրջանում տեղի ունեցած Գազայի պատերազմը: Վերլուծելով ԱՊՀ երկրների վերաբերմունքը Գազայում տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ՝ Իսրայելի քաղաքական և վերլուծական շրջանակներն ինչ-որ տեղ նաև զարմանքով պարզեցին, որ այս իրադարձությունների նկատմամբ ամենածայրահեղ հակաիսրայելական դիրքորոշումը հանդես է բերվել Ադրբեջանի կողմից: Ուսումնասիրելով ԱՊՀ երկրների վերաբերմունքը Գազայում տեղի ունեցող իրադարձություններին՝ Իսրայելում հանգել են այն եզրակացության, որ Ռուսաստանը չնայած ներկայացնում է, թե հանդես է բերում հավասարակշռված մոտեցում վերոհիշյալ խնդրին, սակայն վերջինիս դիրքորոշումն իրականում ավելի շատ պաղեստինամետ բնույթ ունի: Ըստ իսրայելական մամուլի և վերլուծական աղբյուրների՝ ամենահավասարակշռված մոտեցումը հանդես է բերվել միայն Բելառուսի կողմից, որն իր պաշտոնական հայտարարության մեջ նշել է նաև Իսրայելի տված զոհերի մա-

սին, մինչդեռ Ուկրաինայի, Հայաստանի և Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշումներում չկա որևէ խոսք Իսրայելի կրած զոհերի և կորուստների մասին: Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության ԱԳՆ հայտարարությանը՝ իսրայելական մամուլն առանց մեկնաբանությունների նշում է, որ հայ դիվանագետները «խոր մտահոգությամբ» հետևում են «Գազայի հատվածում տեղի ունեցող իրադարձություններին, որի ընթացքում արդեն զոհվել և վիրավորվել են հարյուրավոր մարդիկ»:

Իսրայելական մամուլի և քաղաքական մեկնաբանների կողմից, ընդ որում՝ շատերի համար անսպասելիորեն, ռազմավարական գործընկերոջ համարում ունեցող Ադրբեջանի դիրքորոշումը գնահատվեց խիստ միակողմանի, մինչդեռ այդ երկիրը նույնիսկ Իրանի հետ հակամարտության հարցում համարվում էր Իսրայելի չբացահայտված պոտենցիալ դաշնակիցը:

Ադրբեջանի իշխանությունները Գազայում տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ երկու անգամ հնչեցրին իրենց պաշտոնական տեսակետները: Դեկտեմբերի 29-ին Ադրբեջանի նախագահի աշխատակազմի հասարակական-քաղաքական բաժնի ղեկավար Ալի Հասանովը միակողմանիորեն դատապարտեց Իսրայելի գործողությունները: Վերջինիս հայտարարությունը չէր պարունակում որևէ անդրադարձ Իսրայելի կրած զոհերի և Գազայի օպերացիայի սկզբնապատճառների մասին: Չկար նաև որևէ քննադատություն՝ ուղղված ՀԱՄԱՍ-ին: Հունվարի 6-ին Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության մամլո ծառայությունը նույնպես դատապարտեց ՑԱԽԱԼ-ի[1] գործողությունները Գազայում՝ հանդես գալով ի պաշտպանություն Պաղեստինի պետականության: Ընդ որում՝ սա առաջին դեպքը չէ, երբ պաշտոնական Բաքուն արաբա-իսրայելյան հակամարտության կապակցությամբ Իսրայելի նկատմամբ հանդես է բերում գրեթե թշնամանքի հասնող, ոչ բարեկամական կեցվածք: Այսպես՝ մոտավորապես մեկ տարի առաջ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդյարովը Երուսաղեմի հին քաղաքի տաճարի բարձունք կոչվող հատվածում իրականացվող հնագիտական պեղումները համարեց «ագրեսիա մուսուլմանական սրբությունների նկատմամբ»: Նա կոչ արեց ՄԱԿ-ին «անհապաղ միջոցներ ձեռնարկել Երուսաղեմի պատմական հարստությունները պաշտպանության տակ վերցնելու կապակցությամբ»:

Հունվարի 5-ին Բաքվի Նարդարան կոչվող արվարձանում տեղի ունեցավ հերթական հակահրայելական հանրահավաքը, որին մասնակցում էր մի քանի հազար մարդ: Հանրահավաքի հիմնական կարգախոսներն էին՝ «Մահ ԱՄՆ-ին և Իսրայելին», «Մահ ամերիկյան սիոնիզմին», «Իսրայելն ու ԱՄՆ-ը օկուպանտներ և տեռորիստներ են» և այլն: Հանրահավաքի ժամանակ

[1] Իսրայելի պաշտպանության բանակը:

այրվեցին Ջորջ Բուշի և Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերթի խրտվիլակները, ինչպես նաև երկու երկրների պետական դրոշները: Հանրահավաքի մասնակիցները կոչով դիմեցին Ադրբեջանի իշխանություններին՝ խզել հարաբերությունները «սիոնիստական ռեժիմի» հետ:

Սա եզակի երևույթ չէ Ադրբեջանի ներքաղաքական կյանքում: Բաքվի Նարդարան արվարձանը դարձել է Ադրբեջանի իսլամիստների և հակաիսրայելական հոսանքների թատերաբեմը: Վերջին 2-3 տարվա ընթացքում հակաիսրայելական ու հակասեմիթական բովանդակության հավաքույթներն ու ակցիաներն այստեղ թեև ոչ մեծաքանակ, բայց պարբերական բնույթ են կրում: Վերոհիշյալ ակցիաների հիմնական կազմակերպիչն ու ոգեկոչողն Ադրբեջանի իսլամական կուսակցությունն է: Ընդ որում՝ հետաքրքրականն այն է, որ գրեթե միշտ, նմանօրինակ ցանկացած ակցիայից կամ միջոցառումից հետո իսրայելական մամուլն ում ասես մեղադրել է (վահաբականներին, իսլամական ջիհադին), բացի Ադրբեջանից: Իհարկե, որպես կանոն, այդօրինակ ակցիաներն առաջին հերթին, անկախ հիմնավորվածության աստիճանից, համարվում են պաշտոնական Թեհրանի կողմից հրահրված սադրանք՝ ուղղված Իսրայելի դեմ:

Գազայի պատերազմի հետևանքով տեղի ունեցած իրադարձությունների այս ողջ շղթան որոշակի տարակուսանք առաջացրեց Իսրայելի քաղաքագիտական և վերլուծական շրջանակներում: «Ադրբեջանը հաշվենկատ խաղ է վարում», «Բաքուն բոլորից խորամանկ դուրս եկավ», «Ադրբեջանցիներն այրում են Օլմերթին», «Ադրբեջանը բացահայտ կիսում է արաբական տեսակետները»՝ իսրայելական մամուլը ողողվեց այսպիսի վերտառությամբ հոդվածներով: Եթե նախկինում իսրայելական մամուլն ու քաղաքական-վերլուծական շրջանակներն Ադրբեջանի նկատմամբ ավելի լոյալ վերաբերմունք ունեին՝ այդ երկրում տեղի ունեցած ցանկացած հակաիսրայելական երևույթի համար մեղադրելով բացառապես Իրանին, ապա Գազայի պատերազմից հետո վերջին 3-4 ամիսներին նրանք սկսել են մի փոքր ավելի իրատեսական մոտեցումներ հանդես բերել իրենց գնահատականներում: Իսրայելում շատ լավ հասկանում են, որ կրիտիկական իրավիճակներում տեղի իսլամիստների և ընդհանրապես ընդդիմադիր ուժերի հանդեպ պաշտոնական Բաքուն կարող է գործել և շատ կոշտ ու դաժան մեթոդներով: Ադրբեջանի ուժային կառույցների գործողությունները նման իրավիճակներում հայտնի են նաև Իսրայելում: «Այդ դեպքում ինչո՞ւ Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշման մեջ չկա որևէ խոսք պաղեստինյան իսլամիստների մասին: Արդյո՞ք սա երկերեսանիություն չէ…»,- հարց են տալիս իսրայելական լրատվամիջոցները:

Արևելյան երկերեսանիություն, որը պետք է հասկանալ…

Այս և մյուս բոլոր հարցերի պատասխանները փորձեց տալ Իսրայելի թուրք-ադրբեջանական բավական ուժեղ լոբբին: Ադրբեջանի իսլամիստների հակահրեական վարքագիծը կրկին ներկայացվեց որպես իրանական ուղղորդված միջամտության արդյունք, իսկ ադրբեջանական իշխանությունների կեցվածքը՝ որպես խիստ «հասկանալի» վարքագիծ: Հունվարի 7-ին իսրայելյան մամուլում բավական ծավալուն հարցազրույցով հանդես եկավ անկրկնելի Իոսեֆ Շագալը, որի առանձին հիմնավորումներ ոչ այնքան հեգնանք, որքան ծիծաղ են առաջացնում. «Ավաղ, սա մուսուլմանական արևելքն է, որտեղ ընդունված չէ աչք փակել հավատակից եղբայրների կողմից թափվող արյան վրա, եթե նույնիսկ այդ եղբայրները քո հակառակորդներն են: Առավել ևս պաշտպանել նրանց, ովքեր իրենց հավատակից եղբայրների շրջանում մահ և ավերածություններ են սփռում… Իսկ այն, ինչ դիվանագիտական լեզվով կոչվում է «պետության պաշտոնական տեսակետ», ռեալ իրականության մեջ ոչ միշտ է համապատասխանում իրական տեսակետներին…»:

Ուշագրավ են Շագալի պարզաբանումները ***«երկերեսանիության»*** հետ կապված. «Երկերեսանիությո՞ւն է դա, թե՞ ոչ (Ադրբեջանի վարքագիծը), գուցե և այդպես է, բայց դա արևելյան երկերեսանիություն է, բավական թափանցիկ, այն հաշվարկով, որ դիմացինդ քեզ կհասկանա»:

Շագալը «հիմնավորում է», որ «…տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական իրադրության և բարդ, հակասական շահերի առկայության պայմաններում այնքան էլ նպատակահարմար չէ բարձրաձայն ասել այն, ինչ իրականում մտածում ես, համակրանքը պետք է թողնել երկրորդ պլանում»:

Ըստ Շագալի՝ «Ադրբեջանում ոչ միայն լավ են պատկերացնում մերձավորարևելյան հակամարտության նրբությունները, այլև այն զգում են «մենթալ», նրանք շատ լավ հասկանում են Իսրայելի գործողությունների իրական դրդապատճառները, շատ լավ հասկանում են նաև, որ ՀԱՄԱՍ-ը արյունարբու կազմակերպություն է: Սակայն երբեք հրապարակայնորեն չեն կիսվի իրենց տեսակետներով ու տպավորություններով»:

«Պաշտոնական Բաքվի ցանկացած հրապարակային քայլ, որն ի պաշտպանություն ՀԱՄԱՍ-ի չէ, միարժեքորեն կթուլացնի Ադրբեջանի դիրքերը իսլամական աշխարհում: Ահա և Ձեզ պաշտոնական դիրքորոշման բացատրությունը»,- վիրավորված տոնով ամփոփում է Շագալը, մեղադրելով իսրայելցի այն լրագրողներին ու քաղաքագետներին, ովքեր այսքան բանը «չեն հասկանում»:

Անդրադառնալով այդ օրերին Իսրայելում շրջանառվող այն տեսակե-

տին, որ Հայաստանը Գազայի պատերազմի կապակցությամբ ավելի կշռադատված դիրքորոշում հանդես բերեց, քան Ադրբեջանը, Շագալը հակադարձեց՝ ՀՀ ԱԳՆ հայտարարությունն անվանելով ոչ թե կշռադատված, այլ պարզապես չեզոք: Միաժամանակ, հղում անելով Ռուսաստանի հայերի միության «Երկրամաս» թերթի տեղեկատվական կայքում հրապարակված՝ թեմային առնչվող վերլուծական նյութերին, Շագալը գալիս է այն հետևության, որ Հայաստանն իրականում այնքան էլ անկողմնակալ չէ այս հարցում՝ «մոռանալով», որ ռուսաստանյան «Երկրամաս» թերթի տեսակետները որևէ օրգանական առնչություն չունեն Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշման հետ:

Շագալը հենց իսրայելյան իսկ աղբյուրների վկայությամբ, իր խորհրդարանական գործունեության ընթացքում ոչնչով աչքի չի ընկել որպես Կնեսետի պատգամավոր: Չի մասնակցել և չի ներգրավվել որևէ ներքաղաքական գործընթացում, հանդես չի եկել որևէ նախաձեռնությամբ: Վերջինիս ողջ գործունեությունը սահմանափակվել է բացառապես Ադրբեջանին վերաբերող և հանուն Ադրբեջանի իրականացվող գործունեությամբ: Բացի Ադրբեջանից, չկա մեկ այլ ոլորտ (համենայնդեպս, մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում մեզ չհաջողվեց հայտնաբերել), որտեղ վերոհիշյալ անձնավորությունը որպես պատգամավոր իրականացրած լինի որևէ լուրջ գործունեություն:

Տարեսկզբի իր հարցազրույցներից մեկում, վերոհիշյալ հանգամանքն ամենևին չժխտելով, ՄՏԻ կուսակցության նախագահ Ա.Լիբերմանը Շագալի գործունեությունն արդարացրեց լոկ նրանով, որ «…համենայնդեպս, Ադրբեջանի հետ հարաբերությունների հաստատման ուղղությամբ տարվող աշխատանքները ևս կարևոր նշանակություն ունեն»:

Կնեսետի նախորդ գումարման պատգամավորների շրջանում կեսկատակ, կեսլուրջ տարածված է եղել մի տեսակետ, ըստ որի՝ 120 հոգիանոց Կնեսետում 119 տեղ ունի Իսրայելը և մեկ տեղ Ադրբեջանը:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում որոշ տվյալներ հիմք են տալիս ենթադրելու, որ ՄՏԻ կուսակցության շարքերում էլ այնքան գոհ չեն եղել նման իրավիճակից: Հավանաբար նաև այս գործոնով էր պայմանավորված, որ 2009թ. փետրվարին կայացած խորհրդարանական ընտրություններում Իոսեֆ Շագալն այլևս ընդգրկված չէր ՄՏԻ կուսակցության ցուցակներում: Թողնելով Կնեսետը՝ նա խոստացել է զբաղվել քաղաքական ժուռնալիստիկայով և հանուն Ադրբեջանի պայքարել այդ բնագավառում:

Հետևություններ: Ինչպիսի՞ զարգացումներ են սպասվում ապագայում

Արդյո՞ք կարելի է ենթադրել, որ Իսրայել-Ադրբեջան փոխհարաբերություններում որոշակի խզում կամ ճեղքվածք է առաջացել: Գազայի իրադարձությունների առնչությամբ ադրբեջանական իշխանությունների մեկ-երկու հակաիսրայելական հայտարարությունների արդյունքում հանգել հետևությունների, որ երկու երկրների փոխհարաբերություններում կարող է արտահայտված լարվածություն առաջանալ՝ իհարկե, միամտություն է: Բայց համենայնդեպս, Իսրայելում արդեն հարցեր են ծագում Ադրբեջանի հուսալի գործընկերության առնչությամբ:

Այս ամենը շատ լավ գիտակցելով հանդերձ, այնուամենայնիվ, Իսրայելի քաղաքական շրջանակները կարծես թե հակված չեն ոչ միայն սառեցնել, այլև նունիսկ թուլացնել Ադրբեջանի հետ ռազմավարական գործընկերությունը: Գազայի պատերազմական գործողությունների ընթացքում իսրայելական մամուլի և քաղաքական դաշտի առաջին բուռն արձագանքներն անցնելուց հետո, վերջին 1-2 ամիսների ընթացքում Իսրայելում կրկին սկսել են կարծիքներ ու տեսակետներ շրջանառվել, իսկ մամուլում՝ հոդվածներ և վերլուծականներ հայտնվել հօգուտ Իսրայել-Ադրբեջան ռազմավարական գործընկերության:

Ադրբեջանը ներկայացվում է որպես աշխարհիկ պետություն, որտեղ քաղաքական էլիտան իրեն համարում է Քեմալ Աթաթուրքի գործի հավատարիմ շարունակողը, այն դեպքում, երբ Թուրքիան, որն ավելի շատ է կոչված այդ գաղափարների իրականացմանը, օր օրի իսլամականացվում է: Ադրբեջանի կեցվածքն արդարացվում է նրանով, որ վերջինիս հյուսիսից «սեղմում» է Ռուսաստանը, հարավից մշտական շանտաժի ու լարվածության մեջ է պահում Իրանը, Հայաստանի ու Ղարաբաղյան հակամարտության մասին խոսք անգամ չկա: Դե, իսկ արևմուտքից, որի կողմից Ադրբեջանը կարիք ունի պաշտպանության, պարբերաբար «ապտակներ» է ստանում մարդու իրավունքների ու ժողովրդավարության նորմերի խախտման պատճառաբանությամբ: Այնուհետև հիմնավորվում է, որ Իսրայելի արմատական շահերից է բխում Ադրբեջանի հետ համենայնդեպս կայուն փոխհարաբերությունների պահպանումն ու համագործակցության զարգացումը: Ադբեջանը շեշտվում է նաև որպես անփոխարինելի պլացդարմ իսրայելյան հետախուզական և հատուկ ծառայությունների գործունեության համար:

«Որքանո՞վ է Ադրբեջանը հուսալի ռազմավարական գործընկեր» հարցը ստիպեց արձագանքել նաև Իսրայելի արտաքին քաղաքական գերատեսչությանը: Իսրայելի դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները, ովքեր զբաղվում են նախկին ԽՍՀՄ երկրներով, կարծում են, որ Գազայի իրադար-

ձությունների հետևանքով Բաքվի անհանդուրժողական կեցվածքը այսպես կոչված «մուսուլմանական համերաշխությանն» ուղղված հարկադրական քայլ է և ամենևին չի արտահայտում արևմտամետ կողմնորոշում ունեցող Ադրբեջանի ու նրա նախագահ Ի.Ալիևի իրական տեսակետները: «Արաբա-իսրայելյան հակամարտության շուրջ գնահատականներ տալիս Ադրբեջանը ստիպված է հաշվի առնել մի շարք ներքաղաքական ու տարածաշրջանային գործոններ: Առաջին հերթին դրանք ոչ այնքան դյուրին փոխհարաբերություններն են հարևան Իրանի հետ, որն ունի Ադրբեջանի ներքաղաքական կյանքին միջամտելու որոշակի լծակներ»,- պարզաբանում է Իսրայելի ԱԳՆ ներկայացուցիչներից մեկը,- «…միաժամանակ Բաքուն ձգտում է հավասար գործընկերային հարաբերություններ պահպանել Պարսից ծոցի արաբական միապետությունների հետ, ինչպես նաև ինտեգրվել իսլամական միջազգային կառույցներում՝ հատկապես տնտեսական ուղղվածության: Բայց գործնականում, թեկուզ և առանց բարձրաձայնելու, այս երկիրն իրապես Իսրայելի ռազմավարական գործընկերն է ինչպես անվտանգության, այնպես էլ առևտրատնտեսական ոլորտներում»: Ակամայից հանգում ես մի «միամիտ» հետևության, թե արդյոք Ադրբեջանն Իսրայելի դիվանագիտական մարմինների հետ նախապես «համաձայնության չի գալիս» հակահիսրայելական որևէ ակցիայից կամ հայտարարությունից առաջ:

Շատ լավ հասկանալով, որ Իսրայելի հետ համագործակցության թուլացումը բոլորովին չի բխում իր շահերից, Ադրբեջանն ինքն էլ ջանքեր է գործադրում կորցրածը հետ բերելու համար: Գազայի պատերազմի օրերին Ադրբեջանը գնաց թեև խորամանկ ու վտանգավոր, բայց իր համար արդարացված խաղի: Վերջինս այդ պահն օգտագործեց իսլամական աշխարհում հեղինակությունն ամրապնդելու և մուսուլմանական համերաշխություն դրսևորելու համար: Իսկ հիմա, երբ արդեն ամեն ինչ թիկունքում է, գործի դնելով «արևելյան երկերեսանիությունը», հարկավոր է ամեն ինչ անել Իսրայելի հետ փոխհարաբերություններում դրությունը շտկելու համար:

Արդեն մի քանի ամիս է, ինչ նախապատրաստվում է Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի այցը Ադրբեջան, Ղազախստան և Ուզբեկստան: Եթե 2-3 ամիս առաջ ադրբեջանական իշխանությունները հասկացնում էին, որ այնքան էլ խանդավառված չեն այդ այցելությամբ և նույնիսկ ձգձգում էին վերջնական համաձայնություն տալ այդ կապակցությամբ, ակնարկելով՝ որ Պերեսին կընդունեն ընդամենը մի քանի ժամով, այն էլ եթե իր շրջայցի ընթացքում մինչ Ադրբեջան ժամանելը վերջինս այցելած լինի նվազագույնը գոնե երկու իսլամական երկիր, ապա բոլորովին վերջերս Ադրբեջանը ոչ միայն տվեց իր համաձայնությունը, այլև պատրաստակամություն հայտնեց այցը կազմակեր-

պել ամենաբարձր մակարդակով: Այդ մասին հայտարարեց անձամբ ինքը՝ Իլհամ Ալիևը, մայիսի 6-ին Պրահայում Իսրայելի արտգործնախարար Ա.Լիբերմանի հետ տեղի ունեցած՝ չնախատեսված, ու նախապես չպլանավորված հանդիպման ժամանակ[1]: Ինչ խոսք, պատմությունը վաղուց արդեն սովորեցնում է մեզ, որ թուրք-ադրբեջանական երկերեսանիությունն աշխարհում խոր ըմբռնողականության է արժանանում:

Իսրայել-Ադրբեջան փոխհարաբերությունների հետ կապված մի փոքրիկ դիտարկում ևս. այդ փոխհարաբերությունների ասպեկտում բավական մեծ տեսակարար կշիռ է բաժին ընկնում Իսրայել-Ադրբեջան էներգետիկ ոլորտում ծավալվող համագործակցությանը: Եվ եթե ճիշտ լինեն Իսրայելի մամուլում վերջերս տեղ գտած հրապարակումները Հայֆա քաղաքից մոտ 90 կմ հեռավորության վրա, Միջերկրական ծովում՝ Իսրայելին պատկանող տարածքային ջրերում հայտնաբերված բնական գազի խոշոր պաշարների մասին, ապա ըստ Իսրայելի էներգետիկայի ոլորտի փորձագետների՝ դրանով իսկ խաչ է քաշվում Ռուսաստանի և Ադրբեջանի հետ էներգետիկ համագործակցության հեռանկարների վրա: Անշուշտ, այս պարագայում Ադրբեջանի կշիռը որպես ռազմավարական գործընկերոջ՝ բավական կնվազի:

* * *

Ի՞նչ ապագա է սպասվում Իսրայել-Ադրբեջան փոխհարաբերություններին՝ դժվար է միանշանակ գնահատականներ տալ, առավել ևս՝ կանխատեսումներ անել: Երկու երկրների միջև ռազմավարական գործընկերությունն, անշուշտ, կպահպանվի: Այդ երկրների երկկողմ փոխհարաբերություններն, իրենց զարգացման ներքին տրամաբանության հետ մեկտեղ, պայմանավորված են նաև տարածաշրջանային և աշխարհաքաղաքական բազմաթիվ գործոններով: Կախված այդ գործոններից՝ վերոհիշյալ երկու երկրների փոխհարաբերություններում կարող են որոշակի՝ ընդհուպ արմատական տեղաշարժեր առաջանալ: Այս թեման մշտական ուսումնասիրությունների և հաճախակի անդրադարձների կարիք ունի, ինչին մենք կրկին կանդրադառնանք առաջիկայում:

Հայաստան-Իսրայել փոխհարաբերությունների կառուցումը, կարծում ենք, պայմանավորված չէ Ադրբեջան-Իսրայել փոխհարաբերություններով, բայց այդ փոխհարաբերությունների ուսումնասիրությունը, անշուշտ, կարող է օգտակար լինել առաջիկայում՝ Հայաստանի և Իսրայելի միջև երկկողմ փոխհարաբերությունների զարգացման և խորացման գործընթացին:

[1] Ալիև-Լիբերման վերոհիշյալ չնախատեսված հանդիպմանը մեկ օր առաջ նախորդել էր Կնեսետում Հայոց ցեղասպանության հարցի քննարկումը, որի արդյունքում հարցը Կնեսետի արտաքին հարաբերությունների և անվտանգության հանձնաժողովից տեղափոխվեց կրթության հանձնաժողով: Չենք բացառում, որ այս հանգամանքը ևս կարող էր նպաստել այդ չնախատեսված հանդիպման կայացմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՎԵԿՏՈՐԸ

Սերգեյ Մինասյան

Հազիվ թե անկախ Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականության որևէ հարց (բացի, թերևս, Ղարաբաղյան հակամարտությունից և 2008թ. մարտյան իրադարձություններից) հայ իրականության մեջ և սփյուռքում այնքան լայն ռեզոնանս ունենար, որքան վերջին զարգացումները հայ-թուրքական հարաբերություններում և 2009թ. ապրիլի 22-ին Հայաստանի, Թուրքիայի ու Շվեյցարիայի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների ստորագրած հայտարարությունը Երևանի և Անկարայի հարաբերությունների կարգավորմանն ուղղված, այսպես կոչված, «ճանապարհային քարտեզի» վերաբերյալ: Գնահատականները տատանվում էին խիստ ժխտողականից ու բացասականից մինչև չափազանց լավատեսականն ու էյֆորիայով ավարտվողները: Սակայն ընդհանուր առմամբ ավելի շատ գերակշռում էին բացասական տրամադրությունները. հայ իրականությունը և քաղաքական էլիտան (իսկ սփյուռքը՝ առավել ևս) այս քայլը քիչ մնաց ազգային շահերի նկատմամբ դավաճանություն համարեին: Նրանց անգամ ամենաչափավոր մեղադրանքներն այն մասին էին, թե Հայաստանն իբր թուրքերին ոչնչով չարդարացված մեծ զիջումներ է արել՝ փոխարենը էական ոչինչ չստանալով:

Մյուս կողմից՝ հայկական իշխանությունների դիրքորոշման նկատմամբ այսպես կոչված լավատեսների կամ «դատապաշտպանների» շրջանում միանգամայն այլ տեսակետ էր իշխում. Երևանը ոչ մի լուրջ զիջում չի արել թուրքական կողմի հետ բանակցություններում, հատկապես կենսականորեն կարևոր՝ Ղարաբաղի հիմնախնդրի հարցում՝ փոխարենը համաձայնելով միայն այն բանի հետ, ինչն իրականում արդեն այդպես է, մասնավորապես՝ երկու երկրների ներկայիս սահմանների ամրագրմանն ու այդ հարցի շուրջ ավելի վաղ ստորագրված միջազգային պարտավորությունների և պայմանագրերի հաստատմանը: Ինչ վերաբերում է ցեղասպանության ճանաչման խնդրին և պատմաբանների հայ-թուրքական հանձնաժողովի ստեղծմանը, ապա նրանք հավաստիացնում են, որ 20-րդ դարասկզբին Օսմանյան Թուրքիայում կատարված իրադարձությունների պատմական անվիճելիությունից ելնելով՝ սույն հանձնաժողովի գործունեությունը որևէ վնաս չի հասցնի և շահավետ հարթակ կհանդիսանա թուրք հասարակության լայն շրջանակներին 1915թ. սարսափելի իրադարձությունների և հայերի դեմ իրականացված ցեղասպանության մասին տեղեկաց-

նելու համար, ընդ որում՝ հենց թուրք պատմաբանների օգնությամբ:

Հատկանշական է, որ եթե հայ հասարակության մեջ հայ-թուրքական մերձեցման դիսկուրսը ոչ միանշանակ գնահատականներ է ստացել և թեժ վեճերի պատճառ հանդիսացել, ապա Ադրբեջանում, ընդհակառակը, Հայաստանի և Թուրքիայի միջև տեղի ունեցող ամեն ինչի գնահատականները խիստ միանշանակ ու հստակ էին: Ընդ որում՝ դրանք խիստ բացասական էին, իսկ երբեմն էլ՝ խուճապային ու հիստերիկ: Բնականաբար՝ հարց է առաջ գալիս. գուցե Բաքուն դրա համար իսկապես լուրջ հիմքե՞ր ունի:

Պետք է հաշվի առնել, որ Ադրբեջանում, 1990-ական թթ. սկսած՝ Երևանի ու Ստեփանակերտի հետ նրա դիմակայության ընթացքում, Ղարաբաղյան հակամարտության ակտիվ փուլի բոլոր տարիներին, հույս էին փայփայում, թե էներգառեսուրսների վաճառքից ակնկալվող հնարավոր գերեկամուտները Բաքվին թույլ կտան ժամանակի ընթացքում առաջ անցնել հայկական կողմերից սպառազինությունների մրցավազքի ոլորտում և Ղարաբաղը վերադարձնել ռազմական ուժով: Կամ էլ Հայաստանի շարունակվող տնտեսական շրջափակման միջոցով ստիպել Երևանին և Ստեփանակերտին գնալ միակողմանի զիջումների և խաղաղ ճանապարհով վերադարձնել Ղարաբաղը: Ադրբեջանի «ղարաբաղյան ռազմավարության» բաղադրիչներից մեկը Հայաստանի տնտեսական և հաղորդակցային «սեղմման» շարունակման գաղափարն էր ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Թուրքիայի կողմից՝ նրա բազմակողմանի շրջափակման միջոցով: Այս գաղափարը փաստորեն Ադրբեջանի «ղարաբաղյան ռազմավարության» անկյունաքարն էր, չնայած այն բանին, որ այդ ամբողջ ընթացքում նշված հայեցակարգն այդպես էլ չապացուցեց իր արդյունավետությունը, ինչի վկայությունն էր Հայաստանի երկնիշ տնտեսական բուռն աճը վերջին մի քանի տարիներին՝ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից «կիսաշրջափակման» պայմաններում: Այնուամենայնիվ, Բաքվում ընդհուպ մինչև վերջերս հավանաբար անկեղծորեն հավատում էին դրա հեռանկարայնությանը...

Այս իրավիճակը կայուն էր մնում և պահպանվեց ընդհուպ մինչև 2008թ. օգոստոսին Ռուսաստանի և Վրաստանի միջև Հնգօրյա պատերազմը, որը փոխեց հարավկովկասյան տարածաշրջանում ողջ քաղաքականությունը և նոր ստատուս քվո ստեղծեց ոչ միայն համատարածաշրջանային ձևաչափում, այլ նաև կոնկրետ Ղարաբաղյան հակամարտության շուրջ: Ղարաբաղի շուրջ նոր ստատուս քվոյի որոշիչ գործոն դարձավ նաև հայ-թուրքական հարաբերությունների կտրուկ ճեղքումը, որն սկսվեց 2008թ. օգոստոսյան ճգնաժամի հետ գրեթե միաժամանակ (և շատ բանով՝ որպես դրա հետևանք): Հայ-թուրքական «ջերմացման» նկատվող նշանները Թուրքիայի նախագահ Ա.Գյուլի՝ 2008թ. սեպտեմբերի 6-ի Երևան «ֆուտբոլային» այցելությունից հետո, ինչը սկզբունքորեն կարող է հանգեցնել լիարժեք դիվանագիտական հարաբերությունների հաստատման և սահմանների բացման, այսինքն՝ այլընտրանքային նոր հաղորդակցության Հայաստանի համար, վարկաբեկում են պաշտոնական Բաք-

վի՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանդեպ իրականացվող «սեղմման» քաղաքականության հայեցակարգային բաղադրիչը: Սա է հաստատում Ադրբեջանի ոչ համամասնական և պարզապես տագնապալի հակազդեցությունը հայ-թուրքական «ճանապարհային քարտեզին», ինչը հանգեցրել է ողջ պատմության ընթացքում Բաքվի և Անկարայի հարաբերությունների ամենաուժեղ ճգնաժամին: Անգամ Բաքվի և Անկարայի՝ դրան հաջորդած մայիսյան փոխադարձ «ռևերանսները» չկարողացան հանել բացասական նստվածքը երկկողմ հարաբերություններից և երկու երկրների հանրային գիտակցությունից: Եթե կուժը կոտրվում է, հավանաբար հնարավոր է այն սոսնձելով կրկին կպցնել, սակայն, միևնույն է, ճաքերը կմնան ընդմիշտ և տեսանելի կլինեն բոլորի համար, ինչպես տեղի ունեցավ ադրբեջանա-թուրքական հարաբերություններում՝ «ֆուտբոլային դիվանագիտության» գործընթացն սկսվելուց և այսպես կոչված «ճանապարհային քարտեզի» ի հայտ գալուց հետո: Ընդ որում՝ Անկարայի և Բաքվի հարաբերություններում ճգնաժամն առաջ եկավ ոչ միայն քաղաքական էլիտաների կամ իշխանական կառույցների մակարդակով. թուրքական իշխանությունների «դավաճանական պահվածքը» շատ ավելի սուր ընդունեց ադրբեջանական հանրությունը:

Միևնույն ժամանակ, միանգամայն պարզ է, որ չնայած Ղարաբաղյան հակամարտության խնդիրը դուրս է մղվում հայ-թուրքական մերձեցման ընդհանուր ձևաչափից, Անկարայի դիրքորոշումն այս հակամարտությունում հազիվ թե տեսանելի ապագայում կտրուկ փոփոխվի, իսկ Ղարաբաղյան հակամարտությունը հազիվ թե ամբողջովին բացառվի բուն Թուրքիայի արտաքին քաղաքական օրակարգից և ներքաղաքական դիսկուրսից: Ասվածի ցուցիչներից մեկն է ոչ այնքան 2009թ. ապրիլի 22-ին ստորագրված փաստաթղթի քննադատությունը ընդդիմադիր թուրքական ուժերի կողմից, որքան Թուրքիայի քաղաքական ղեկավարության հրապարակայնորեն հաստատվող հավաստիացումներն իբր համատեղված բանակցային գործընթացի մասին՝ հայ-թուրքական հարաբերություններում և Ղարաբաղյան կարգավորման հարցում: Թեև պետք է ենթադրել, որ «ճանապարհային քարտեզում» ոչ մի հիշատակում չկա այդ մասին, այնուամենայնիվ, թուրքական ղեկավարությունը հարկադրված է մշտապես հաստատել դա՝ ելնելով ներքաղաքական անհրաժեշտությունից: Նման օրինակներից մեկը, մեր կարծիքով, Թուրքիայի վարչապետ Էրդողանի՝ Ադրբեջան կատարած մայիսյան այցելության ժամանակ արած հայտարարություններն են:

Պետք է ընդունել նաև, որ Թուրքիայի շահերից չի բխում շտապել և զրկվել սահմանների բացման հարցում երկակի ու անորոշ դիրքորոշումն օգտագործելու հնարավորությունից ոչ միայն Հայաստանի, այլև Ադրբեջանի հետ երկխոսությունում: Օրինակ, ակնհայտ է, որ Հայաստանի հետ սահմանների բացման սպառնալիքը կարող է օգտագործվել Անկարայի կողմից որպես Ադրբեջանի վրա ճնշում բանեցնելու տարր կասպյան գազը Թուրքիայի

համար շահավետ պայմաններով փոխադրելու հարցում:

Այս ամենով հանդերձ, իհարկե, չի կարելի բացառել, որ հայ-թուրքական հարաբերություններում սկսված գործընթացը կանգ կառնի և սահմանները տեսանելի ապագայում այդպես էլ չեն բացվի, և լիարժեք հարաբերություններ էլ երկու երկրների միջև չեն հաստատվի: Միանգամայն հնարավոր է, որ Թուրքիան փորձի անգամ դուրս գալ այս գործընթացից, ավարտել այն կամ անվերջ ձգձգել: Թեև, ինչպես թվում է, Անկարայի համար ևս այնքան էլ իրատեսական չէ տորպեդահարել հայ-թուրքական գործընթացը՝ չնայած Բաքվի բոլոր կոչերին ու ներքաղաքական սահմանափակիչներին: Չէ՞ որ թուրք-հայկական մերձեցման հաջող իրականացումը կհանգեցնի միջազգային ասպարեզում Թուրքիայի հեղինակության և իմիջի կտրուկ բարձրացմանը: Մանավանդ որ հայ-թուրքական փոխհարաբերությունների ներկա փուլը միայն Երևանի և Անկարայի երկկողմ նախաձեռնությունը չէ: Դա նաև ԱՄՆ մի ինչ-որ աշխարհաքաղաքական նախագծի իրականացումն է: Ընդ որում՝ որքան էլ տարօրինակ է, ոչ միայն Բրյուսելի հավանությամբ, այլ նաև Մոսկվայի լուռ համաձայնությամբ: Հիշենք, որ Հայաստանի, Թուրքիայի և Շվեյցարիայի ԱԳՆ ղեկավարների հայտարարությունը ամերիկյան նախագահի խոսնակի կողմից հիշատակվում է որպես Բ.Օբամայի կարևորագույն նվաճումներից մեկը որպես նախագահ նրա առաջին հարյուր օրվա գործունեության մեջ: Այնպես որ՝ հազիվ թե Թուրքիան փորձի ամբողջությամբ հրաժարվել այդ գործընթացից, բայց, հավանաբար, եթե չդանդաղեցնի էլ, ապա այնքան էլ չի շտապեցնի այն:

Ուստի, թվում է, թե Հայաստանի այն փորձագետների և քաղաքական ուժերի չափից ավելի լավատեսությունը, ովքեր անհամբերությամբ սպասում են սահմանների շուտափույթ բացմանը, բոլորովին էլ արդարացված չէ: Ավելին, նման լավատեսության հրապարակային ցուցադրումը և էյֆորիկ հույսերը, թե Թուրքիայի հետ սահմանի բացումը կլուծի Հայաստանի բոլոր խնդիրները, կարող է նույնիսկ վտանգավոր լինել:

Չարդարացված լավատեսությունը և կտրվածությունն իրականությունից քաղաքականության մեջ միշտ լի են բացասական հետևանքներիով: Իսկ հայ-թուրքական հարաբերությունների հարցում, հաշվի առնելով հայտնի պատմական փորձն ու հնարավոր սպառնալիքները Հայաստանի ազգային անվտանգության համար՝ ավելի քան վտանգավոր են:

Բայց Հայաստանում կա նաև այլ տեսակետ, որը կարելի է անվանել «քաղաքական մանկամտություն», որն արտահայտվում է սեփական երկրի ուժերին չհավատալով կամ նույնիսկ «մեծավարի մեծ խաղեր» խաղալու վախով՝ գոնե տարածաշրջանային քաղաքականության մակարդակով: Այդ մոտեցման ամենածայրահեղ դրսևորումն են հայկական էլիտայի որոշ ներկայացուցիչների և հանրության երկյուղները Հայաստանի դեմ ինչ-որ «համաշխարհային դավադրությունից», որում հայ-թուրքական բանակցությունների ներկա փուլը դրա տարրերից մեկն է ընդամենը: Այս միտման

ներկայացուցիչների հետ երկխոսությունը, ասենք, «եթե Ադրբեջանում, որը պատերազմի մեջ է Հայաստանի հետ, այդքան վախենում և չեն ուզում հայ-թուրքական մերձեցումը, ուրեմն, դա, այնուամենայնիվ, շահավետ է Հայաստանի համար» տրամաբանությամբ, բոլորովին չի գործում, և նման փաստարկները նրանց կողմից ընդհանրապես չեն ընդունվում: Թերևս, այն պատճառով, որ թուրքական դիսկուրսը հայ հանրությունում միշտ ընկալվում է հիմնականում հուզական մակարդակով, այլ ոչ թե իրատեսորեն կամ քաղաքական նպատակահարմարության չափանիշներով: Այս ամենը շատ նման է այն բանին, որ ծնողները չեն թողնում երեխային փողոց գնալ հասակակիցների հետ խաղալու այն պատրվակով, թե «նրանք երեխային վատ բաներ կսովորեցնեն»: Ստացվում է, որ հայկական դիվանագիտությունը և արտաքին քաղաքականությունը, ըստ նրանց, երբեք չի մեծանա, և հայկական քաղաքական էլիտան պետք է վախենա անգամ սեփական ստվերից տարածաշրջանային ցանկացած նշանակալի քաղաքական խաղում: Ի դեպ, այս երևույթը ավելի վաղ նույնպես եղել է հայ իրականության մեջ, օրինակ՝ Ղարաբաղյան կարգավորման տարբեր փուլերում, Ղարաբաղը հետ վերցնելու նպատակով, «հայերի դեմ համաշխարհային դավադրության» մշտապես կրկնվող կոնսպիրոլոգիական վախերի ձևով: Վերջին անգամ նման դիսկուրս Հայաստանում նկատվել է Ղարաբաղի վերաբերյալ, ըստ հայ դիվանագիտության, ամենաանպաստ փաստաթղթի՝ Մայնդորֆյան հռչակագրի (2008թ. հոկտեմբերի վերջ-նոյեմբերի սկիզբ) ստորագրումից առաջ:

Օբյեկտիվ լինենք. նման դիսկուրսը միանգամայն բնական է մի երկրի հասարակության համար, որը հարյուրամյակներ շարունակ պետականություն չի ունեցել և ծանր հոգեբանական տրավմա է կրել 1915թ. ցեղասպանությունից և 20-րդ դարասկզբում կրած կորուստներից հետո: Սակայն Երրորդ Հանրապետության գրեթե քսանամյա անկախ գոյությունից հետո ժամանակն է, որ հայ հասարակությունն ու էլիտան մեծանան, և Հայաստանի ներսում պետք է սովորեն իրենց արտաքին քաղաքականությունն ընկալել որպես ընդամենը ազգային շահերի իրագործման սովորական մեխանիզմ (ինչպես և այլ «նորմալ» երկրներում) և տարածաշրջանում ցանկացած նախաձեռնություն կամ դիվանագիտական խաղ ընկալել որպես բնական քաղաքական գործընթաց՝ իր դրական և բացասական կողմերով, այլ ոչ թե որպես մի ինչ-որ «համաշխարհային դավադրություն» կամ «սեփական իշխանությունների դավաճանություն ազգային շահերին»: Եվ, հավանաբար, արդի փուլում սա է ներքաղաքական դիսկուրսի տեսակետից հայ-թուրքական հարաբերությունների ընկալման առավել լուրջ խնդիրը Հայաստանում և սփյուռքում: Այս համատեքստում անգամ ժամանակային դինամիկան և Անկարայի ու Երևանի փոխհարաբերությունների վերլուծությունն արդեն այնքան էլ կարևոր չեն թվում...

ԹՈՒՐՔԻԱ. ՊԱՀԱՆՋՎԱԾ ԿԼԻՆԻ՞ ԱՐԴՅՈՔ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԸ

Սերգեյ Սարգսյան

Թուրքիայի բանակը, որն իրեն համարում է Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալի ժառանգության պահապանը, երկրում կայունությունը պահպանելու և աշխարհիկ կարգի գոյությունը վտանգող սպառնալիքները կանխելու համար անցյալում բազմիցս հարկադրված է եղել միջամտել քաղաքականությանը, ընդհուպ մինչև 1960, 1971 և 1980թթ. զինվորական հեղաշրջումներն իրականացնելը: Նրա այս դերը երկրի քաղաքական գործընթացի զարգացման ներկա միտումների պայմաններում հերթական հեղաշրջման սպասելու տեղիք է տալիս: Սակայն այսօր իրավիճակն ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրա շուրջ արմատապես տարբերվում է այն ժամանակվանից, երբ բանակը որոշեց ամենաարմատական ձևով միջամտել երկրի ներքաղաքական կյանքին:

Իսլամի վերականգնումը հասարակության մեջ, որն սկսվեց անմիջապես Աթաթյուրքի մահվանից հետո, աստիճանաբար, բայց էլ ավելի հաստատուն կերպով անդրադարձավ ընտրազանգվածի քաղաքական նախընտրությունների վրա. եթե 70-ականների սկզբին իսլամամետ կուսակցություններին աջակցում էր բնակչության 11%-ը, ապա 90-ականների կեսերին այդ ցուցանիշն արդեն կազմում էր 21.5%: Դա թույլ տվեց Նեջմեթդին Էրբաքանին՝ «Ռեֆախ» («Բարօրություն») կուսակցության առաջնորդին, 1996թ. հուլիսին գլխավորել կոալիցիոն կառավարությունը, որի իշխանության գալը, գործունեությունը և անկումը բանակի ճնշմամբ վճռական ազդեցություն է թողել, ինչպես այսօր երևում է, Թուրքիայում հաջորդ տասնամյակի քաղաքական գործընթացների զարգացման, Արդարություն և զարգացում կուսակցության գաղափարախոսության ձևավորման և վարքագծի ու հատկապես բանակի հետ նրա փոխհարաբերության վրա: Մինչև 1997թ. հունիսի հարկադրական հրաժարականը՝ այդ կառավարությունը հասցրեց ընդունել և խորհրդարանով անցկացնել մի շարք օրենքներ և որոշումներ, մասնավորապես՝ պաշտոնապես թույլատրեց կանանց պետական և ուսումնական հաստատություններ հաճախել գլխաշորով, իսլամական ինստիտուտների շրջանավարտների դիպլոմները հավասարեցրեց աշխարհիկ հաստատությունների շրջանավարտների դիպլոմներին, կրճատեց աշխատանքային ժամերը սրբազան ռամադան ամսին և այլն:

Ն.Էրբաքանի կառավարման տարիներին իսլամամետ տրամադրությունները խորացան Թուրքիայի մի քանի ուժային կառույցներում, որոնք հետագայում լուրջ ազդեցություն գործեցին ուժերի դասավորվածության և երկրի ռազմաքաղաքական իրադրության վրա: Հենց այդ ժամանակներից էլ, թուրքական զինվորական աղբյուրների համաձայն, իսլամիստների ազդեցության տակ է գտնվում ՆԳՆ Անվտանգության տնօրինությունը *(SD),* որը զբաղվում է կազմակերպված հանցավորության դեմ պայքարով. նման միտումներ կային նաև ոստիկանությունում (այդ թվում և նրա հետախուզությունում և հակահետախուզությունում՝ *JITEM),* որի վրա է դրված երկրի գյուղական վայրերի անվտանգության ապահովումը:

1997թ. փետրվարին Ն.Էրբաքանի և նրա ղեկավարած կուսակցության դիրքերին ուժգին հարված հասցրեց Թուրքիայի նախագահ Ս.Դեմիրելը, ով պաշտոնական նամակով դիմեց ԹՀ ԶՈՒ Գլխավոր սպայակույտին, որում կառավարությունը բնութագրում էր որպես երկրի աշխարհիկ կարգի և կայունության համար վտանգ պարունակող: Նախագահի համբերության բաժակը լցվեց այն բանից հետո, երբ Թուրքիայում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանը, որը սերտ կապեր էր պահպանում «Ռեֆահի» առաջնորդների հետ, Անկարայի Սինջան արվարձանում անցկացվող «Երուսաղեմի երեկոյում» հրապարակավ կոչ արեց երկրում հաստատել շարիաթի օրենքները:

Այդ կոչի հետևանքը դարձան զինվորականների, այսպես կոչված, «20 պահանջները» կառավարությանը, որոնց մեջ էին, մասնավորապես, մուսուլմանական նորամուծություններից հրաժարումը, պայքարը իսլամական ֆունդամենտալիզմի դեմ, Ն.Էրբաքանը պետք է ընդուներ պետության զուտ աշխարհիկ բնույթը և այլն:

1997թ. հունիսին նախագահի, Արդյունաբերողների և ձեռներեցների թուրքական միության (ԱՁԹՄ) և բանակի ճնշմամբ Էրբաքան-Չիլեր կոալիցիոն կառավարությունը հարկադրված էր հրաժարական տալ: Իսկ 1998թ. հունվարին Թուրքիայի Սահմանադրական դատարանը որոշում կայացրեց Բարօրություն կուսակցությունը ցրելու մասին: Ռեջեփ Էրդողանը՝ «Ռեֆահի» առաջնորդներից մեկը, ով այն ժամանակ զբաղեցնում էր Ստամբուլի քաղաքապետի պաշտոնը, ստիպված էր բանտում 4 ամիս անցկացնել իսլամիստական տրամադրություններ արտահայտելու համար, այն է՝ ցույցի ժամանակ արտասանել էր. «Մինարեները մեր սվիններն են, գմբեթները՝ մեր սաղավարտները, մզկիթները մեր զորանոցներն են, իսկ հավատացյալները՝ մեր զինվորները»:

Թ.Չիլերի արևմտամետ «Ճշմարիտ ուղի» և ծայրահեղ աջ Ազգային շարժում («Գորշ գայլեր») կուսակցությունների շուրջ ծագած կոռուպցիոն և քրեական սկանդալները, թերևս, ջախջախիչ հարված հասցրին Թուրքիայի «աշխարհիկ» կուսակցությունների իմիջին: Իսկ «20 պահանջների» հրապարա-

կային ընդունումը թեև թույլ տվեց Ն.Էրբաքանին ևս մի քանի ամիս մնալ իշխանությունում, բայց նրա կուսակցության ժողովրդականությունը կտրուկ նվազել էր, իսկ հետագայում արդեն նրա քաղաքական գործունեությունն ավարտվեց: 2001թ. մայիսին «Ռեֆախի» ճակատագրին արժանացավ նաև նրա հաջորդ՝ «Ֆազիլեթ» («Առաքինություն») կուսակցությունը:

Արդյունքում՝ ընտրազանգվածն արդեն պատրաստ էր նոր քաղաքական ուժերին ընտրելու մտքին, որոնցից մեկն էլ դարձավ 2001թ. օգոստոսի 14-ին «Ռեֆախի» և «Ֆազիլեթի» բեկորներից ստեղծված նոր՝ իսլամամետ ուղղության Արդարություն և զարգացում կուսակցությունը (ԱԶԿ): Հաշվի առնելով նախորդների՝ պետության աշխարհիկ ինստիտուտների, և առաջին հերթին՝ բանակի հետ առճակատման հարցում թույլ տված սխալները, կուսակցությունն իր առաջին նախընտրական ծրագրում համարյա կրոնական թեմայով հարցեր չէր բարձրացրել:

Կազմավորման պահից սկսած՝ ԱԶԿ-ն ներկայանում է որպես «մուսուլմանական ժողովրդավարության» կամ «պահպանողական ուղղության» կուսակցություն: Հասարակությանը ժողովրդավարության և հանուն մարդու իրավունքների պայքարի կոչելով՝ այն ստեղծում է քաղաքական կենտրոնին մերձավորության տպավորություն: Ահա այն հիմնական դրույթները, որոնք նրան թույլ տվեցին պահել և նույնիսկ ընդլայնել «Ռեֆախի» հիմնական ընտրազանգվածին.

- ռազմավարական նպատակներից է հայտարարվել Թուրքիայի մուտքը Եվրամիություն (դրանով իսկ այս հարցում նախաձեռնությունը վերցվել է ավանդաբար «արևմտամետ» կուսակցություններից և բանակից),
- Արդյունաբերողների և ձեռներեցների անկախ միության (ԱԶԱՄ) շուրջ խմբավորված թուրքական բիզնեսի նոր՝ արտաօլիգարխիական կապիտալի ծրագրային աջակցություն:

ԱԶԿ-ի և «աշխարհիկ» կուսակցությունների ծրագրերի տարբերությունների վերացումը լրացուցիչ ձայներ ապահովեց տատանվող ընտրազանգվածի շարքերից, իսկ զարգացման եվրոպական վեկտորը և կոռուպցիայի դեմ պայքարի կոչերը՝ մանր ու միջին բիզնեսի ներկայացուցիչներից: Որպես հետևանք՝ կուսակցությունը համոզիչ հաղթանակ տարավ 2002թ. խորհրդարանական ընտրություններում (34,3%) և ընտրողների աջակցությունն ստացավ 2004թ. իշխանության տեղական մարմինների ընտրություններում (43,4%):

ԱԶԿ իսլամամետ նախընտրական խոստումների և Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության վերաբերյալ ծրագրային դրույթների կատարման գործընթացում բանակը, որ այդ գործընթացի վաղեմի և հետևողական կողմնակիցն էր, հայտնվեց «եվրածուղակում». ԵՄ պահանջով երկրում իրականացվող իշխանական ուղղահայացի կառուցվածքային փոփոխությունների

և ռազմա-քաղաքացիական հարաբերությունների բարեփոխման ընթացքում, գործող սահմանադրության շրջանակներում, գործի դրվեց երկրի ներքաղաքական կյանքում բանակի դերի աստիճանական նվազեցման մեխանիզմը: Դրա տարրերից են.

- Ազգային անվտանգության խորհրդում (ԱԱԽ) զինվորականներին հատկացվող տեղերի կրճատում,
- դրույթ, ըստ որի՝ ԱԱԽ քարտուղարը նշանակվում է վարչապետի և հաստատվում նախագահի կողմից,
- սահմանադրական լրացում ԱԱԽ կայացրած որոշումների ոչ թե իրավաբանորեն պարտադիր, այլ ընդամենը խորհրդակցական բնույթի մասին,
- հնարավորություն դատարանում բողոքարկելու զինվորական դիկտատուրայի ժամանակների օրենքները,
- Թուրքիայի ԶՈՒ, ինչպես նաև պետական այլ գերատեսչությունների բյուջեի ձևավորում և հաստատում խորհրդարանի կողմից:

Թուրքական բանակի քաղաքական մաններման դաշտը զգալիորեն նեղացնող ևս մեկ գործոն է այն, որ հին դպրոցի լիդերների ղեկավարած՝ ավանդաբար սեկուլյար կուսակցությունները դեռևս գաղափարախոսական ճգնաժամ են ապրում և ի վիճակի չեն ոչ ընդլայնել իրենց ընտրազանգվածը, ոչ էլ միավորվել՝ անգամ խորհրդարան չանցնելու սպառնալիքին դեմ հանդիման:

Բացի այդ, անհրաժեշտ է նշել նաև թուրքական սպայակույտի և ազգային ուղղվածության կուսակցությունների, օրինակ՝ ԱՇԿ-ի, միջև վերջին ժամանակներս նկատվող որոշ սառնության մասին: Կուսակցության հիմնադիր և առաջնորդ Ալփարսլան Թուրքեշը, զինվորական լինելով, սերտ կապերի մեջ էր սպայակույտի հետ, և այդ կապերը խզել չկարողացան անգամ ԱՇԿ ակտիվիստների ձերբակալությունները 1980թ. զինվորական հեղաշրջումից հետո: Սակայն 1997թ. Ա.Թուրքեշի մահից հետո կուսակցության ղեկավար օղակ մտան շատ ֆունկցիոներներ, ովքեր հեռու էին բանակից: Վերջին ժամանակներս սպայակույտի հետ նրանց հարաբերությունների վրա սկսել են ազդեցություն գործել նաև կուսակցական ակտիվիստների ազգայնական և իսլամիստական հայացքները:

2007թ. հուլիսյան ընտրությունների արդյունքներով՝ ընդդիմությունը խորհրդարանում ներկայացվեց միայն ձախ կենտրոնամետ Ժողովրդա-հանրապետական կուսակցությամբ (ԺՀԿ, առաջնորդն է Դենիզ Բայքալը) և ծայրահեղ աջ Ազգային շարժում կուսակցությամբ (ԱՇԿ, առաջնորդն է Դևլեթ Բահչելին), որոնք ստացան ձայների համապատասխանաբար 20,9 և 14,3%-ը, իսկ իշխող Արդարություն և զարգացում կուսակցությունը, առաջին անգամ թուրքական պատմության մեջ, էլ ավելի ամրապնդեց դիրքերը. եթե 2002թ.

նրան տրվել էր ընտրողների ձայների 34,3%-ը, ապա 2007-ին այդ ցուցանիշն արդեն 46,7 էր:

Զարգացմանն ուղղված ծրագրով աշխատող իշխող կուսակցությունը մեծ ուշադրություն էր հատկացնում երկրի՝ տնտեսական առումով հետամնաց գավառներին ու շրջաններին: Այժմ այդ շրջանների ընտրողների համար «ԱԶԿ» և «տնտեսական աճ» հասկացությունները փոխկապակցված են:

Թեև ԱԶԿ-ն 550 տեղանոց խորհրդարանում չապահովեց որակյալ մեծամասնություն (367-ի փոխարեն ընդամենը 341 մանդատ), ինչն անհրաժեշտ էր աշխատանքային քվորումի և նախագահական ընտրությունների հենց առաջին փուլում նախագահի ընտրության համար, այնուամենայնիվ, կուսակցությունը հնարավորություն ստացավ այդ պաշտոնին անցկացնել իր թեկնածուին երրորդ փուլի արդյունքներով, որտեղ հաղթելու համար արդեն պահանջվում էր խորհրդարանի պատգամավորների ձայների միայն պարզ մեծամասնությունը (ընդամենը 276):

Այսպիսով, 2007թ. Թուրքիայում անցկացված խորհրդարանական և նախագահական ընտրություններից հետո նախագահի, վարչապետի, խորհրդարանի նախագահի պաշտոնները զբաղեցրին իշխող Արդարություն և զարգացում կուսակցության ներկայացուցիչները:

Միևնույն ժամանակ, ԱԶԿ-ի համար նման աջակցությունը ինքնըստինքյան արգելք չի կարող հանդիսանալ զինվորականների համար, եթե նրանք որոշեն միջամտել «սողացող» իսլամացման գործընթացին: Թուրքիայի պատմության մեջ նման նախադեպ արդեն եղել է. 1957թ. ընտրություններում Ժողովրդավարական կուսակցությունը ստացել էր ընտրողների 53%-ի վստահությունը, սակայն դա չկանգնեցրեց բանակին, որն, այնուամենայնիվ, որոշեց 1960թ. հեղաշրջում կատարել՝ կասեցնելու համար հասարակության իսլամացման և երկրի տնտեսության մեջ պետության դերի նվազեցման քաղաքականությունը:

2007թ. ընտրություններից հետո ուժերի դասավորությունը խորհրդարանում թույլ տվեց ԱԶԿ-ին առանց լուրջ դժվարությունների օրենսդիր մարմնի միջոցով անցկացնել իր բոլոր լրացումները, առաջարկություններն ու նախաձեռնությունները: Սակայն, օգտվելով իր համար բարենպաստ քաղաքական պահից՝ կուսակցությունը փորձում էր, որքանով որ դա հնարավոր էր, առավելագույնս իրեն «հարմարեցնել» Թուրքիայի սահմանադրությունը: 2007թ. հոկտեմբերի 21-ին ԱԶԿ նախաձեռնությամբ անցկացվեց հանրաքվե սահմանադրությունում լրացումներ կատարելու օրինագծի շուրջ: Հանրաքվեին մասնակցածների 69%-ը պաշտպանեցին առաջարկված փոփոխությունները, որոնք, մասնավորապես, նախատեսում էին.

- նախագահի ընտրություն համաժողովրդական քվեարկությամբ,
- նրա լիազորությունների ժամկետի կրճատում՝ 7-ից հասցնելով 5 տարվա, բայց երկրորդ ժամկետում վերընտրվելու իրավունքով,

- խորհրդարանի լիազորությունների կրճատում 5-ից 4 տարվա,
- ցանկացած օրենսդրական որոշում կայացնելու համար պահանջվող պատգամավորների նվազագույն թվի կրճատում:

Նման լրացումները փաստորեն հանգեցրին իշխանության ճյուղերի միջև լիազորությունների էական վերաբաշխման, իսկ բանակի հանդեպ, ինչը պնդում էր ԵՄ-ը, ուժեղացվեց քաղաքացիական վերահսկողությունը, ինչն էլ ավելի նվազեցրեց նրա կշիռը երկրի ներքին քաղաքականության մեջ:

Այնուամենայնիվ, Թուրքիայի բանակը, լինելով իշխանության այն ինստիտուտը, որն ավանդաբար բնակչության շրջանում ամենամեծ հեղինակությունն է վայելում, ընդ որում՝ անկախ իր քաղաքական կամ կրոնական նախապատվություններից, առայժմ իրեն ի վիճակի է զգում վերականգնել (ինչպես մեկ անգամ չէ, որ պատահել է) երկրում ողջ իշխանական ուղղահայացի նկատմամբ լիակատար վերահսկողությունը: Թեև ստեղծված իրավիճակում այն կարող է նման բանի համարձակվել միայն խոր քաղաքական կամ ֆինանսատնտեսական ճգնաժամի զարգացման պարագայում, եթե ԱԶԿ-ն կորցնի բնակչության աջակցության այն մակարդակը, որն ունի:

Անցած տարվա հոկտեմբերի 20-ից Թուրքիայում «Էրգենեքոնի» (ազգայնական ուղղության գաղտնի կազմակերպություն, որին վերագրվում է գործող իշխանությունը տապալելու նախապատրաստություն, որի ընթացքում արդեն մոտ 200 մարդ է ձերբակալվել՝ տարբեր հոսանքների քաղաքական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, արհմիութենական առաջնորդներ և ակտիվիստներ, պաշտոնաթող զինվորականներ, լրագրողներ, համալսարանների դասախոսներ և ռեկտորներ) գործով սկսված դատավարությունը թեև դարձել է ԱԶԿ վարկանիշի անկման (իշխանության տեղական մարմինների ընտրություններում զգալիորեն ավելի քիչ ձայներ է հավաքել, քան սպասվում էր) պատճառներից մեկը՝ տնտեսական ճգնաժամին զուգահեռ, նրա ձայների 39,1%-ը դեռ բավական չէ այդ դերին հավակնելու համար:

Իշխող կուսակցության կողմից ազգայնական «պետություն պետության մեջ» կազմակերպության դեմ լայնամասշտաբ պայքարը վկայում է այն մասին, որ ԱԶԿ-ն անցել է ավելի ակտիվ և վստահ, հարձակողական գործողությունների իր բոլոր ընդդիմախոսների դեմ: Չնայած շատերն են Թուրքիայում «Էրգենեքոնի» դեմ դատավարությունը դիտարկում որպես իսլամական կուսակցության պատասխան հարված աշխարհիկ ուժերին քեմալականության հիմքերը խարխլելու մեջ ԱԶԿ-ին մեղադրելու համար, որն, ի դեպ, 2008թ. մարտին չստացավ երկրի Սահմանադրական դատարանի աջակցությունը, ակնհայտ է Թուրքիայի քաղաքացիների վերաբերմունքի աստիճանական փոփոխությունը քաղաքական այդ աղմկալի դատավարության հանդեպ:

Այսպես, *Metro Poll Scientific and Strategic Research Center-ի* 2009թ. հունվարին անցկացրած հարցախույզի տվյալներով՝ «Էրգենեքոնի» դավադրությանը հավատում էր հարցվածների 62,5 %-ը, այն դեպքում, երբ գործը սարքված էր համարում ընդամենը 27,2%-ը:

Եթե դեռևս 2008թ. հուլիսին այս կազմակերպությունը ահաբեկչական էր համարում հարցվածների ընդամենը 37,4%-ը, ապա նոյեմբերին այդ կարծիքին էր արդեն 67,9%-ը:

2009թ. հունվարին անցկացված հարցախույզի մասնակիցների մոտ 60%-ը համոզված էր, որ ԱԶԿ-ն ճիշտ է վարվել՝ սկսելով դատավարությունը, ընդ որում՝ այդպես են կարծում ոչ միայն իշխող կուսակցության համար քվեարկածները (նրանց մոտ 90%-ը), այլ նաև Ժողովրդա-հանրապետական (ավելի քան 20%) և Ազգային շարժում (մոտ 40%) կուսակցությունների կողմնակիցները: Նման աջակցությունը իշխող կուսակցությանը ստիպում է Թուրքիայի սպայակույտին խիստ զգուշորեն քննադատել իշխող կուսակցության գործողությունները:

«Էրգենեքոնի» դատավարության հետ կապված՝ անհրաժեշտ է մի քանի նկատառում հայտնել:

Նախ՝ իրենց շարքերի մաքրության համար ուժային նախարարությունների և հատուկ ծառայությունների պայքարում հեռացվել են սպաներ, ովքեր կասկածվել են ինչպես իսլամիստական տրամադրություններ, այնպես էլ ազգայնական ուղղության կազմակերպությունների, ինչպես «Էրգենեքոնն» է, հետ կապեր ունենալու մեջ, և վերջին տարիներին նրանց թիվը մոտավորապես նույնն է եղել (2007թ., օրինակ, 10 մարդ):

Երկրորդ՝ «Էրգենեքոն» ճյուղավորված ցանցի բացահայտումը, որը, ըստ տարբեր տվյալների, միավորում է 20-25 ընդհատակյա և կիսաընդհատակյա կառույցներ, վկայում է այն մասին, որ իշխող կուսակցությունը հուսալի հենարան է ձեռք բերել Թուրքիայի հատուկ ծառայություններում, առաջին հերթին՝ հանձին Ազգային հետախուզության և ոստիկանական կառույցների:

Երրորդ՝ ԱԶԿ վարած քաղաքականության շատ ասպեկտներ վայելում են բանակի լիակատար աջակցությունը և նրա համար շատ գրավիչ են: Այսպես, սպայակույտը հաճույքով ընդունեց պանթյուրքական վեկտորի ակտիվացումը Թուրքիայի արտաքին քաղաքականությունում, որն արժանի ուշադրության չէր արժանանում նախագահ Աբդուլա Գյուլի նախորդի՝ Ահմեդ Նեջդեթ Սեզերի կողմից: Գործող կառավարության մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ երկրի հարավարևելյան գավառների և Հյուսիսային Իրաքի քրդերի հարցի լուծման մեջ Թուրքիայի ԶՈ դերի ու տեղի, կոալիցիոն ռազմական գործողություններում և խաղաղարար գործունեությունում մասնակցության մասշտաբների և աշխարհագրության ընդլայնման, և ամենագլխավորը՝

ամենահաջող զուգակշռված բյուջեներից մեկի (անգամ չնայած գլոբալ տնտեսական ճգնաժամին, որը հանգեցրել է $19,5 մլրդ-ի ռազմական նշանակության 32 պայմանագրերի և ծրագրերի սառեցմանը)՝ լայնամասշտաբ վերազինմանը և ուժային կառույցների բարեփոխմանը, դրանք արդի, բարձրշարժունակ զորամասերի վերածելուն կողմնորոշված լինելու վերաբերյալ, բանակում ընդունվում են անթաքույց խանդավառությամբ:

Բացի այդ, սպայական անձնակազմի հիմնական մասը միջին դասի ներկայացուցիչներ են, ովքեր հիմնականում սատարում են ԱԶԿ ծրագրերին և որոնց տրամադրությունների հետ սպայակույտը ստիպված է հաշվի նստել: ԱԶԿ ժողովրդայնության պահպանման և Թուրքիայի միջին դասի կողմից աջակցություն ստանալու հիմնական պատճառը իշխող կուսակցության համար բարենպաստ տնտեսական գործոնների զուգադիպությունն է, որոնք էլ կայուն և նկատելի տնտեսական աճ են ապահովել Թուրքիայի համար: Այսպես, 1993-2002թթ. տնտեսության աճը կազմել է 2,6%, իսկ ԱԶԿ իշխանության տարիների ընթացքում՝ 7,6%:

Այնուամենայնիվ, ներկայում ԱԶԿ-ի համար մարտավարական առումով ճիշտ կլիներ սպայակույտի հետ նախնական պայմանավորվածությամբ «արգելակել» այդ աղմկալի դատավարությունը զորամասերում, որ վնասում է մի կողմից՝ իսլամամետ, իսլամական կուսակցություններին և շարժումներին (քանի որ հնարավոր չէ, որ դրանք ընդգրկված չլինեն «Էրգենեքոնի» գործունեությունում՝ հաշվի առնելով նրա թափը, տարածվածությունը գրեթե բոլոր քաղաքական, հասարակական և կիսառազմական կազմակերպությունների «վերնամասում», ինչպես նաև Քրդստանի բանվորական կուսակցությունում), մյուս կողմից՝ Թուրքիայի ԶՈՒ և ոստիկանության գործող գեներալներին և ավագ սպայակազմին: Դա թույլ կտա զինվորականներին և իսլամամետ ուժերին հասնել իշխանության և ազդեցության ոլորտների՝ ուժերի իրական դասավորությանը համապատասխան բաշխման:

Եվ արդեն ԶՈՒ հետագա բարեփոխումների ընթացքում, երբ ցամաքային զորքերի թվաքանակը պլանավորվածի համաձայն կկրճատվի, իսկ ոստիկանությանը՝ կավելանա, գործադիր իշխանությունը կարող է փորձել (իր համար ավելի քիչ ռիսկեր պարունակելով) ձեռնամուխ լինել համեմատաբար ինքնուրույն (բանական սահմաններում) ուժային երկու՝ զինվորական և ժանդարմա-ոստիկանական կառույցների ստեղծմանը:

Դա զգալիորեն կկրճատի իշխանության կենտրոնացման հնարավորությունն ուժային կառույցներում, կնվազեցնի ազդեցության աստիճանը քաղաքացիական իշխանության վերին էշելոնների վրա և, ընդհանրապես, զինվորական հեղաշրջումներ իրականացնելու հավանականությունը:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Արաքս Փաշայան

Վերջին շրջանում Ադրբեջանի հասարակական գործընթացներում էական նշանակություն է սկսել ձեռք բերել իսլամական գործոնը, հասարակության մեջ ձևավորվել են առանձին շերտեր, որոնք բնորոշվում են հավաքական կրոնական ինքնության գիտակցությամբ:

Եթե խորհրդային և հետխորհրդային տարիներին Ադրբեջանում (որի իսլամ բնակչության 2/3-ը շիա է, 1/3-ը՝ սուննի) իսլամական ինքնությունն ավելի շատ հիմնված էր մշակույթի և էթնիկության, քան կրոնի վրա, ապա այսօր կրոնականացվածությունը բնորոշ է դարձել ադրբեջանական հասարակությանը:

Չնայած Ադրբեջանի հասարակական-քաղաքական զարգացումներում իսլամական գործոնի ուսումնասիրության գիտական կարևորությանն ու քաղաքական և գործնական նշանակությանը, այն հիմնականում դուրս է մնացել Հայաստանի վերլուծական հանրության ուշադրությունից:

Այն, որ իսլամը Ադրբեջանի հասարակական կյանքում վերաճել է որոշակի գործոնի, փաստում են մի շարք իրողություններ, որոնից է՝ գլխաշոր (հիջաբ) կրող աղջիկների և կանանց[1], իսլամական գործառույթ իրականացնող հավատացյալների, կրոնական կրթություն ստանալ ցանկացողների, իսլամական սրբատեղիներ մեկնել կամեցողների հարաճուն թիվը: Եթե նախկինում մարդիկ իսլամը կարևորում էին հիմնականում ծիսական արարողությունների ժամանակ, ապա 21-րդ դարի սկզբից իսլամը, ինչպես նշում է ադրբեջանցի վերլուծաբան Ա.Յունուսովը, «դարձել է կենսակերպ ադրբեջանական հասարակության ոչ փոքր հատվածի, հատկապես երիտասարդների համար»[2]:

Հատկանշական է, որ երկրում որոշակիորեն հիմնավորվել է նաև կրոնական արմատականությունը, տարածում ստացել իսլամին վերաբերող տա-

---

[1] Հիջաբը հավատացյալի իսլամական ինքնության դրսևորումներից մեկն է, որն ամրագրված է իսլամական հավատքով: Հիջաբի կիրառումը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ և պայմանավորված լինել տարբեր գործոններով: Հատկապես աշխարհիկ հասարակություններում, ինչպիսին Ադրբեջանն է, հիջաբն ավելի շատ կրոնականացվածության ցուցիչ է:

[2] *Юнусов А.,* Иллюзии и реальность постсоветского периода, http://www.centrasia.ru/newsA.php?st=1192392060

բաբնույթ (այդ թվում՝ քարոզչական) գրականությունը, կարևոր նշանակություն է ձեռք բերել կրոնական հռետորականությունը:

Գիտակցելով աշխարհիկ ինստիտուտներին սպառնացող վտանգը՝ երկրի իշխանությունները մշտապես փորձել են թուլացնել կրոնի դերը հասարակական-քաղաքական կյանքում, ինչը դրսևորվել է կրոնականացված տարրերի հանդեպ հետապնդումների և կրոնական խնդիրների նկատմամբ սահմանափակումների միջոցով: Օրինակ, վերջերս իշխանություններն արգելեցին մզկիթի բակում կամ հարակից տարածքում աղոթելը:

Ադրբեջանում արգելված է գլխաշորով մուտք գործել կրթական հաստատություններ (չնայած հասարակության մեջ գլխաշոր կրելն արգելված չէ), պաշտոնական փաստաթղթերի համար հիջաբով նկարվելը, որի հետևանքով 16 տարին լրացած աղջիկներից շատերը չեն կարող անձնագիր և ինքնությունը հաստատող այլ փաստաթղթեր ստանալ, ինչը մի շարք անհաղթահարելի խնդիրներ է հարուցում[1]:

Որոշակի ճնշումներ են իրականացվում այն մարդկանց նկատմամբ, որոնց արտաքին կերպարի մեջ կան ընդգծված կրոնական տարրեր, օրինակ՝ երկար և անխնամ մորուքը կամ կարճ տաբատը (ինչը վկայում է սուննի իսլամի սալաֆիական կողմնորոշման մասին): Հայտնի են դեպքեր, երբ ոստիկանները ստիպել են մարդկանց սափրել մորուքը:

Նշենք, որ Ադրբեջանում շատ բարդ է կրոնական համայնքների և կազմակերպությունների գրանցման արարողակարգը, որը ենթադրում է ստանալ Կովկասի մուսուլմանների վարչության թույլտվությունը: Բավական խիստ է նաև կրոնական գրքերի գրաքննությունը: Համապատասխան մարմնի եզրակացության դեպքում արգելվում են այն գրքերը, որոնք սերմանում են դավանական անհանդուրժողականություն, ծայրահեղականություն և անջատողականություն:

Ադրբեջանական հասարակության մեջ իսլամի դերի ակտիվացումը, ըստ էության, պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից են՝ խոսքի ազատության բացակայությունը, սոցիալական և տնտեսական խնդիրները, հիասթափությունն արևմտյան արժեքների նկատմամբ և այլն: Երկրում առկա են քաղաքական և հոգևոր ճգնաժամին բնորոշ տարրեր, երբ մարդիկ, փաստորեն, չեն վստահում ո՛չ իշխանություններին և ընդդիմությանը և ո՛չ էլ պաշտոնական իսլամի ներկայացուցիչներին:

Հատկանշական է, որ առկա իրավիճակում թե՛ սուննի, թե՛ շիա շրջանակներում տարածում է ստանում կրոնական արմատականությունը, որն իսլամի տեսանկյունից փորձում է մեկնաբանել սոցիալական և քաղաքական առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծումները: Իսկ ծայրահեղ կրոնա-

[1] Մանրամասն տե՛ս Право на хиджаб в Азербайджане. 9 лет мусульманки не могут получить паспорта http://www.islam.ru/pressclub/islamofobia/prahejzi/

կանացված շրջանակներն իրենց թիրախն են դարձնում հասարակական, քաղաքական և մշակութային այն գործիչներին ու մարդկանց, ովքեր ունեն ընդգծված աշխարհիկ տեսակետներ կամ դեմ են արտահայտվում իսլամին առնչվող որևէ իրողության: Նրանց նկատմամբ նույնիսկ հրապարակվում են մահվան դատավճիռներ, հնչեցվում են ջիհադի կոչեր:

Այս տեսանկյունից բավական աղմկահարույց էր 2007-ին Ադրբեջանում գրող-հրապարակախոս Ռաֆիկ Թաղիի և «Սանաթ» թերթի խմբագիր Սամիր Սեդաղաթօղլուի դատավարությունը: Պատճառը նույնանուն թերթում Ռ.Թաղիի հրատարակած «Եվրոպան և մենք» հոդվածն էր, որտեղ հեղինակը խոսել էր քրիստոնեական արժեքների գերակայության մասին, ինչն ընկալել էր որպես անարգանք իսլամին և նրա սրբություններին: Հոդվածի դեմ արտահայտվել էր նաև Փաշազադեն, իսկ շիական Նարդարան գյուղում նոյեմբերի 10-ին տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ Ռ.Թաղիի դեմ հասարակական մահապատժի որոշում էր ընդունվել: Ռ.Թաղիի և Ս.Սեդաղաթօղլուի դատավարությանը մասնակցել էին կրոնական արմատականներ, որոնք այնուհետև պահանջել էին մահապատժի ենթարկել վերջիններիս[1]: Հատկանշական է, որ հիշյալ դեպքը արձագանք գտավ նաև Իրանում. հայտնի այաթոլլա Մուհամադ Ֆազիլ Լանքյարանին մահվան ֆեթվա հրապարակեց հոդվածագրի և խմբագրի համար, ինչն աղերսներ ունի Սալման Ռուշդիին առնչվող հայտնի դեպքի հետ:

Բաքվի Խաղաղության և ժողովրդավարության ինստիտուտի տնօրեն, քաղաքագետ Արիֆ Յունուսովի կարծիքով՝ իսլամն Ադրբեջանում ներկայումս զբաղեցնում է այն վակուումը, որը ժամանակին, մինչև 2005թ. խորհրդարանական ընտրությունները, զբաղեցնում էր արևմտամետ ընդդիմությունը, որին իշխանությունները դուրս մղեցին քաղաքական դաշտից: Նման իրավիճակ ստեղծվեց նաև Ուզբեկստանում, որտեղ իշխանությունների կողմից դուրս մղված ընդդիմության տեղը զբաղեցրեց միջազգային իսլամական արմատական շարժումներից մեկը՝ «Հիզբ ութ-թահրիրը»:

Ըստ Յունուսովի՝ Ադրբեջանում փաստորեն, անհաջողության են մատնվել թյուրքիզմը (ազգայնականությունը), արևմտյան լիբերալ դեմոկրատիան, իշխանությունների կողմից հասարակությանը պարտադրված հեյդարիզմը, որի հետևանքով որոշակիորեն աճել է հետաքրքրությունը իսլամի նկատմամբ[2]:

Իսլամիստական տրամադրությունների աճով աչքի են ընկնում հատկապես հյուսիսային և հարավային շրջանները, որտեղ բնակվում են էթնոդավանական փոքրամասնություններ, ինչպես նաև Ապշերոնի թերակզին, մասնա-

[1] Азербайджан: исламские радикалы грозят казнить журналистов, http://www.blagovest-info.ru/index.php?ss=2&s=3&id=13278

[2] *Юнусов А.,* Иллюзии и реальность постсоветского периода, http://www.centrasia.ru/newsA.php?st=1192392060

վորապես Բաքվի որոշ հատվածներ և դրան հարակից որոշ բնակավայրեր, ինչպես, օրինակ, իրանամետ Նարդարանը:

Իսլամի արմատական ուղղություններից Ադրբեջանում ներկայումս բավական ժողովրդականություն է վայելում սուննի իսլամի սալաֆիական (կամ վահաբական) հոսանքը, չնայած այդ հոսանքի կողմնակիցներն իրենց ոչ թե վահաբի, այլ՝ «ճշմարիտ իսլամի» հետևորդներ են անվանում և աչքի ընկնում հավաքական կրոնական ինքնության գիտակցությամբ, որը դրսևորվում է, առաջին հերթին, նրանց արտաքին կերպարի մեջ:

Շարժումն Ադրբեջան է ներթափանցել մի քանի, այդ թվում՝ արաբական ճանապարհով, իսկ նրա հաջողություններից մեկը կապված է Բաքվի սալաֆիական կողմնորոշման Աբու Բաքր մզկիթի երիտասարդ իմամ, խարիզմատիկ գործիչ Համեթ Սուլեյմանովի անվան հետ: 2008թ. օգոստոսին իշխանությունները փակեցին «Աբու Բաքրը»՝ պատճառաբանելով, որ նույն ամսի 17-ին մզկիթի դեմ իրականացված ահաբեկչությունից հետո այն այլևս անվտանգ չէ հավատացյալների համար:

Առաջին իսկ հայացքից ակնհայտ է, որ իշխանություններին առավել մտահոգում է երկրում սուննի իսլամի սալաֆիական ուղղության ընդլայնման փաստը, որը հիմնականում ասոցիացվում է Բաքվի Աբու Բաքր մզկիթի և նրա շուրջ ստեղծված կրոնական համայնքի հետ:

Ադրբեջանում գաղափարախոսական բացը, փաստորեն, փորձ է արվում լրացնել պաշտոնական իսլամից դուրս գործող մզկիթներում: Հայտնի է, որ ուրբաթ օրվա իմամի կրոնական քարոզից՝ խուտբայից հետո, նույն իմամի կողմից մզկիթում քննարկվում են նաև այլ, այդ թվում՝ սոցիալ-քաղաքական հարցեր: Արդյունքում՝ խոսքի ազատության բացակայության պայմաններում Ադրբեջանում առանձին մզկիթներ դառնում են յուրօրինակ քաղաքական ակումբներ:

Շվեդ վերլուծաբան Սոֆի Բեդֆորդն իր «Իսլամական գործունեությունն Ադրբեջանում. բռնությունը և մոբիլիզացումը հետխորհրդային համատեքստում»[1] հետազոտության մեջ հետաքրքիր դիտարկումներ է անում Ադրբեջանի թե՛ սուննի, թե՛ շիա գործունեության մասին՝ մատնանշելով միմյանց հետ որոշակի ընդհանրություններ և տարբերություններ ունեցող սուննիական Աբու Բաքր և շիական Ջումա մզկիթի ծխականների[2] համայնքների օրինակները: Հետազոտողի համոզմամբ՝ չնայած երկու համայնքներում էլ հասարակական

[1] *Sofie Bedford,* Islamic Activism in Azerbaijan: Repression and Mobilization in a Post-Soviet Context, Stockholm, 2009, *www.diva-portal.org/diva/getDocument?urn_nbn_se_su_diva-8429-2__fulltext.pdf*

[2] Բաքվի շիական Ջումա հայտնի մզկիթի իմամը մինչև 2004թ. Իլղար Իբրահիմօղլուն էր, ում 2004-ին իշխանությունները հեռացրին այդ պաշտոնից: Իբրահիմօղլուն ներկայումս զբաղվում է մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներով, ղեկավարում *DEVAMM* հայտնի կազմակերպությունը:

փոփոխությունների պահանջ կա, սակայն մոտեցումները տարբեր են. Ջումա մզկիթի հռետորականությունը լիբերալ է, բնորոշվում է կրոնական ազատությունների և քաղաքացիական իրավունքների, այլ կերպ ասած՝ քաղաքական շեշտադրումներով: Մինչդեռ Աբու Բաքր մզկիթի հռետորականությունը պահպանողական է, որոշակիորեն ապաքաղաքականացված, միտված անհատի վարքի և կենսակերպի կրոնականացմանը, կրոնական և բարոյական արժեքների բացարձակացմանը, հասարակությունը ներքևից վերև փոփոխելուն:

Իսլամին առնչվող գործընթացներում Ադրբեջանի իշխանությունների համար բարդ խնդիր է ոչ միայն ներքին, այլև արտաքին մարտահրավերներին դիմագրավելը: Լինելով հարևան Իրանին, Թուրքիային և Ռուսաստանի կազմում գտնվող Դաղստանին (որտեղ ամուր հիմքեր ունեն իսլամի ծայրահեղական ուղղությունները), նաև գտնվելով Մերձավոր Արևելքի հարևանության մեջ՝ Ադրբեջանը թիրախ է արտաքին իսլամական ազդեցության համար: Դեռևս 1990-ականներից Ադրբեջան սկսեցին ներթափանցել կրոնական քարոզիչներ Իրանից, Թուրքիայից, արաբական երկրներից, ի հայտ եկան միջազգային իսլամական մի շարք արմատական շարժումների մասնաճյուղեր, որոնք տարբեր ժամանակներում իշխանությունների կողմից հիմնականում չեզոքացվեցին: Իշխանությունները կարողացան մեծ հարված հասցնել հատկապես իրանական ազդեցությանը:

Հատկանշական է, որ իսլամական հարցերում իշխանությունների կողմից ընդունելի է համարվում թուրքական սուննի իսլամը, քանի որ զերծ է պահում իրանական և այլ ազդեցություններից և համարժեք է Ադրբեջանի աշխարհիկ պետության մոդելին: Ադրբեջանի իշխանությունները կրոնական հարցերում Թուրքիայի հետ ակտիվորեն համագործակցում են: Թուրքիան ֆինանսավորել է որոշ մզկիթների վերանորոգումը, մի շարք հոգևորականներ վերապատրաստվել են Թուրքիայում, Ադրբեջանից շատերն ուսանել են Թուրքիայի իսլամական կրթական հաստատություններում: Ադրբեջանում գործում են նաև թուրքական ոչ պաշտոնական իսլամական շրջանակներ, որոնցից է Ֆեթուլլահ Գյուլենի շարժումը, մասնավորապես՝ «Նուրսու» («Լույս») խմբերը, որոնք 2007-ին Ալլահշյուքյուր Փաշազադեի կողմից հայտարարվել են «ոչ ցանկալի»: Նուրսուականները բազմաթիվ համախոհներ ունեն նաև իշխանական շրջանակներում:

2006-ից Ադրբեջանի կրոնական իրավիճակի վրա, ինչպես նշում է Ա.Յունուսովը, սկսեց մեծ դեր խաղալ միջազգային իսլամական գործոնը: Այստեղ սկսեցին բավական հիվանդագին արձագանքել այն իրողություններին, որոնք կապված էին իսլամի կամ Արևմուտք-Արևելք հակասությունների հետ: Ադրբեջանում ձևավորվեց հակաարևմտյան և հակաիսրայելական հռետորականությունը, որին չէր խանգարում նույնիսկ այն փաստը, որ, օրինակ,

նույն Իսրայելի հետ Ադրբեջանն ուներ ռազմավարական գործընկերություն:

2006-ին Ադրբեջանում կազմակերպվեցին բողոքի մի շարք աննախադեպ ակցիաներ ընդդեմ Մուհամմադ մարգարեի ծաղրանկարների: 2006թ. ձմռանը Նարդարանում անկախ Ադրբեջանի պատմության մեջ առաջին անգամ այրվեցին ԱՄՆ, Իսրայելի, Դանիայի, նաև՝ Հայաստանի և Շվեյցարիայի դրոշները: Փետրվարի 11-ին «Ենի խաբար» քիչ հայտնի թերթը քրիստոնեական թեմաներով ծաղրանկարներ հրապարակեց, իսկ 2006-ի ապրիլին հրեական կազմակերպությունները սպառնալից նամակներ ստացան տեղական իսլամիստներից:

2006թ. ամռանը բողոքի ակցիաներ կազմակերպվեցին ընդդեմ Լիբանանում «Հիզբալլահի» դեմ իսրայելական պատերազմի, իսկ 2008թ. դեկտեմբերին՝ Ղազայում սկսված իսրայելա-պաղեստինյան պատերազմի: Ի դեպ, հակաքրիստոնեական բովանդակություն ունեցող հակաարևմտյան հռետորականության միջոցով են նաև արտահայտվում հակահայկական տրամադրություններն Ադրբեջանում: Հայկական թեմայի անքակտելի բաղկացուցիչներն են Լեռնային Ղարաբաղի և հայ-թուրքական հարաբերությունների հարցերը, որոնք ներկայումս հասարակության ուշադրության կիզակետում են: Հասարակության ճնշող մեծամասնությունը դեմ է, օրինակ, հայ-թուրքական հարաբերությունների ջերմացմանը և սահմանի բացմանը, քանի որ, ըստ առկա մտայնության, Թուրքիան այդ քայլերին գնում է Արևմուտքի (մասնավորապես՝ ԱՄՆ-ի) ճնշման տակ՝ այդպիսով դավաճանելով Ադրբեջանի հետաքրքրություններին:

Ադրբեջանի Միլլի մեջլիսի պատգամավոր Էլմիրա Ախունդովայի կարծիքով՝ հասարակության հարաճուն արմատականացումը, որը տեղական, ադրբեջանական միջավայրում ստանում է յուրօրինակ ձևեր, մտահոգության և տագնապի առիթ է ստեղծում, որի դեմ իշխանությունները պետք է անհետաձգելի քայլեր ձեռնարկեն[1]: Սակայն որքան էլ իշխանությունները փորձեն լուծել խնդիրները, միևնույն է, քաղաքական միաբևեռ համակարգի խորացումն ու առկա սոցիալական խնդիրները գաղափարախոսական վակուումի պայմաններում անխուսափելիորեն հանգեցնելու են իսլամի նշանակության աճին:

Փաստորեն, Ադրբեջանում մի կողմից, մեծանում է իսլամի ազդեցությունը հասարակական գիտակցության մեջ, մյուս կողմից՝ մեծանում է միջազգային իսլամական գործոնի ազդեցությունն Ադրբեջանի հասարակական գործընթացներում:

[1] Интервью Day.Az с депутатом Милли Меджлиса Эльмирой Ахундовой. 15 Января 2009

ՋԱՎԱԽՔԸ ՎՐԱՑԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Վահրամ Հովյան

Հայաստանի հյուսիսային սահմաններին հարակից, հայահոծ բնակչությամբ Ջավախքի շուրջ այսօր տեղի են ունենում նաև տեղեկատվական գործընթացներ: Տեղեկատվության և քարոզչության միջոցով Ջավախքի հիմնախնդիրներով շահագրգիռ կողմերը փորձում են մի կողմից արտահայտել իրենց դիրքորոշումներն այդ խնդիրների նկատմամբ, իսկ մյուս կողմից՝ ձևավորել համապատասխան տրամադրություններ թե՛ սեփական հասարակությունների, թե՛ միջազգային հանրության շրջանում: Քանի որ Ջավախքը վարչականորեն գտնվում է Վրաստանի սահմաններում, ապա վերջինս նրա հիմնախնդիրներով շահագրգիռ կողմերից է: Վրացական տեղեկատվական դաշտում Ջավախքի վերաբերյալ հրապարակված նյութերի վերլուծությունը թույլ է տալիս պատկերացում կազմել հայահոծ այդ տարածաշրջանի նկատմամբ Վրաստանի քաղաքականության, ինչպես նաև հասարակական տրամադրությունների մասին:

Ջավախքի շուրջ վրացական տեղեկատվական դաշտի որոշ առանձնահատկություններ

Ջավախքի շուրջ վրացական տեղեկատվությունն ունի իրեն հատուկ գծերը, որոնցով տարբերվում է հայերի նկատմամբ այլ, մասնավորապես՝ ադրբեջանական քարոզչությունից: Հայաստանի և Հայության նկատմամբ ադրբեջանական քարոզչությունից վրացական քարոզչությունը տարբերվում է հետևյալ երկու հիմնական առանձնահատկություններով.

1. Եթե հայկական թեմաները ադրբեջանական տեղեկատվական դաշտում գերակշռում են՝ զբաղեցնելով առաջնային դիրք, ապա վրացական տեղեկատվական դաշտում հայկական (այդ թվում նաև՝ Ջավախքի) թեմաները առաջնայնություն չունեն: Վրացական տեղեկատվական դաշտում ակնհայտ գերակշռություն ունեն Աբխազիայի, Հարավային Օսիայի, ռուս-վրացական հարաբերությունների, ինչպես նաև վրացական ներքաղաքական դրության վերաբերյալ նյութերը: Այդ է պատճառը, որ եթե ադրբեջանական տեղեկատվությունը գրեթե ամենօրյա հաճախականությամբ անդրադառնում է հայկա-

կան թեմաներին, ապա վրացական տեղեկատվական դաշտում հայկական թեմաները շատ ավելի հազվադեպ են հանդիպում:

Դրա պատճառն այն է, որ եթե Ադրբեջանը տեղեկատվական պատերազմում ունի հիմնական ճակատ (հայկական) և ողջ ռեսուրսները կենտրոնացրել է այդ ճակատում, ապա Վրաստանի դրությունն այս առումով շատ ավելի բարդ է: Վրաստանը տեղեկատվական պատերազմում ստիպված է պայքարել մի քանի՝ աբխազական, օսական, ռուսական և այլ ճակատներով: Հետևաբար, աբխազական, օսական և ռուսական թեմաների համեմատությամբ հայկական թեմաներն ավելի քիչ տեղ են զբաղեցնում վրացական տեղեկատվական դաշտում:

Ջավախքին վերաբերող նյութերը հաճախ օգտագործվում են ռուսների դեմ տեղեկատվական պատերազմում: Այսինքն՝ վրացական տեղեկատվական դաշտում Ջավախքի մասին հրապարակումների նպատակը հաճախ ոչ թե հայկական, այլ ռուսական կողմի նկատմամբ քարոզչությունն է: Այլ կերպ ասած՝ Ջավախքը որպես թեմա կամ գործիք օգտագործվում է Ռուսաստանի դեմ տեղեկատվական պատերազմում:

2. Եթե ադրբեջանական տեղեկատվական դաշտը հագեցած է միայն հակահայկական բովանդակությամբ հրապարակումներով, ապա նույնը միանշանակորեն չի կարելի ասել վրացական տեղեկատվական դաշտի մասին: Այստեղ Ջավախքի վերաբերյալ, բացի հակահայկական բովանդակությամբ նյութերից, զգալի տեղ ունեն նաև ռացիոնալ և կառուցողական մոտեցումները: Պատճառն առաջին հերթին այն է, որ հայ-վրացական հարաբերությունները այնքան լարված չեն, որքան հայ-ադրբեջանականը: Թեև հայ-վրացական հարաբերություններում որոշակի լարվածության առկայությանը, շարունակվում են պահպանվել դիվանագիտական, տնտեսական, մշակութային և այլ կապերը, ինչը ստեղծում է առկա հիմնախնդիրները խաղաղ և փոխշահավետ տարբերակով լուծելու ռեսուրս:

Ջավախքի շուրջ հակահայկական բովանդակությամբ հրապարակումները վրացական տեղեկատվական դաշտում

Վրացական լրատվամիջոցների հակահայկական բովանդակությամբ հրապարակումներում Ջավախքը ներկայացվում է որպես անջատականության օջախ, որտեղ տիրում է հայկական էթնիկ ազգայնականությունը: Ջավախքում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունները մեկնաբանվում են հենց այդ լույսի ներքո:

Այսպես, 2008թ. հոկտեմբերի 1-ին *www.newsgeorgia.ru* կայքէջը հրապարակել է «Երևան-Բաթում ճանապարհը կհանգեցնի անջատականության – Նաթելաշվիլի» վերտառությամբ հոդվածը, որտեղ ներկայացվում է Վրաստանի ընդդիմադիր Լեյբորիստական կուսակցության առաջնորդ Շ.Նաթելաշվիլու

մամուլի ասուլիսի՝ հիշյալ հիմնախնդրին վերաբերող հատվածը: Հրապարակված նյութի հաղորդմամբ՝ Շ.Նաթելաշվիլին գտնում է, որ Հայաստանի և Վրաստանի նախագահների միջև ձեռք բերված համաձայնությամբ կառուցվելիք Երևան-Բաթում ավտոմայրուղին կարող է հանգեցնել Վրաստանի ևս մեկ հատվածի կորստին (նկատի ունի Սամցխե-Ջավախքը, քանի որ կառուցվելիք ավտոմայրուղին անցնելու է այդտեղով): Նաթելաշվիլին համեմատել է կառուցվելիք ավտոմայրուղին Ռոկյան թունելի հետ, որը Հարավային Օսիան կապում է Ռուսաստանին: Ըստ Նաթելաշվիլու՝ Մ.Սահակաշվիլին փորձում է Վրաստանի համար ստեղծել երկրորդ Ռոկյան թունել և հող նախապատրաստել Վրաստանի ևս մեկ տարածաշրջանում անջատականության համար: Նաթելաշվիլու համոզմամբ՝ շուտով այնտեղ բռնկվելու է բարդ և ահարկու անջատականություն[1]:

Բացի հրապարակված նյութի հակահայկական բովանդակությունից, ակնհայտ է ևս մեկ բան: Հրապարակված հոդվածում ջավախքյան հիմնախնդիրը շահարկման առարկա է Վրաստանի ներքաղաքական հարաբերություններում: Ընդդիմադիր կուսակցության առաջնորդի կողմից Ջավախքը շահարկվում է նախագահ Մ.Սահակաշվիլու դեմ պայքարում:

2007թ. օգոստոսի 6-ին վրացական *www.apsny.ge* կայքէջը հրապարակել էր «Ընտրության ազատություն» համաղրիմյան հասարակական միավորում վրացական կազմակերպության դիմումը՝ ուղղված Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլուն և խորհրդարանի նախագահ Ն.Բուրջանաձեին: Դիմումի մեջ մտահոգություն էր արտահայտվում Սամցխե-Ջավախքում տիրող իրավիճակի շուրջ: Նշվում էր, որ վրացական իշխանությունները պատշաճ ուշադրություն չեն դարձնում Վրաստանի տարածքային ամբողջականությանը սպառնացող այն լուրջ վտանգի վրա, որը գալիս է Սամցխե-Ջավախքում տիրող հայկական ազգայնականությունից և անջատականությունից: Սամցխե-Ջավախքում գործող հայկական կազմակերպությունները՝ Վիրք, Ժողովրդավարական դաշինք, Միասնական Ջավախք, Դաշնակցական միավորումներ և այլն, ծավալում են Վրաստանի ներքին դրությունն ապակայունացնելու և այն մասնատելուն նպատակաուղղված ակտիվ գործունեություն: Համաձայն դիմումի՝ հայկական այդ կազմավորումների նպատակն է պատմականորեն վրացական տարածք հանդիսացող Սամցխե-Ջավախքի անջատումը Վրաստանից, իսկ այնուհետև՝ նրա միավորումը Հայաստանին:

Դիմումում նշվում է, որ հայկական ազգայնականությունը, ճնշում գործադրելով տարածաշրջանում բնակվող այլազգի ներկայացուցիչների վրա, ձգտում է նրանց դուրս մղել տարածաշրջանից՝ այնտեղ միայն հայերից բաղկացած հա-

[1] Дорога Ереван-Батуми приведет к сепаратизму
http://www.newsgeorgia.ru/official_statement/20081001/151010794.html

մասեռ բնակչության կազմ հաստատելու նպատակով: Որպես փաստ դիմումում հիշատակվում է, որ Գորելովկա գյուղի ռուս հոգեմարտիկները (դուխոբորները) իբրև թե հայ ազգայնականների ճնշման տակ աստիճանաբար հեռանում են իրենց բնակավայրից: Միևնույն ժամանակ, ինչպես նշվում է դիմումի մեջ, Լիբանանից, Սիրիայից, Թուրքիայից, Լեռնային Ղարաբաղից, ինչպես նաև բուն Հայաստանից հայկական ընտանիքներ են տեղափոխվում Սամցխե-Ջավախք: Տարածաշրջանի խաղաղության և կայունության համար, ըստ դիմումի, լուրջ սպառնալիք են հանդիսանում իբրև թե Գանձա գյուղում ձևավորված հայկական անօրինական զինված խմբավորումները: Միաժամանակ կատարվում է ակտիվ քարոզչական աշխատանք Սամցխե-Ջավախքը որպես պատմական հայկական տարածք ներկայացնելու ուղղությամբ:

Ուկրաինայի վրացիները վերոհիշյալ դիմումում պահանջում են Վրաստանի իշխանություններից կտրուկ և վճռական քայլերի դիմել՝ Սամցխե-Ջավախքում հայկական ազգայնականությանն ու անջատականությանը վերջ դնելու համար: Այնուհետև նրանք հանդես են գալիս բացահայտ ազգայնամոլական և հակահումանիստական պահանջով. արմատապես փոխել Սամցխե-Ջավախքի ժողովրդագրական պատկերը և այնտեղ հաստատել վրացի բնակչության մեծամասնություն:

Դիմումը նաև կոչ է անում վրաց իշխանություններին փոխել քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Ժամանակին Վրաստանը իբրև թե ձեռնպահ մնաց Հայաստանին տնտեսապես և քաղաքականապես մեկուսացնելու Թուրքիայի և Ադրբեջանի ծրագրի իրականացումից: Դրան ի պատասխան Հայաստանում իբրև թե պետական քաղաքականության մակարդակի է հասցված հակավրացական քարոզչությունը, պաշտոնական Երևանն իբր աջակցում է Սամցխե-Ջավախքում հայկական ազգայնականությանն ու անջատականությանը: Ուստի, պաշտոնական Թբիլիսին պետք է որոշակի ուղղումներ մտցնի Հայաստանի նկատմամբ քաղաքականության մեջ[1]:

Ինչ վերաբերում է Ջավախքում վերջին շրջանում հայ ակտիվիստների ձերբակալություններին և նրանց նկատմամբ իրականացվող դատական հետապնդումներին, ապա վրացական տեղեկատվությունը ձերբակալված հայ գործիչներին պիտակավորում է որպես ազգայնամոլ կամ հանցագործ: Օրինակ՝ *www.apsny.ge* կայքէջը 2008թ. նոյեմբերի 10-ին, անդրադառնալով հայ գործիչների (Գուրգեն Շիրինյան, Վահագն Չախալյան և այլն) դատավարությանը, հրապարակման վերնագրում նրանց անվանում է ազգայնականներ[2]: Իսկ *www.medianews.ge* կայքէջը 2009թ. փետրվարի 24-ի հրապարակման

[1] Обращение Всекрымского общественного объединения “Свобода выбора” http://www.apsny.ge/order/1186421832.php

[2] Начался судебный процесс над армянскими националистами Джавахети http://www.apsny.ge/2008/soc/1226341709.php

մեջ վկայակոչում է Վրաստանի արտաքին գործերի նախարար Գրիգոլ Վաշաձեին, ըստ որի՝ հունվարի 22-ին ձերբակալված Վրաստանի քաղաքացիները (Գրիգոր Մինասյանը և Սարգիս Հակոբջանյանը) ձերբակալվել են ոչ թե այն պատճառով, որ հայ են, այլ կատարել են հանցագործություն[1]:

Վրացական լրատվամիջոցներում Ջավախքի մասին հրապարակումների հակահայկական բնույթը երևում է նաև մեկ այլ հանգամանքով: Վրացական հրապարակումներում նկատվում է միտում՝ խուսափելու ջավախահայությանը որպես տարածաշրջանի բնիկ բնակչություն ներկայացնելուց: Ջավախահայությանն ավելի շուտ ներկայացնում են որպես «հայկական սփյուռք»:

Այսպես, օրինակ, *www.newsgeorgia.ru* կայքէջը վերոհիշյալ հրապարակման մեջ, խոսելով Սամցխե-Ջավախքի բնակչության մասին, գրում է հետևյալը. «Սամցխե-Ջավախք տարածաշրջանում (հարավային Վրաստան) կոմպակտ կերպով բնակվում է *հայկական սփյուռք*»[2]: Մեկ այլ վրացական կայքէջ՝ *www.geotimes.ge*, 2007թ. հուլիսյան հրապարակումներից մեկում գրում է. «Սամցխե-Ջավախք և Քվեմո Քարթլի տարածաշրջաններում կոմպակտ կերպով բնակվում են *հայկական և ադրբեջանական սփյուռքի ներկայացուցիչները*»[3]: Իսկ *www.civil.ge* կայքէջը 2003թ. հունիսի 30-ին, լուսաբանելով Հայաստանի նախագահ Ռ.Քոչարյանի այցը Վրաստան, գրում է հետևյալը. «Հայաստանի նախագահը պատրաստակամություն հայտնեց օգնելու Վրաստանի հայերին, մասնավորապես՝ *հայկական սփյուռքին Ջավախքում*»[4]:

Ջավախքյան խնդիրը Ռուսաստանի դեմ տեղեկատվական պատերազմում

Վրացական քարոզչությունն ի սկզբանե օգտագործել է ջավախքյան խնդիրը ռուսների դեմ տեղեկատվական պատերազմում: Ռուսաստանի դեմ քարոզչապայքարում ջավախքյան խնդրի արծարծումն ունի իր պարզ տրամաբանությունը. Ռուսաստանը ներկայացվում է որպես ագրեսոր, որի նպատակն է ապակայունացնել, մասնատել Վրաստանը: Այդ նպատակին հասնելու համար, համաձայն վրացական հրապարակումների, Ռուսաստանն օգտագործում է Վրաստանի էթնիկ փոքրամասնություններին: Հետևաբար, Ջավախքում

[1] Григол Вашадзе: В Джавахети политических проблем нет http://www.medianews.ge/rus/news/15758.html

[2] Дорога Ереван-Батуми приведет к сепаратизму – Нателашвили http://www.newsgeorgia.ru/official_statement/20081001/151010794.html

[3] Более 80 процентов опрошенных в Самцхе-Джавахети и Квемо Картли считает Грузию родиной – исследование http://www.geotimes.ge/index.php?m=home&newsid=5486

[4] Визит президента Армении в Грузию http://www.civil.ge/rus/article.php?id=2758&search=%C4%E6%E0%E2%E0%F5%E5%F2%E8

տեղի ունեցող խմորումներն ու ապակայունացման դրսևորումները կապվում են ռուսական հատուկ ծառայությունների գործունեության հետ: Ըստ վրացական տեղեկատվական դաշտում առկա որոշ հրապարակումների՝ Ռուսաստանն է դրդում ջավախքցիներին հանդես գալ ինքնավարության, հայոց լեզվին տարածաշրջանային լեզվի կարգավիճակ տալու և այլ պահանջներով:

Ջավախքյան գործոնի արծարծումը Ռուսաստանի դեմ քարոզչական պատերազմում ավելի ակնհայտ դարձավ 2008թ. օգոստոսյան ռուս-վրացական պատերազմից հետո: Այսպես, 2008թ. նոյեմբերի 28-ին, ելույթ ունենալով օգոստոսյան դեպքերը հետաքննող խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովի առաջ, Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլին Ջավախքի առնչությամբ նշեց, որ պատերազմի ընթացքում ռուսական բարձրաստիճան պաշտոնյաներ էին այցելում Երևան՝ փորձելով համոզել Հայաստանին օգնելու իրենց Սամցխե-Ջավախք տարածաշրջանում լարվածություն առաջ բերելու գործում: Սակայն ռուսներին, ըստ Սահակաշվիլու, չհաջողվեց դա անել[1]: Թե ինչ փաստերի վրա էր հիմնված իր այդ հայտարարությունը՝ Մ.Սահակաշվիլին այդպես էլ չպարզաբանեց:

Վրաստանի նախագահի պարզաբանումները խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովին լայն արձագանք գտան վրացական լրատվամիջոցներում:

2009թ. հունվարին վրացական *www.abkhazeti.info* և *www.medianews.ge* կայքէջերը հրապարակեցին մի նյութ, որտեղ փորձ է արվում ցույց տալ, որ Ռուսաստանը դրդում է Հայաստանին ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ: Ըստ հրապարակված նյութի՝ 2008թ. վերջին Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը հաստատել է, որ Հայաստանը Ռուսաստանից ստացել է մի քանի միլիոն դոլար արժողությամբ զենք: Այնուհետև Ռուսաստանի պաշտպանության նախարար Ա.Սերդյուկովը ստիպված է եղել պարզաբանել իր ադրբեջանցի պաշտոնակցին, որ Հայաստանին տրամադրված զենքը նախատեսված է այլ նպատակների համար և չի օգտագործվի Ադրբեջանի դեմ: Այս առնչությամբ հոդվածում հարց է բարձրացվում. արդյոք Ադրբեջա՞նը պետք է մտահոգվի Հայաստանին տրամադրված զենքից, թե՞ Վրաստանը:

Հրապարակված նյութը հաղորդում է, որ 2008թ. հոկտեմբերից Ռուսաստանը համառորեն փորձում է համոզել Երևանին ակտիվություն ցուցաբերել ջավախքյան խնդրում: Իսկ ավելի կոնկրետ՝ Մոսկվան դրդում է Հայաստանի իշխանություններին ուղղակի պատերազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ: Ըստ հրապարակված նյութի՝ 2009թ. հունվարի սկզբին ռու-

[1] Key points of the Georgian Parliament's Commission hearing on August's war http://georgia2008.net/2008/11/28/english-key-points-of-the-georgian-parliaments-commission-hearing-on-augusts-war/

սական հատուկ ծառայությունները Հայաստանի իշխանություններին են փոխանցել «սև փաստաթուղթ», որտեղ հիմնավորվում է, որ 2009 թվականը լավագույն ժամանակն է ջավախքյան խնդիրը լուծելու համար:

Ինչպես հաղորդում է վերոհիշյալ հրապարակումը, Հայաստանի իշխանությունները ռուսական առաջարկության վերաբերյալ չեն ծավալել ներքին քիչ թե շատ լուրջ քննարկում: Բացի այդ, պաշտոնական Երևանը ձեռնպահ է մնում այն ծայրահեղական ուժերի հետ շփումներից, որոնք գործունեություն են ծավալում Ջավախքում: Միևնույն ժամանակ, հրապարակված նյութը նշում է, որ, այնուամենայնիվ, դժվար է ասել, թե որքան կդիմանա պաշտոնական Երևանը Ռուսաստանի, ինչպես նաև հայկական սփյուռքի ճնշումներին: Վերջում տեղեկանքի ձևով նշվում է, որ ներկայումս Սամցխե-Ջավախքում գործում են մոտ 15 հայկական հասարակական և բարեգործական կազմակերպություններ: Դրանց առաջնորդների մեծ մասը նախկինում՝ 1990-ական թթ., Ռուսաստանում զբաղվել է բիզնեսով: Սակայն 2000թ. նրանք եկել են Ջավախք և սկսել զբաղվել բարեգործությամբ: Հրապարակումը սարկազմով եզրափակում է, որ նրանցից ոմանք բացել են պարի դպրոցներ, որտեղ, սակայն, հայ երիտասարդներին սովորեցնում են կրակել[1]:

Իսկ www.apsny.ge կայքէջը 2009թ. մարտի սկզբին, անդրադառնալով Երևանում Վրաստանի դեսպանատան առջև տեղի ունեցած ցույցին, վկայակոչում է Վրաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ակակիա Մինաշվիլուն, ըստ որի՝ «մարդկանց որոշակի խումբ ռուսական հատուկ ծառայությունների աջակցությամբ փորձում է ինչոր բան հրահրել, սակայն այդ ուղղությամբ որևէ տեղաշարժ չի նկատվում»[2]: Ակակիա Մինաշվիլին նշել է նաև, որ Հայաստանի և Վրաստանի միջև առկա են բարիդրացիական և կառուցողական հարաբերություններ, իսկ Սամցխե-Ջավախքում յուրաքանչյուր քաղաքացի, անկախ իր էթնիկ պատկանելությունից, ապրում է խաղաղ և հանգիստ[3]:

Վրացական www.megianews.ge կայքէջը 2009թ. մարտի 13-ի հրապարակման մեջ նշում է, որ մարտի 10-ին Հայաստան է ժամանել ռուսական հատուկ պատվիրակություն՝ համոզելու պաշտոնական Երևանին, որ ներկայումս Վրաստանը թույլ է, իշխանությունները չեն վերահսկում երկրի տարածքները, ուստի եկել է ժամանակն ակտիվանալու վրացական ուղղությամբ: Համաձայն հրապարակման՝ պատվիրակությունը կազմված է եղել այնպիսի բարձրաստիճան պաշտոնյաներից, ինչպիսիք են ՌԴ զինված ուժերի սպառազինությունների ծառայության ղեկավար Վլադիմիր Պոպովինը, պաշտպանության փոխ-

[1] Путин предлагает Армении начать войну против Грузии http://abkhazeti.info/news/1233179553.php; http://www.medianews.ge/rus/news/15139.html

[2] Российские службы пытаются что-то безуспешно спровоцировать в Самцхе-Джавахети – депутат http://www.apsny.ge/2009/pol/1236030430.php

[3] Նույն տեղում:

նախարար Դմիտրի Չուշկինը, Անվտանգության դաշնային ծառայության տնօրենի տեղակալ Սերգեյ Բուրավլյովը և արտաքին գործերի նախարարի տեղակալներ Ալեքսանդր Սալտանովն ու Վլադիմիր Տիտովը: Հրապարակման մեջ նշվում է, որ եթե Երևանը սադրանքի գնա Վրաստանի նկատմամբ, ապա դա կհանգեցնի վերջինիս կողմից սանկցիաների կիրառմանը, իսկ դա ոչ այլ ինչ է, քան Հայաստանի շրջափակում: Իսկ Հայաստանի շրջափակումը մտնում է Ռուսաստանի պլանների մեջ, քանի որ վերջինս, վկայակոչելով հայ-ռուսական պայմանագիրը, ձեռնամուխ կլինի իր դաշնակցի ապաշրջափակմանը[1]:

Ջավախքի ինտեգրման խնդիրները վրացական լրատվամիջոցներում

Ջավախքի վերաբերյալ ռացիոնալ մոտեցումները վրացական տեղեկատվական դաշտում վերաբերում են հիմնականում այդ երկրամասի ինտեգրման խնդրին: Գերիշխում է այն մտայնությունը, որ Ջավախքի հետ կապված բոլոր հիմնախնդիրները բխում են Վրաստանի շրջանակներում վերջինիս թույլ ինտեգրվածությունից: Այդ կերպ Ջավախքը ներկայացվում է որպես ոչ թե ազգայնականության կամ անջատականության օջախ, այլ Վրաստանի կազմում թույլ ինտեգրված շրջան, ինչից էլ բխում են մյուս հիմնախնդիրները՝ լեզվական, սոցիալ-տնտեսական և այլն: Հետևաբար, Ջավախքի հիմնախնդիրների լուծման բանալին Վրաստանի կազմում նրա թույլ ինտեգրվածության հաղթահարումն է:

2005թ. դեկտեմբերին www.apsny.ge կայքէջում հրապարակվեց «Սամցխե-Ջավախքում չկա անջատականություն» վերտառությամբ հոդվածը: Հրապարակման մեջ հաղորդվում է այն մասին, որ Մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամը ԵԱՀԿ աջակցությամբ Սամցխե-Ջավախքում իրականացնում է «Ազգամիջյան հարաբերությունների կառավարումը Սամցխե-Ջավախքում» նախագիծը: Ինչպես հաղորդում է հրապարակումը, մեկ տարվա ինտենսիվ աշխատանքը պարզ ցույց է տալիս, որ «Ջավախքում չկա անջատականության որևէ նշան, թեև կան հսկայական քանակությամբ խնդիրներ, որոնց լուծումը պետք է իրականանա կառուցողական և քաղաքակիրթ մեթոդներով»[2]:

Ըստ հրապարակման՝ նախագծի կարևորագույն ձեռքբերումներից է «Ազգամիջյան հարաբերությունների էթիկայի վարքականոնի» մշակումը, որի կիրառումը կնպաստի առկա հիմնախնդիրների արդյունավետ լուծմանն ու Սամցխե-Ջավախքի ինտեգրմանը Վրաստանի կազմում: Հրապարակման մեջ ներկայացվում է վերոհիշյալ վարքականոնի տեքստն ամբողջությամբ, որից կարելի է առանձնացնել հետևյալ մի քանի դրույթները.

[1] Россия пытается спровоцировать Армению против Грузии http://www.medianews.ge/rus/news/16160.html

[2] В Самцхе-Джавахети нет сепаратизма http://www.apsny.ge/analytics/1134006438.php

- վրացի և հայ քաղաքացիները պարտավոր են հարգանքով վերաբերվել միմյանց և այլոց լեզվական, կրոնական, պատմամշակութային և այլ արժեքներին: Միասին նրանք պետք է հոգ տանեն այդ արժեքների բազմազանության պահպանման, ինչպես նաև էթնոսների միջև երկխոսության զարգացման մասին:
- Վրաստանի քաղաքացիները պարտավոր են օգնել էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչներին (տվյալ դեպքում՝ հայերին) պետական լեզուն յուրացնելու հարցում, որպեսզի նրանք ունենան աշխատանքի անցնելու և մասնագիտական ինքնաիրականացման, ինչպես նաև երկրի կյանքին լիարժեք մասնակցելու հնարավորություն: Միևնույն ժամանակ, Վրաստանի քաղաքացիները չպետք է խտրականության ենթարկեն հայ բնակչության ներկայացուցիչներին կենցաղային կամ պետական մակարդակներում:
- Սամցխե-Ջավախքում բնակվող վրացի և հայ քաղաքացիները միասին պետք է հոգ տանեն տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման մասին:
- Վրացի և հայ քաղաքացիները պետք է առաջնորդվեն այնպիսի արժեքներով, ինչպիսիք են ժողովրդավարությունը, քաղաքացիությունը, հանդուրժողականությունը, արժանապատվությունը, հումանիզմը և մարդու իրավունքները[1]:

Ջավախքի թույլ ինտեգրվածությունն առաջին հերթին բխում է լեզվական անջրպետից՝ ջավախքցիների վրացերենի չիմացությունից: Այս խնդրում, համաձայն վրացական տեղեկատվության, մեղքի մեծ բաժին ունի վրացական կառավարությունը: 2008թ. վերջին հարցազրույց տալով Վրաստանի հանրային հեռուստաալիքի «Մոամբե» ծրագրին (որը հեռարձակվում է նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով)՝ Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլին ասաց, որ վրացական կառավարությունը պարտադիր կերպով պետք է ուժեղացնի վրացերենի ուսուցումը ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածքներում՝ Ջավախքում, Քվեմո-Քարթլիում և այլուր[2]: Այդ գործընթացը մինչ օրս, ըստ Վրաստանի նախագահի, խիստ կաղացել է՝ չնայած իր կոչերին և բազմաթիվ ցուցումներին: Հարցազրույցում Մ.Սահակաշվիլին նաև նշել է, որ իր հանձնարարությամբ կբարձրացվեն ազգային փոքրամասնություններով բնակեցված վայրերում աշխատող մանկավարժների աշխատավարձերը: Միևնույն ժամանակ, ըստ Վրաստանի նախագահի, ազգային փոք-

[1] В Самцхе-Джавахети нет сепаратизма http://www.apsny.ge/analytics/1134006438.php http://www.apsny.ge/analytics/11340064382.php

[2] Саакашвили обещает усилить интеграцию этнических меньшинств http://www.newsgeorgia.ru/official_statement/20081223/151074536.html; http://abkhazeti.info/news/1230062102.php

բամասնությունների ներկայացուցիչները պետք է օգտվեն որոշակի արտոնություններից բուհեր ընդունվելիս: Չի կարելի քննություններ հանձնելիս նրանց համար սահմանել այն չափանիշները, որոնք սահմանվում են վրացի դիմորդների համար: Վերոհիշյալ հարցազրույցում Մ.Սահակաշվիլին կարևորել է նաև տարբեր ազգային ընդհանրությունների միջև փոխադարձ մշակութային շփումների ակտիվացումը՝ վերջում ավելացնելով. «Մեր բազմամշակութայնությունը, մեր բազմէթնիկությունը մեր թուլությունը չէ, այլ Վրաստանի ամենամեծ հարստությունը: Այն Վրաստանի ամենամեծ ուժն է»[1]:

Վրացական տեղեկատվությունը Ջավախքի թույլ ինտեգրվածության համատեքստում է դիտում նաև այնտեղ առկա սոցիալ-տնտեսական խնդիրները: Ըստ վրացական լրատվամիջոցների՝ Ջավախքի տնտեսապես թույլ զարգացածությունը և ցածր կենսամակարդակը բխում են երկրամասի մեկուսացումից, ինչն էլ իր հերթին բխում է ենթակառուցվածքների (ճանապարհներ, գազամատակարարման համակարգ, էլեկտրահամակարգ և այլն) թույլ զարգացածությունից: Վրացական տեղեկատվական դաշտում գերիշխող է այն մտայնությունը, որ Վրաստանի իշխանությունները քաջ գիտակցում են Ջավախքի մեկուսացման խնդիրը և անում են հնարավորը՝ այն հաղթահարելու համար: Այս ամենի համատեքստում հատկանշական են վրացական լրատվամիջոցներում բերված Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլու խոսքերը, որը վերջինս արտասանել է Ախալքալաքում 2006թ. ապրիլին՝ Ախալքալաք-Ախալցխա ճանապարհի շինարարության բացման ժամանակ: Վրաստանի նախագահը նախ հայտարարել է, որ ուշ աշնանը կսկսվի նաև Ախալքալաք-Թբիլիսի ավտոճանապարհի շինարարությունը. «Սա նշանակում է, որ մեկընդմիշտ վերջ կտրվի Ջավախքի աշխարհագրական մեկուսացմանը: Սա նշանակում է, որ գյուղացիները այստեղից կարող են ազատորեն տեղափոխել մթերքը: Սա նշանակում է, որ այստեղ կգա ավելի շատ բիզնես, այստեղ կլինի ավելի շատ տարանցում... Ճանապարհներ և զարգացում՝ սա է գլխավորը, որ այժմ պետք է Ջավախքին»[2]:

Այսպիսով, վրացական տեղեկատվական դաշտում Ջավախքի վերաբերյալ առկա են ինչպես կառուցողական, այնպես էլ ապակառուցողական հրապարակումներ: Ապակառուցողական հրապարակումներում տեղ են գտնում հակահայկական բնույթի նյութեր, ինչպես նաև Ջավախքն օգտագործվում է Ռուսաստանի դեմ տեղեկատվական-քարոզչական պատերազմում: Իսկ կառուցողական բնույթի հրապարակումներում արծարծվում են Վրաստանի կազմում Ջավախքի ինտեգրման և այդ համատեքստում՝ լեզվական, սոցիալ-տնտեսական և այլ խնդիրներ:

[1] Նույն տեղում:
[2] М.Саакашвили: Строительство новых дорог покончит с изоляцией Джавахети http://www.civil.ge/rus/article.php?id=10618&search=%C4%E6%E0%E2%E0%F5%E5%F2%E8

«ԳԼՈԲՈՒՍ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221՝ տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 16.06.2009թ.
Թիվ 3, 2009թ.
Տպաքանակը՝ 200։

Ֆորմատը՝ 70x100 1/16։ Պայմանական 15 մամուլ։
Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում